

ՊՐՈՖ. Ն ՏՐՈՅԵՎԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՐՈՏՆԵՐԸ



ԳՅՈՒՂՋՐԱՏ  
ՅԵՐԵՎԱՆ  
1933

633  
S-99

30 JUL 2010

ՊՐՈՖ. Ն. ՏՐՈՅՆԵՑԻ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՐՈՏՆԵՐՆ ՈՒ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԸ

Թարգ. ՀՕԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

18598.

ԳՅՈՒՂՂՐԱՑ

1932

ՅԵՐԵՎԱՆ

24 AUG 2013

18575

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Խորհրդային Հայաստանի տերթուրիայի մոտ կեսը կազմում են քնական խոտհարքները և արտօները, վորոնի միաժամանակ և մեր անասնապահության հիմքն են կազմում, իբրև կերի աղբյուր :

Ժողովրդական տնտեսության կարևոր հատվածը հանդիսացող այդ արոտավայրերի և նրանց ռացիոնալ ոգտագործման խնդիրները մինչև այժմ անհշան ուշադրության են արժանացել քե՛ ուսումնասիրության ու հետագոտության և քե՛ նրանցով պայմանավորված բարելավումների տեսակետից :

Արտօների ամրող զանգվածներ հետզիեւե ուժասպառ են յեղել անհատական անասնապահության և արտօների անխնամ ոգտագործման հետևանքով : Առաջ չափազանցության կարելի յէ արձանագրել, վոր մեր արտօների բարեկարգ զանգվածներ յերբե՛ք չեն յենք արկլիլ քեկուզ տարրական բարելավումների :

Իսկ հայտնի յէ, վոր արտօների նույնիսկ ամենապարզ բարեկարգումը, ինչպես որինակ՝ ֆարերից մաքրելը, ջրաշինարարական քերեա աշխատանքները, արտօներին մասնակի հանգիստ տալը, մոլախոսերի դեմ պայքարելը և այլն, կրկնապատկում ու յեռապատկում են խոտի ժամանակը և բարձրացնում արտօների արդյունաբերությունը՝ նրանց սոցիալիստական անասնապահության ամուր պատվանդանը դարձնելով :

Այս աշխատության հեղինակ պրոֆ. Ն. Տրոյիցկին, վոր յերկար տարիներ ուսումնասիրել է Հայաստանի և Անդրկովկասի ամառային և ձմեռային արոտավայրերի գգալի մասը, մեր բոլոր արոտագուման դերի բարեկարգման համար առանձին հատվածներում առաջարկում է գործնական ու միանգամայն մատչելի միջոցառումներ, վորոնց կիրառմամբ խորհրդային տնտեսությունները և անասնապահական կոլեկտիվները կարող են սահմանել իրենց արտօների ուսցինեալ ոգտագործման կարգ և աստիճանաբար իրագործել բարելավումների ամբողջական ծրագիրը :

Պետք է շեշտել, վոր հեղինակը կոմիրես չի առաջադրել արտօների բարելավման աշխատանքների կարգը, գուգորդված խորհրդային տնտեսության կամ անասնապահական կոլեկտիվի մյուս աշխատանքների հետ :



381 Զ1-62

Ճի՞շտ է, շրջանային գոտուելունիկը և կողեկտիվի ու սովորողի անասնապահական սեկտորի դեկանարք կարող է յուրաքանչյուր արոտամասի առանձնահատուկ պայմաններից յելենով սահմանել այդ կարգը՝ առաջամարտիկ հանդիսանալով արոտների ռացիոնալ ոգտագործման ասպարիգում, —բայց և այնպես թերությունն աչքի յե զարնվում գրքի ընթերցումից հետո :

Այս նկատառումով ԳՅՈՒՂՀՐԱԾԲ միաժամանակ հրատարակում է պրոֆ. Յոզեֆ Շպանի «Ալպյան տնտեսությունը» խոշոր աշխատության քարգմանությունը (գերմաներենից) : Շվեյցարական և այլ ալպերի բազմությա փորձերից յելենով, հեղինակը, վոր Արևմտյան Յեվրոպայում լինեային արոտների ու մարգագետինների լավագույն մասնագետներից մեկն է, նկարագրում է արոտների ամբողջ բարեկարգումը՝ գործնական ագրոտեխնիկական այն միջոցառումներով, վորոնք մեր պայմաններին միանգամայն համապատասխան են :

Արոտների ուսումնասիրության գործը միանգամայն յերփառարդ բնագավառ է : Յերե չհաշվենք մեր պարբերականներում ցրված մի քանի հոդվածները, ապա կարող ենք այս աշխատությունն առաջինը համարել, վոր լույս ե տեսնում հայերեն և վերաբերում է Հայաստանի մոտ մեկ ու կես միլիոն հեկտար ամառային ու ձմեռային արոտներին :

Հայաստանի արոտները, ինչպես նկատել ե ինքը հեղինակը, հավասար չափով չեն ուսումնասիրված : Ամենից ավելի մանրամասն հետազոտված են լոռու-Փամբակի արոտավայրերն ու մարգագետինները, վորոնք հիմք են կազմում մեր կաբճանեսական առաջատար շրջանների (Ստեփանավան, Վարաւանովկայ) անասնավայրերության : Այնուամենայնիվ հեղինակը մնացած արոտային գանգվածների վերաբերմանը տարիների ընթացքում կատարել ե ուսումնասիրություն, հետազոտել ու հալաւել ե բավական արժեքավոր նյութեր՝ մեր «ալպեր» հանաչելու որ առաջ նրանց բարեկարգմանը ձեղնամուխ լինելու համար :

Պրոֆ. Տրոյից կու այս գրքին ԳՅՈՒՂՀՐԱԾԲ կցում ե և . Հայաստանի արոտներում ու մարգագետիններում հանդիպող բույսերի այրբենական ցուցակը՝ նրանց ուսուերեն ու լատիներեն անունների հիշատակությամբ :

### ԳՅՈՒՂՀՐԱԾ

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՈՏՆԵՐՆ ՈՒ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԸ (ԸՆԴՀՆՈՒԹ ՀԿԱՐԿ)

Խորհրդային Հայաստանի, ինչպես և Անդրկովկասյան Ֆեդերացիայի անասնապահության համար կերի գլխավոր աղյուսները բնական խոտհարքներն ու արոտավայրերն են : Վերջին ավյաների համաձայն կայատանի բնական կերի բոլոր հողատեսքների ընդհանուր տարածությունը կազմում է 1,500 հազար հեկտար, այսինքն՝ հանրապետության ամբողջ տերիտորիայի մոտ 50 տոկոսը, այնինչ ցանովի խոտերն անշան տարածություն են բռնում վերջերս, այն ե՝ մոտ 8,300 հեկտար, վորը հանրապետության հողային ֆոնդի համեմատությամբ չնչին մեծություն և կազմում : Յեվ քանի վոր բնական կերի տարածությունները Հայաստանում բացարձակութեն իշխող են, ապա ուրեմն բնական մարդագետինների և արոտավայրերի խոտը կանաչ կերի համարյա միակ աղյուսն և հանդիսանում ե տիրականորեն գերակշռում ե ցանովի տարածություններից ստացած խոտի քանակին : Այս պատճառով, ահա՛, Հայաստանի խոտհարքների և արոտների բուսականությունն առաջնակարգ դեր և խաղում ամբողջ ժողովրդատնեսության մեջ :

Բնական կերի տարածությունների տնտեսական տիպը Խորհրդային Հայաստանում, ինչպես և ամենուրեք լեռնային յերկրներում, պայմանավորվում ե գլխավորապես այն հանդամենքով, թե ավյալ տարածությունն ինչ բարձրության վրա յե գտնվում ծովի մակերեսությունը :

Յեթև ուշադրություն դարձնենք Անդրկովկասի կերային տարածությունների տիպերի զննալ բաշխումը պատկերացնող սպեմայի վրա, ապա կտեսնենք, վոր անտառային ու անատառազուրկ շրջանների ստորին գոտիներում զննալ հերթականությունը տարբեր կերպով և ընթանում : Անտառազուրկ յերկիր լինելով՝ կայատանի բանական արտադրությունների ունի : Դրան հաջողակում ե տափաստանային ու մարգագետնային խոտհարքների գոտին, իսկ դրանից վերեւ՝ յենթալոյան ու ալղյան բարձրադիր արոտների գոտին :

և . Հայաստանի որոդրաֆիկ կաղմությունը աչքի յե ընկնում բարձ-

բությունների չափազանց բազմադանությամբ՝ ավելի քան 4000 մետրկց (Արագածի գագաթը) մինչև 500 մետր և ավելի ցածր (Լամբալու, Մեղրի): Բայ վորում բարձրադիր գոտիներն զգալի չափով գերակշռում են ցածրադիրներին: Դրանով ե պայմանավորվում Խորհրդային Հայաստանի ձմեռային արոտների տարածության սակավությունը: Հայաստանի չոր կլիման, սակայն, վորոշ չափով ավելացնում է ցածրադիր՝ ձմեռային արոտների տարածությունը, ավելացնելով վերջնիս վրա միջին լեռնային եւ մասամբ նույնիսկ բարձր լեռնային գոտու չոր ու քարքարոտ լեռնալանջերի ձմեռային արոտները: Այսպիսի վոչ զոնալ ձմեռային արոտների վերին սահմանը կազմում են հոչակավոր Արեգունու (Գյունեցի) արոտները՝ Սելանի, Հյուսիս-արևելյան ափերին: Ձմեռային այս արոտները ծովի մակերեսույթից ավելի քան 2000 մետր բարձրության վրա յեն գտնվում:

Խ. Հայաստանի բնական կերային տարածությունների բաշխումն ըստ տնտեսական տիպերի, համաձայն հողերի պետական տոմարագրության 1931 թ. տվյալների, հետևյալ պատկերն ունի — ամառային պետարոտներ՝ 570,649 հեկտար, ձմեռային պետարոտներ՝ 128,977 հեկտար, խոտհարքներ՝ 104,665 հեկտար և համայնական արոտներ՝ 701,976 հեկտար:

Յեթե նկատի ունենանք, վոր համայնական արոտների մեջ մոտ 200 հազար հեկտարը ձմեռային արոտավայրեր են, ապա հանրապետության արոտային այն տարածությունը, վորն ամառն ողտագրծվում է, կկազմի մոտ մեկ միլիոն հեկտար, իսկ ձմեռայինը՝ մոտ 300,000 հեկտար: Այս մեծությունների իրար նկատմամբ խիստ անհամապատասխան լինելն ակներեւ եւ պարզաբանումների կարիք չի զգում: Ձմեռային արոտների գգալի չափով նվազ արտադրականությունն ամառայինների համեմատությամբ, կերի ավելի վատ վրայակը, այլև նրանց ողտագրծման փաստը են կարճ ժամանակաշրջանը՝ ձմեռվա ձյուների չնորհիլ—ավելի ցայտուն են զարձնում այս անհամաշափությունը, և նվազեցնում են ձմեռային արոտների նշանակությունը, վորպես կերի բազա:

Սրան հակառակ, Հայաստանի կերային բաշանում կերային բոլոր տարածությունների մեջ ամառային արոտավայրերն ամենախոշոր գերն են խաղում: Ամառային արոտներում անասունի ստացած կերն առավել սննդարար ու առողջարար ե հանդիսանում, և ձմեռային կիսաքաղցինակի հետո անասուններն ամառային արոտներում կազմությունը ու գիրանում են:

Այսպիսով, ամառային արոտների կերն անասուններին կաղղություն է ձմեռային կիսաքաղցինակի վեհակից, դրան ավելացրած՝ տալիս ե անսանապահական մթերքների վորոշ քանակություն, վորն ամառվա ընթացքում ստացվում է սարում դոնվող անասունից: Բայ յերեսույթին բարենպաստ

այս դրությունը, սակայն, իսկապես ամեննեին ել այսպես չի: Նախ անասունի արդյունավետությունն ամառվա ընթացքում այնքան ել մեծ չի, վորքան կարելի յե սպասել, յեթե նկատի ունենանք ամառային արոտների մեծ տարածությունները և խոտակազմի սննդարար լինելը:

Յերկրորդ՝ արդյունքների նույնիսկ արդի քանակի ստացումը ձեռք ե բերվում արոտների շահագործման բոլորովին չկատարելազործված միջոցներով, վորոնք առաջ են բերում արոտների ստիճանական անկում ու վատթարացում: Այդ արոտներից շատերը հենց այժմ գտնվում են վակատար քայլայման ճանապարհին, քանի վոր նրանց հողային շերտը վորովվում ու լերկանում ե: Մինչդեռ հողային շերտի վերականգնումն ու խոտակալումն այդպիսի վայրերում կարճ ժամանակում այլևս անհնարին ե:

Խ. Հայաստանի ամառային արոտների միջին բեռնվածությունն ըստ հողգողկոմատի տվյալների, հեկտարին 2-ից մինչև 2½ դլուխ ե՝ խոշոր յեղջյուրավոր անասունի վերածած: Այս բեռնվածությունը համարվում է չափազանց մեծ: Խ. Հայաստանի արոտների պայմաններն ու տվյալները դուզագրելով չվեցարականի հետ, այստեղ միջին նորմա պետք ե ընդունել հեկտարին 0,75-ից մինչև 1,0 դլուխ: Գերբեռնվածությունից զատ, արոտների քայլայման գործում վո՛չ սպակա ճակատագրական գեր են խաղում հետևյալ հանդամանքները—դարնանն անասունի չատ վաղ արոտ հանելը, աշնանն արտից խիստ ուշ իջեցնելը և անսիստեմ ողտագործությունը: Այս ամենը հնարավորություն չեն տալիս արոտամասերը հերթափոխությամբ արածացնելու, վորպեսպի արածած արոտամասերը հաջորդաբար հանդստանան և նրանց խոտը նորից բարձրանա:

Խ. Հայաստանի արոտատեղերը չափազանց հարուստ են արժեքավոր կերախոտերով. ամենուրեք պատահում են խոտի այնպիսի տեսակներ, վորոնք վաղուց ի վեր հայտնի յեն ու հանձնարավում են վորպես արժեքավոր կերանյութ: Տեղական խոտերից շատերը, վորոնք առաջ անհայտ ելին վորպես կերանյութ և այժմ առաջին անգամ են ուսումնակրնում, հայտնի յեն վորպես վերին ստիճանի սննդարար կերեր: Այդպիսիք են՝ խտառտիկների տեղական լեռնային տեսակները, վորոնք տալիս են մինչև 24,3 տոկոս հում պրոտեյին. լեռնային յեղանեղուները՝ մինչև 20,7 տոկոս, կովկասյան ուռոցը՝ մինչև 20,7 տոկոս, վարդագույն յերեքնուեկը (Trifolium ambiguum)՝ մինչև 22,5 տոկոս, Ախալքալակի առվույտը՝ մինչև 22,0 տ., վայրի մարգագետնային վիկերը՝ մինչև 23,7 տոկոս և ուրիշները: Վոչ միայն խոտերի առանձին տեսակները, այլև ամբողջ խոտակազմից վերցրած նմունչները (չոր խոտը) խիստ սննդաբար են: Յեթե վերցնենք որինակ Աղմաղանի և Քեյթյանըրդի արոտներին վերաբերող տվյալները, ապա ուսումնասիրված խոտի 10 նմուշների մեջ

Հում սլրոտեյինի քանակը հավասար է 12,47 տոկոսի (ըստ Վոյլֆի միջակ մարդաբնակում չեն չոր խոտը պարունակում է 11,32 տոկոս սլրոտեյին) : Բայց լավագույն նմուշները պարունակում են 17,52 և 16,62 տոկոս սլրոտեյին : Արոտային շրջանների հողակաղմը հարուստ է և կանոնավոր ոգտագործման դեպքում ազատվում է արոտատեղերի տեսական լավ դրությունը : Այսպես, ըստ պլոֆի Զախարովի ավալների, Լոռվա սեահողերը պարունակում են մինչև 15,63% բուսահող, լեռնամարդագետնային յենթալսյան հողերը՝ մինչև 20%, արպյան հողերը 25%, և ջանի ամառային արոտատեղերի տորֆային հողերը՝ նույնիսկ 41,02% :

Չայած իրենց բնական արտակարգ արժեքավորության, Խ. Հայաստանի արոտատեղերի զդարի մասն այժմ անկման վիճակի մեջ և դժուկում և ամենասուր կերպով խնամքի ու բարելավման կարիք և զգում :

Արոտները տեղական առանձին տնտեսական միավորների մեջ մանր մասերի բաժան-բաժան անելը, արոտամասերի վերաբերմամբ զոյտվուն ունեցող վեճերը, լավագույն արոտամասերից ոգտվելու համար տնտեսությունների միջև մզվող հակամարտությունը, չարամիտ կամ ակամա փշացումները, հաճախակի վերաբաժանումները, այս բոլորն իշարեն, չեր կարող նպաստել արոտների ուղղունալ տնտեսավարման : Արոտամասերից ոգտվող մենատնեսը, բնականարար, չեր կարող աշխատանք ու միջոցներ ծախսել արոտը կարգի բերելու, քանի վոր այսպիսի աշխատանքի շոշափելի արդյունքները մի քանի տարուց հետո յեն յերեան գալիս : Գետք և ասել նաև, վոր մենատնեսն իշարեն հնարավորություն ել չունի միայն իր ուժերով մեծ ծախքեր ու արժատական բարելավումներ կատարելու :

Եղեցարիայում արոտների ուղղունալ ոգտագործման խիստ կատարելագործված տեխնիկա և արոտների բարելավման շատ զարդացած միջոցներ կան : Բայց և այնպես այնաեղ ել մենք տեսնում ենք խիստ խայտարդես պատկեր ունեցող արոտներ : Սյունեղ վորուշ շրջաններում արոտները բերքատվության բարձր աստիճանի յեն հասցված, մինչեւ դրանց կողքին կան արոտներ, վորոնք ամենանախնական ձևով են ոգտագործվում : Վերջիններս լիակատար անխնամ վիճակի մեջ են : Յեղ այս յերեւութիւն անխուսափելի յեն հողոտագործման այն պարմաներում, վորոնք իշխող են կապիտալիստական յերկրներում, վորունեղ արոտների տեղերն ու ոգտագործողներն անհատական տնտեսություններ կամ իրար հետ մրցող զանազան տեսակի ընկերություններ ու արտելներ են : Միայն սոցիալիստական տվյալի պետական ու կոլեկտիվ խոչըն տնտեսության պարմաներն են, վոր կարելի յեն դարձնում արոտներն առավելագույն չափով ուղղիոնար ոգտագործել և միաժամանակ հիմնական բարելավումներ կատարել : Արոտի հիմնական բարելավումը՝ թանգարժեք աշխատանք և խույն և խույն և եթ չարդարացվող ծախք է : Արա հետ միասին հիմ-

նական բարելավումն խմաստ ունի և կարող է խոկապես տեսական ու հաստատուն արդյունքներ տալ այն ժամանակ, յերբ միակերպ, համաձայնեցված ու պլանային կարգով և կիրավում մեծ տարածությունների վրա : Յեթե մի ողտագործող իր արոտներում ռացիոնալ ձևեր զործադրի և բարելավի նրանց, խոկ հարեանը շարունակի իր արոտամասից գլորվող քարերով ծածկել առաջնի արոտը, մոլախոտերի սերմերով վարակի և այնպիսի պայմաններ ստեղծի, վորը նպաստի հարեան բոլոր արոտների հմտի քայլացմանը, —ապա այսպիսի բարելավումներն իշարեկի, կուուր կանցնեն : Յերբ արոտային տնտեսության վրա աշխատանք և կատարվում խոչըն ու հղոր կոչեկտիվ տնտեսական միավորի կամ այսպիսի միավորների խմբի միասնական կամքով, այդ ժամանակ միայն հնարավոր և մեծ տարածությունների վրա արոտային տնտեսության խոկան, միասնական, հիմնական ու համատարած ռացիոնալացում կատարել :

Ահա թե ինչո՞ւ բացառապես խորհանությունների ու կուտանսեսությունների գերակշող շրջաններում հնարավոր և արոտների բարելավման համար խոկան ու շահավետ ձեռնարկումներ զործադրել և խնամքի ու բարելավման միջոցով նրանց արտադրականությունը բարձարցնել :

Անասնաբուժության ուղղունալացման և քոչվորական անասնապահության վերացման պայմաններում խիստ մեծ կարևորություն և ստանում ձմեռված կերի բարդացը՝ լեռնային շրջաններում և ամառային (ձմեռայինի լրացմամբ) կերինը՝ հարթավայրերում : Հայաստանում բնական մարդագետիններ ու տափաստանային խոտհարքներ բավականաչափ չկան : Միայն Ստեփանավանի շրջանն ու Աղբարան բավարար չափով ապահովված են խոտհարքներով : Բայց յերեւույթին ապահովված են նաև Ն. Բայազետի, Մարտունու և Դիլիջանի շրջանների առանձին վայրեւը : Մնացած բոլոր շրջաններում չոր խոտի քանակն անբավարար է :

Ահա այս և պատճառը, վոր արոտների մի մասը խոտհարքի վերածելու հարցը շատ կարևոր և գառնում : Մնացած մասի ուղղունական ոգտագործումով ու բարելավելով կավելացվի արոտների արդյունավետությունը, վորն իր հերթին հնարավոր կարաճնի վերոհիշյալ ձեռնարկումը : Սակայն ամենուրեք արոտների բավարար տարածություն խոտհարքի վերածելն անկարելի յեն : Արա պատճառները տարբեր են : Հաճախ խոտն այնքան չի բարձրանում, վոր հնարավոր լինի հնձել, յերեմն ուկելիքն անհարմար և խոտհարքի համար, վորուշ շրջաններում արոտի մնացած տարածությունը փոքր և ու անբավարար : Ամբողջ հանրապետության համար, միջին առումով, կարելի յեն ասել, վոր 2700 մետրից բարձր ընկած արոտներն անհնար և խոտհարք դարձնել, քանի վոր բուսականությունն այնքան ցածր է լինում, վոր չի հնձվում : Միջին հաշվով հան-

ըապեսության արոտների շուրջ 25—30 տոկոսը խոտհարք կարելի յեղարձնել:

Սակայն հնարավոր տարածությունը խոտհարքի վերածելով, այնուամենայնիվ չեն բավարարվի կերի ձմեռային պահանջները, և ամենուրեք հարկ կլինի դիմել արհեստական կերի տարածությունների ստեղծմանը՝ կերարույսեր (չոր խոտի համար), արմատապտուղներ ու սիլոսային կուլտուրաներ մշակելու միջոցով:

Ինչ վերաբերում ե բնական կերի տարածությունների բարելավման տեխնիկայի հարցին, ապա մարդագիտության մեջ ընդունված միջոցները տեղական պայմանների տեսակետից քննելով կարելի յետև, վոր արմատական բարելավման ձեռնարկումները, այսինքն՝ խոտակալմի, ճիմի վոչչացումը և արհեստական նոր մարդագիտին ստեղծելը միայն բացառիկ դեպքերում հնարավոր են և խմաստ ունեն հայաստանի լեռնային կերատարածությունների վրա:

Արմատական բարելավմուներ անելու հնարավոր տարածությունը՝ հայաստանի ամբողջ կերատարածության համեմատությամբ՝ չնչին է: Մակերեսային բարելավումը, պյունքն հողը ցաքանելը (փոցիսելն) ու պարաբուզնելը մեծ չափերով կարող են կիրառվել: Ընդհանուր առմամբ բարելավման այս ձևին կարող են յենթարկվել՝ արտային տարածության 30 տոկոսը, իսկ խոտհարքային՝ 60 տոկոսը:

Այս ուղղությամբ աննշան չափերով կատարված փորձերը գեռ թույլ չեն տալիս այժմ իսկ փոցիսելու և ինտենսիվության ուրիշ միջոցառումների հզգրիտ ժամկետներ առաջարկել առանձին ըրջանների համար: Կարելի յետև միայն ասել, վոր լոկ փոցիսելը դժվար թե այն զգալի արդյունքը կտա, վորն արգեն բարդաթիվ փորձերով ցույց ե արված ԽՍՀՄ ուրիշ հանրապետություններում:

Պարաբուզներից առավել ցանկալին, հարմարը, ձեռնատուն և միենույն ժամանակ՝ բավականաչափ ուժեղը չայտատանի պայմաններում՝ գոմաղբահյութն եղթիկ աղբը, վոր մեծ արդյունավետությամբ գործ ե ածվում Շվեյցարիայի լեռնաբունքներում: Այս հարցում ել խոչոր տնտեսության պայմանները լավագույն և առավել հնարավորություններն են տալիս մարդագետիններն ու արտաները գոմաղբահյութով պարատացնելու լայն ձեռնարկումներ կազմակերպելու համար: Խորհունական և կոլտնտեսական միասնական խոչոր տնտեսության մեջ միայն հնարավոր և աղբամբարներ ու աղբակույտներ կառուցել, ուստի գոմերը չինելիս պիտի յերկու նորատակ նկատի առնել՝ մեկ կողմից անասունի հարմարությունն ու առողջությունը, մյուս կողմից՝ ըրջակա արտաներն ու մարդագետինները գոմաղբահյութով վորովելու հարմարությունը:

Ինչ վերաբերում ե ձմեռային արտաշրջաններին, ապա այստեղ ամսային կերի ամբողջ, կամ համարյա թե ամբողջ բաղան պիտի և

արհեստականորեն ստեղծվի—խոտադաշտեր ստեղծելու և կերային այլ կուլտուրաներ մտցնելու միջոցով: Զմեռային արոտների բարելավումն այնպիսի նյութերով, վորպիսի բարելավումը կարող է կեր տալ ամառվա ընթացքով, վորոշ չափով հնարավոր և բարձրադիր վայրերում: Համապատասխան չորային և աղերին դիմացկուն զգալի ու փափուկ մասսա ունեցող ցանքը, գլխավորապես ձմեռվա համար կարող է ավելացնել արոտների արդյունավետությունը հարթավայրի արոտներում: Սակայն այստեղ ել ձմեռային կերի բազայի լրացումը և ամառայինի ստեղծումը միայն արհեստական կերի տարածություններ ստեղծելու միջոցով պետք է կատարվի: Բատ վորում զգալի ուշադրություն պիտի դարձվի այն կուլտուրաների վրա, վորոնք նվազագույն քանակի վոռոգում են պահանջում, այլև դեմային կուլտուրաների վրա, վորոնք անջրդի պայմաններում աճում ու բավականաչափ արդյունք են տալիս:

Ցանելը հնարավոր ու ցանկալի յետև միայն ձմեռային, այլև ամառային արոտներում: Ճիշտ ե, վերջինում ավելի պակաս չափով, բայց ավելի շատ այն արոտներում, վորտեղ սկզբնական խստակազմը վոչչացած կամ նորացած ե: Վորպիս սերմանման նյութ, անխուսափելիորեն պիտի ծառայեն վայրի կերարույսերի տեղական սերմերը:

Արոտների ու մարդագետինների բարելավումներն որինակելի կերպով անցկացնելու և նրանց ոգտագործումը ուղցինալ դարձնելու համար անխուսափելիորեն անհրաժեշտ ե.

1. Շարունակել հետազոտական աշխագոտական աշխագոտական աշխագոտական բոլոր, գեռ վոչ բավականաչափ ուսումնասիրված ըրջանների կերային պաշարները հայտարերելու և արոտների վիճակի ընդհանուր պատկերը յերեան հանելու համար:

2. Բատ հնարավորության արագ ու լայնորեն զարգացնել մարդագետային մասսայական փորձնական գործը, թե՛ փորձնական հիմնարկների հողամասերում և թե՛ առանձնապես խորհրդային և կոլեկտիվ տընտեսություններում:

3. Լայն պրոպաղանդ մղել կոլտնտեսական մասսայի մեջ, արոտային տնտեսությունները ուղցինալ դարձնելու համար:

4. Տարբեր աստիճանի վորակավորում ունեցող պատրաստված կաղը բեր ստեղծել՝ մարդագետինների արոտային դործի համար:

Արոտների ու խորհրդաների ստորե զետեղած նկարագրությունները վերաբերմար հետեւյալ դիտողությունները պետք է անեմ: Հայտատանի արոտային բոլոր ըրջանները հավասար չափով ուսումնասիրված չեն. այս հանդամանքը չի կարող չափել առանձին ըրջանների նկարագրությունների մանրամասնության ու ճշգրտության աստիճանի վրա: Առաջել ուսումնասիրված ըրջաններին հոռին (Կարախաչ, Բզովդալ, Զիրուխլու և Լաշմար-Լեջան) ու Աղմաղանը: Նվազ չափով ուսումնասիրված են՝

Դիլիջանի գտվառի և Քելթի-Յանըի արոտները, այս Արագածը : Բոլորից ավելի նվազ ուսումնասիրված են Պարալաղյաղն ու Զանդեղուրը : Չուսումնասիրված շրջանների նկատմամբ ողտվել ենք Հողժողկոմատի պաշտոնական տվյալներից, ինչպես և շրջանների բնության ու անտեսության մասին յեղած, յերբեմն 19-րդ դարի ութսունական թվականներին հասնող գրականության մեջ զետեղված հատուկոր տեղեկություններից :

## I. ԱՄԱՆԱԿԱՆ ԱՐՈՏՆԵՐՆ ՈՒ ԽՈՏՎԱՐՔՆԵՐԸ

### Ա. Ղ. Բ. Բ. Յ. Յ. Պ. Ե. Տ. Ա. Կ. Ա. Ն. Ա. Ր. Ո. Տ. Ն. Ե. Բ. Ը.

Աղբարայի պետական արոտները գտնվում են Հայաստանի հյուսիսարևմտյան ծայրամասում : Հյուսիսային կողմից նրանք սահմանակից են Խորհրդային Վրաստանին, իսկ արևմտյան կողմից՝ Թյուրքիային : Արոտային այս զանգվածի ընդհանուր տարածությունը 8257,9 հեկտար է : Հայաստանի Հողժողկոմատի 31 թ. տվյալների համաձայն Վրաստանից յեկող քոչվորների ոգտագործման տակ գտնվում է 4282,0 հեկտար : Մնացած տարածությունը հատկացված է Աղբարայի խորհրդային տնտեսությանը : Տեղական բնակչությունը Աղբարայի պետական արոտամասերից չի ոգտվում :

Աղբարայի պետարոտների լանջերը ներքեւում քիչ թեքություն ունեն, իսկ վերևում ավելի ու ավելի թեք են դանդում : Խիստ թեք արոտամասեր միայն ամենավերին մասում՝ լեռնագաղաթների շրջանում կան : Իրենց սակավ մատչելիության և բուսականության բնույթի պատճառով միայն վոչսարի արոտի համար ոգտագործվող արոտամասերը չառ քիչ են : Այժմյան վիճակում դրանք արօտների մոտ 20 տոկոսը կարող են կազմել : Կանոնավոր ոգտագործման գելքում սրանց մի մասը կարող է բուսականությունն այնքան նորոգել, վոր պիտանի կդառնա խոչը յեղջյուրավոր անհասունի համար : Արոտները ջրով լիովին ապահովված են :

Բայց իրենց ռելյեֆի, հողային պայմանների ու բուսականության Աղբարայի արոտները Հայաստանի արոտների լավագույններից են :

Արոտների ամբողջ տարածությունը ճանաչված է վորպես առաջին կատեգորիա, և այս վորպակումը ճիշտ պետք է համարել : Արոտների բուսականությունը ստորին մասերում (մինչև 2200 մ.) վորոշակի յենթաւոյան և՝ արժեքավոր խոտաղդիներով և յերեքնուկների զգալի խառնուրդով :

Վնասակար ու թունավոր խոտեր քիչ են պատահում, յեթե չհաշվենք տրորված վայրերում մեկ-մեկ պատահող իշակաթնուկներն ու վիշապոր բարդաղաղիկները, վորոնք սովորական են չափից ավելի արածեցված

արոտներում : Հարավային փեշերի բլուրների առանձնապես խճոտ տեղերը յերեմն պատած են լեռնային ցտմաքասեր բույսերի նոսր ծածկուցով, վոր տափարը քիչ և ոգտագործում : Այս և պատճառը, վոր մի քանի տեղերում, դվասվորապես արոտավայրի հուսիսային մասում, տավարի համար պիտանի արոտների մեջ շերտ-շերտ ընկած են վոչխարների արոտամասեր :

Շատ արածացնելու հետեւանքով արոտները բայվական ուժասպառվել են : Սակայն դրությունն այնքան ել վատ չէ, վոր լուրջ յերկյուղ ներշնչի : Խիստ քայքայված վայրեր չեն նկատվում, թեև կասկածից դուրս ե, վոր մերկում հեշտատակված ցածրաքասեր բուսականությունը հետաղա ծաղում ունի և չափից ավելի արածացնելու և ճիմի շերտը քայքայվելու հետեւանքով և փոխարինել նախկին արոտային ճոխ բուսականությանը :

Գագաթների յերկայնությամբ ընկնող արոտներն ալպյան ցածր բուսականությամբ են ծածկված : Այսուեղ աճում են դվասվորապես ցորենուկի, կելերիայի և ալպյան դաշտավելի տեսակների ցածրահասակ սիլվային խմբակցությունները : Ալպյան գոտու թեք արոտամասերը տավարի համար միանդամայն պիտանի յեն : Այս պատճառով վոչխարի արոտներն այսուեղ անջատ գոտի չեն կազմում և ավելի շուրջ ուելյեֆի, քան բարձրության հետ են կապված :

Աղբարայի պիտարոտների այժմյան բեռնավորումը՝ մի հեկտարի վրա մի գլուխ տափար՝ թեև այնքան ել ուժեղ չի անդրադառնում արոտների վրա, ինչպես արոտային բաղմաթիվ այլ զանգվածներում, բայց և այնպես իր պակասավոր կողմն ունի : Սրա պարզ ապացույցն այն ե, վոր ամառվա վերջին առավել արածացված արոտամասերում ընտիր կերաբույսերն այլևս չեն նորոգվում և նրանց տեղը բռնում ե դայլաթաթը, վորն անպետք ե անասունի համար : Ուացիոնալ արածեցման պայմաներում արժեքավոր կերաբույսերը կպահպանվեն արոտային ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում : Արոտային ժամանակաշրջանն ել այսուղ, այնուամենայիվ, հարկ յեղածից ավելի յերկար ե : Նկատի ունենալով այս արոտների բարձր դիրքը (2200—3000 մետր) անասունը այսուեղ արոտ պիտի տանել մոտավորապես հունիսի կեսին, մինչդեռ այժմ չատ ավելի վաղ են արոտ բարձրանում :

Աղբարայի արոտները թեք, մաքուր, քիչ քարքարոտ, իսկ մեծ մասմբ նաև վոչքարքարոտ լանջեր ունեն : Այս ամենը հանրավորությունն ե տալիս արոտներում լայն չափերով բարելավումներ կատարել : Արոտների տարածության դղալի մասը (մոտ 50 %) կարելի յե փոցիւել, քանի վոր այդ թույլ են տալիս թե՛ ուելյեֆը և թե՛ հողային պայմանները : ինչպես այսուղ, նույնպես և առհասարակ լեռնային բոլոր արոտներում լոկ փոցիւը քիչ արդյունք ե տալիս : Փոցիւելու հետ միասին արոտները պիտք ե նաև պարարտացնել :

Աղբարայի պիտարոտները ջրիկ աղբով պարարտացնելու համար մեծ հնարավորություններ ունեն թի՛ աղբի ամբարներ կառուցելու և թի՛ ջրիկ աղբն արոտները տանելու նպատակով :

Արևելքից ու հարավ-արևելքից պիտարոտներին սահմանակից են Աղբարայի լայնածավալ խոտհարքները, վորոնց տարածությունն ավելի քան 15 հազար հեկտար : Խոտհարքներն արևելքում կողմում միապաղական զանգվածով, արևելքում գարեւահողերի ու գյուղական արոտների հետ խառը—ձգվում ու հասնում են մինչև լենինական-Ստեփանավան խճուղին և ապա դեպի արևելք տարածվելով միանում են Ղղղոչի խոտհարքներին : Վերջիններս ձգվում են Ղարախաչի արոտների արևելքում ստորոտի յերկարությամբ :

Խոտհարքները գլխավորապես հարթ վայրերում են, մասամբ ել վո՛չ այնքան թեք լանջերում : Խոտհարքների բուսականությունը յենթալպյան մարգաղետնային ե՝ խոտապղիների գերակռությամբ Տեղանության չափով պատահում են թի՛եռնածաղիկներ (յերենուկներ, կորնդան) : Կան վայրեր ել, վորտեղ պակաս վորակի խոտապղիներն ու հահային բոշիները չատ են (Արփաչայի հովտում, մասամբ նաև Ղղղոչի մոտ) :

Խոտհարքների բերքատվությունը համեմատաբար բարձր ե և հեկտարին 2½—3 տոննի յե հասնում : Խոտհարքների տարածությունը կարելի յե ընդլայնել ի հաշիվ արոտների : Վերջիններից, ըստ իրենց բուսականության բնույթի, կարելի յե խոտհարքը դարձնել 30 տոկոս կամ քիչ առվելի :

Ուելյեֆն ու հողային պայմանները (մեծ մասամբ խորաշերտ լեռնային սևահող) թույլ են տալիս պարբերական պարարտացման ու փոցիւելու միջոցով խոտհարքների կանոնավոր ինամբ կիրառել, վորն անկասկած բերքատվության զգակի ավելացում առաջ կրերի : Բարեկավումներ կիրառելու գեպքում մինչև 5 տոնն բերքատվությունը չափաղանց չպիտի համարել : Ճահճացած վայրերը ցամաքեցման կարիք ունեն, վոր առանձին դժվարություն չի ներկայացնում, քանի վոր ուելյեֆի պայմանները բարենպաստ են : Այսպիսի վայրերը ցամաքեցումից հետո նույնպես հիմնովին պիտի փոցիւել ու պարարտացնել : Խոտհարքներում սովորական գոմաղբային պարարտացումից զատ, կարելի յե զործածել նաև կալիում-ֆոսֆորային պարարտանյութեր :

Շրջանի կլիմայական ու հողային բարեհաշող տվյալները, բարենպաստ ուելյեֆն ու բուսականությունը, հաղորդակցության հարմարությունները (խճուղի), մեծ քաղաքի (լենինական) մոտ լինելլ, ճանապարհային ցանցի ընդլայնման լիակատար հնարավորությունը, չափաղանց նպաստավոր պայմաններն են ստեղծում Աղբարայում խոչը չափով պարզացնելու կաթնատնտեսական անասնապահությունը :

## ՊԱՐՍԽԱՋԻ ԶՈՆԳՎԱԾՆ ՈՒ ԼՈՌՎԱ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԸ

Ղարախաչի արոտները ընկած են համանուն լեռնաշղթայի արևելյան և արևմտյան լանջերին։ Այս լեռնաշղթայի հյուսիսային մասը բավական թեք է, իսկ հարավայինն ավելի մեզմ և և կտրտված և մի շարք հովիտներով։ Այս հարթության վրայով և անցնում Ստեփանավան-Լենինականի խճուղին։ Հարավից լեռնաշղթամ միանում և Աղլաղանի լեռնախմբին, վորը լայն ու կարճ մի լեռնաշղթա յէ։ Վերջինս բավական ուժեղ թեքությամբ իջնում ե դեպի արևելք ու արևմուտք։ Ղարախաչի լեռներում և թե Աղլաղանում ձգվում են հրաբխային զառիվեր կոնուսներ, վորոնք թույլ բուսականությամբ են ծածկված (Լեյլ-դաղ, Դալի-դաղ, Աղլաղան և այլն)։

Ղարախաչի արոտատեղերի զանդվածը կազմված ե՝ հյուսիս-արևելքում Ղարախաչի, Հարավ-արևելքում՝ Աղլաղանի, արևմուտքում՝ Գյունեյ-Ղարախաչի արոտաշրաջներից։

Հողժողկոմատի 1931 թ. ավալների համաձայն արոտների ընդհանուր տարածությունը՝ 34,591 հեկտար ե, վորից Ղարախաչի շրջանում՝ 11,853, Գյունեյ-Ղարախաչում՝ 17,690 և Աղլաղանում՝ 5,048 հեկտար։

Վարչական տեսակետով Ղարախաչի ու Աղլաղանի արոտներն ընկած են Ստեփանավանի շրջանում, իսկ Գյունեյ-Ղարախաչի արոտները՝ Աղլաղայում։ Այդ բոլոր արոտներից 25,241 հեկտարը Վրաստանից յեկող քոչվորներն են ոգտագործում։

Ի՞նչ չափով ե բեռնավորված արոտների այս զանդվածը։ Յեղած նյութերի հիման վրա հետեւյալը կարելի յե սաել այդ մասին։ Նախկին Լոռու-Փամբակի գալասոի տերիտորիայի վրա արածող քոչվորական անսառների ընդհանուր քանակը 1929 թվին 47,393 գլուխ եր (խոշոր յեղջուրավորների վերածած)։ Այս նախկին գալասում քոչվորական ոգտագործման տակ յեղած արոտների ընդհանուր տարածությունը նույն թվին՝ 21,488 հեկտար եր։ Հետեւապես, հեկտարին միջին թվով դալիս և 2,2 գլուխ։ Այսպիսով, այս արոտներն ավելի քան կրկնապատճիկ գերբեռնավորված են՝ ամենաբարձր նորմայի համեմատությամբ։ Իսկ յեթե վերցնենք միջին նորման, ապա այս արոտները յեռապատճիկ ավելի յեն գերբեռնավորված։ Պետք ե մատնանշել սակայն, վոր Ղարախաչի զանդվածը մյուսներից ավելի յե բեռնավորված՝ հեկտարին վոչ պակաս, քան 2,3—3,4 գլուխ։

Այս գերբեռնավածությունը չափաղանց զգալի յէ։ Դրա հետեւանք 16

այն ե, վոր Ղարախաչի արոտների մեծ մասն անկման վիճակի յե հասել, չնայած Ղարախաչի արոտների բնական հատկությունները նպաստավոր են անասնաբուծության զարգացման համար։ Բիշ թեքություն ունեցող լանջերի շատությունն ու լանջերի ստորին մատերի համեմատարար քիչ քարքարություն ունեղծում ե արոտների լավ վորակ, վորին նպաստում ե նաև բուսականությունը։

Արոտաղանդվածի ամբողջ տերիտորիայից առաջին կատեգորիային ե պատկանում 9,780 հեկտար (մոտ 36,5 տոկ.), յերկրորդ կատեգորիային՝ 15,859 հեկտար, իսկ յերրորդին՝ 2,733 հեկտար։ Վոչ-միտանի տարածությունը՝ 3,309 հեկտար ե (9 տոկ. քիչ ավելի)։ Այս բավական զգալի տոկությամբ բավարար է անապահության համար, կիրածերը, այլև լեռնաշղթայի վերին մասի լավացին քարակույտերն ու խճադաշտերն են։

Ղարախաչի արոտաղանդվածը գլխավորապես խոշոր յեղջուրավոր անասունների համար ե ողտագործվում։ Վրաստանի քոչվորների 1929 թ.-ի բերած վերոհիշյալ 22,652 գլուխ անասունների մեծ մասը Ղարախաչի արոտներում են արածել։ Խոչոր յեղջուրավոր անասունները գերիշում են նույն տեղական բնակչության ողտագործման տակ գտնվող արոտներում։ Հիմնականում շահագործման այս ձեւը ճիշտ պետք ե համարել, վորը սակայն բոլորովին չի համապատասխանում արոտների արդի վիճակին։

(18598) Վերին, զուտ վոչխարաբոտային մասի բացառությամբ, արոտների ճանապարհները մեծ թեքություն չունեն և անվտանգ են։ Արոտների մեծ մասը լավագույն չի գուշական առողջություն ունեցում։

Ղարախաչի արոտաղանդվածի տարրեր մասերում բուսականությունը բավական բաղմաղան է։ Նրա հյուսիսային մասն իր ստորին գոտիներում հարեան իրզանչայի ջրբաժան (Չորագետ-Մաշավերա) բարձունքի յենթալպյան բուսականությունն ունի՝ ավելի շատ խոտհարքային, քան արոտային տիպի մարդագետները, բազմատեսակ խոտերով, այն ե վարդակակաչ և կասարոն հովիտներում գլխավորապես խոտագիններ՝ ցորենուկ երեքնուկների հետ, իսկ տեղ-տեղ լեռնատափաստանալին բոշին։ Ավելի վերեւում այս տիպը փոխարինվում է վերին՝ յենթալպյան խոտագիններով և յերեքնուկների ու ալպյան լավ խոտերի բազմազանությամբ։ Լեռնազանաթների ճմակալած տեղերն ալպյան խայտարղետ խոտերով են բեռնված։ Գյունեյ-Ղարախաչի վերին լեռնաձյուղերի արևմուտքում ու հարավ-արևմուտ նայող լանջերի վրա շատ և տարածված չյուղախոտը։ Այսեղի շյուղախոտի փարթամ տեսակներն ազատ կերպով կարող են ոգտագործվել վոչ միայն վոչխարի, այլև տավարի համար։

Այնուհետև Ղարախաչի լեռնաշղթայի հարավային մասում և Դալի-Փաղ լեռան հարավային լանջերին կարող է ներառված լինչպես արոտ-



ներն ավելի քարքարոտ և հողն ավելի չոր և դառնում : Այստեղ արտաների ուժապառությունն ու տրորվածությունը, վորը հյուսիսային մասում չափ զգալի չե, ավելանաշով արտակարգ չափերի յե հասնում : Այստեղ արևելյան ու արևմտյան լանջերի վրա հյուսիսային մասից ավելի զգալի չափով գեր ե խաղում շյուղախոտը՝ ալպյան զաշտավելի ու վարդագույն յերեքնուկի հետ, վորոնք համեղ խոտի զլխավոր մասն են կազմում : Բայց վորովհետեւ արոտը չափազանց շատ և արածացված, արոտի այս լավ մասը քանակապես միանդամայն անբավարար չափերի յե հասել :

Շյուղախոտի թիւերը ցածրահասակ են և թույլ ճմակալություն ունեն : Վարդագույն յերեքնուկը կիզ փովում ե զետնին, վորի պատճառով նույնիսկ վլչխարները քիչ են արածում : Սրա հետեւանքը լինում ե այն, վոր վարդագույն յերեքնուկի զգալի մասը մնում է անողոտագործելի : Իշակաթնուկներն ու փշավոր բարդածաղիկները (գլխավորապես Cirsium Cosmelli) ծայր աստիճանի փարթամանում և իրենց մթագույն թիւիկներով բնորոշ լանջափատ են ստեղծում : Բայց այդ «փշերն» ել փարթամությամբ չեն զարգանում, վորովհետեւ անասունն ամուսն վերջին իր համար ավելի հարմար կեր չգտնելով՝ ուսում և դրանց : Ավելի խորը հողերում ու հովիտներում միասլաղաղ աճում և թավդաթաթը :

Յեթե Ղարախաչի զանգվածի հյուսիսային մասը պետք ե պիտանի համարել զլխավորապես խոշոր յեղջյուրավոր անասունների համար, նորման ընդունելով 0,7—0,8 գլուխ մի հեկտարին, ասպա նրա հենց նոր նկարագրած մասն իր աժմյան անկյալ վիճակում ներկայումս մեծ մասմբ պիտանի յե միայն վոշխաների համար, այն ել թույլ բնոնվածությամբ՝ 1—2 գլուխ մի հեկտարին : Սակայն ավելի ճիշտ կլիներ այս արտները 3—4 տարի լիովին հանգիստ տալ՝ դործաղրելով ինամքի բոլոր ձևերը :

Եյի-դաղի ու Դալի-դաղի հարավային փեշերն իրենց հյուղավարություններով իջնում են ընդարձակ հովիտը, վորը լեռնազանգվածն ամրողութին հատում և նրա հարավի լեռնաբաժան սահմանն ե կտղմում : Այս հովիտը հարթ ե, աստիճանարար բարձրանում է և աննկատելի կերպով իջնում զեղի արևմուտք : Նա կտրված ե միքանի հեղեղատներով և ծածկված ե լեռնա-մարդագետնային ճիմային և տեղ-տեղ տորֆային հողով, վորն ընկած ե ջուր չանցկացնող կալերի կամ կոսի-ճային շերտերի վրա : Բարձունքների միջև գտնվելով և հյուսիսից կեյլի-դաղի ու Դալի-դաղի լեռներով պաշտպանված լինելով, այս հովիտը բարենպատ պայմաններ ունի բուսականությունն ամամար :

Հարթ ուլյեֆի ու պաշտպանված դիրքի չնորհիվ այս հովիտը չափազանց շատ են արածեցնում և այստեղ շատ քոչվորներ են կենտրոնա-

նում : Վորովհետեւ հողը ջուր չանցկացնող յենթաշերտի վրա յե գտնվում, ուստի ինտենսիվ արածեցման հետեւանքով այստեղի բուսականությունը չափ շուտ ե փափել իր բնույթը : Նախկին խոտհարքների հետքեր տեղ-տեղ միայն կարելի յե գտնել ձահճային վայրերում, վորտեղ ճիլախոտի (Deschampsia caespitosa) խմբերն են իշխում : Զավազանց ուժեղ տարածվում են փշախոտը, վորը զլխավորապես խճուզու հարավային կողմում այժմ հսկայական տարածությունները ե բնում : Փշախոտով ծածկված տարածությունները միանդամայն անշահագործելի յեն զառնում, և այդ կերն անպետք ե թե՛ վոչխարի և թե՛ տավարի համար : Պիտանի յեն հովիտի միայն ավելի բարձրադիր մասերը, վորոնց խոտակաղմը զլխավորապես վարդագույն յերեքնուկից, արոտային լավ հովանոցավորներից ու բարդածաղիկներից ե բաղկացած : Ցածրադիր վայրերի արժեքն ե՛լ ավելի յե ընկնում նաև փարթամորեն աճող անդուզի և ձնծաղիկի պատճառում : Այս յերկու բուսականությունները գլխավորապես համարվում են հարավ-արևմտյան միջին ավելի չորսային են : Մեծ դեր են խաղում շյուղախոտային ու քունային տափաստանային բոշխի խմբակությունները : Նրանք այստեղ ավելի լավ են պահպած, քան Ղարախաչում : Այս ամբողջ բուսականությունը լավ ու առատ կեր ե տալիս տավարի համար : Այս հանգամանքը թույլ ե տալիս ավելի հարուստ խոտակալով՝ ունեցող լանջերում միջին հաշվով մի հեկտարի վրա արածացնել մի գլուխ, իսկ վոչ այնքան հարուստ լանջերում՝ 0,7—0,8 գլուխ տավար :

Աղջաղանի՝ Լոռվա տափաստանի կողմը զարձած արևելյան և հյուս-արևելյան լանջերն այլ պատկեր են ներկայացնում : Այստեղ մենք տեսնում ենք իրարից խիստ տարրերվող զոտիներ : Առաջին կամ ստորին գոտին զառիվեր թումբ ե, վոր ծածկված ե լայնատերեւ տիպի տարրեր տեսակի փարթամ բուսականությամբ, վորին տեղ-տեղ ձորերում վառխարինում ե բարձրահասակ խոտածածկը : Իշխող բույսերը հետեւալներն են՝ կղմուխ, կաստրոն, հավաքղանգագիկ ու վարդակոկչ : Վերջին բույսը, ինչպես և այստեղ պատահող վիշն ու վոչչախոտը թունավոր բույսերն են : Տեղ-տեղ պատահում են մկնասխորուկով (Allium Victoriae L.) ծածկված վայրերը, դա վնասակար ու կաթը փչացնող

բույս և : Բուսականության այսպիսի բնույթն այդ գոտին արոտի համար անպետք է դարձնում : Յեվ իրոք, այս արոտների զղալի մասը, վոր տեղական անասունը ոգտագործում է (Կոթուրը ըստ լազ, Լոռվա խորհրդագլուխ անտեսությունն ու ձիաբուծաբանը), վոչ թէ վորպես արոտ, այլ վորպես խոտհարք և ծառայում և առատ (հեկտարին 3—4 տոնն), բայց վո՞չ բարձր վորպակի խոտ և տալիս :

Այս գոտուց հետո զալիս և յերկայնությամբ ընկած հովիտների մի սիստեմ, վորոնք աննշան թեքություն ունեն և ջուրը դժվարությամբ և ներս ծծվում նրանց մեջ : Դրանք մասամբ ջրով հաղեցած ու ճահճացած վայրեր են : Այստեղ մեծ տարածություններ բռնված են կամ ճահճային բոշխով կամ թե փշախոտով : Ավելի լավ չորացված վայրերը բռնված են խոտագդիներով և այլ տեսակ բույսերով՝ մանդիկի զերակշռությամբ, վոր անասունը չի ուտում : Այս վայրերը մոլախոտված են չքիտամիով : Հովիտները մասամբ վորպես խոտհարք, մասամբ ել վորպես արոտ են ողտագործվում, իսկ մասամբ ջրով չեն ողտագործվում : Առավել ուսցիունալ ողտագործումն այն կլիներ, վոր այս տարածությունները նախապես բարելավելին, այն ե՝ ճահճացած վայրերը ցամաքեցնելուց հետո խոտհարքի վերածվելին :

Այս հովիտներց վերև բարձրանում ե արոտային յերկրորդ գոտին, վոր բռնում և քիչ թեքություն ունեցող լանջերը, վորոնք կարտված են ձորերի սիստեմով ու բավական զարդիկ լանջերով : Այս գոտու բուսականությունը տիպիկ յենթալպյան արոտային է : Այս արոտաշերտում զդալի տարածությամբ հարթ, սակայն քարքարոտ, ընդհանուր առմամբ և համեմատաբար քիչ ուժասպառ ու տրորված լանջեր կան, վորոնք այժմ միանգամայն պիտանի յեն տավարի արոտի համար : Վերեւում այս արոտներն աստիճանաբար փոխարինվում են ալպյան գոտու արոտներով՝ ալպյան բնորոշ ցածր բուսականությամբ : Ալպյան գոտին այստեղ միքանի տարբեր տիպի ցածրախոտ մարգագետինների ձևով և յերևան գտնիս : Տարածված են արժեքավոր բաղմապիսի խոտերով ծածկված ալպյան արոտներ : Դրանց մեջ կան զգալի չափով հովանոցավորներ, այլև լեռնային յեղանլեզու, վորն արժեքավոր և վորպես կեր :

Այս գոտուց վերև, վորն ստորին ալպյան կարելի յե անվանել, 3000 մետրից սկսած բարձրանում են հրաբխային զաղաթներ, վորոնք ծածկված են ժայռերով ու ժայռերի բեկորներով : Այստեղ—այստեղ կան փոքրիկ մարգագետիններ, վորոնք յերեմն միանում և բաղմապիսի խոտերով ծածկված փոքր արոտներ են կազմում : Սրանք միայն վոչ խարի արոտներ են, վորոնց ընդհանուր տարածության միայն 10—12 տոկոսն ե պիտանի արոտի համար :

Արոտների ամբողջ ստորին գոտին, այլև նրանից վերև մինչև 2500—2700 մետր բարձրության տարածությունները կարելի յե խոտհարքի 20

վերածել, քանի վոր բուսականության բնույթը (վոր վերեւում նկարագրվեց) բոլորովին արոտային չել :

Պետք ե նշել, վոր լայնատերեկ խմբակցությունների մեջ, վորոնք անցում են կազմում դեպի բարձրախոտ բուսականությունը, աճում են նաև վերոհիշյալ թունավոր բույսերը, վորոնցից միքանիուր չորանալուց հետո ել իրենց թունավոր հատկությունը պահպանում են : Այսպիսի խմբակցությունները գլխավորապես վերին ու ստորին գոտու արեւելյան լանջերում են աճում : Այս վատանգավոր խոտհարքներն սկսվում են ձիաբուծաբանի շենքերից քիչ վերև և շերտածե ձգվում են հարավ՝ մինչև Ոբան-Լոռու ի շրջանի :

Ստորին գոտուց զատ, ճահճացած հովիտներն ել հեշտությամբ կարելի յե խոտհարքների վերածել, յեթե ցամաքեցվեն ու վնասակար խոտերը վոչնչացվեն : Խոս հնձել կարելի յե նաև ավելի վերև ընկած վայրերում, վոչ զառիվեր յեթալպյան սիլոտ լանջերում : Թհե այստեղ ել մեծ բերք չի կարելի ստանալ, բայց դրա փոխարեն խոտի վորակը չառ բարձր կլինի : Ամբողջ արոտաղանգվածում կարելի կլինի խոտհարքի վերածել արոտային տարածության 40 տոկոսը, կամ 15 հազար հեկտար :

Դարախաչի արոտաղանգվածի բարելավման հարցը չափազանց կարուր նշանակություն ունի : Ըստ բարելավման ձերերի կարելի յե տարբերել արոտների հետեւյալ տեսակները՝ ծայր աստիճան ուժասպառ ու պակաս ուժասպառ արոտամասերը և, բացի այդ, զառիվեր ու վոչ զառիվայր արոտները :

Արոտային մասախովի ամբողջ տարածությունը մոլախոտերից մաքրվելու կարիք ունի : Իշակաթնուկներն ու փշավոր բարդածաղկիները, բոշիներն ու ձիաթրթնջուկը Ղարախաչի արոտաղանգվածի գլխավոր թշնամիներն են : Դրանց արմատահան անեւը և տարին միքանի անգամ նոր յերեացող ցողուններն հնձելն այդ արոտների մոլախոտերի դեմ պայքարելու ամենառաջիններ միջոցն է :

Փշախոտով ծածկված արոտամասերի նկատմամբ, վորպես պայքարի միջոց, կարելի յե մատնանշել գոմաղբելն ու ջրիկաղբ տալը : Այս միջոցը, ինչպես ցույց են տվել բաղմաթիվ փորձեր, կործանարար աղղեցություն և ունենում փշախոտի վրա : Որդանական նյութերով պարագացված արոտամասերից այս մոլախոտը միանգամայն չքանում է :

Ղարախաչի արոտների վերին մասերից չառ քարեր են գլորվում : Քարերից մաքրելը զգալի չափով կավելացնի արոտների ողտագործելի տարածությունը : Պետք ե սակայն տարբերել ձիմային ծածկի վրա թափած քարերն այն քարերից, վորոնք զառիվեր լանջերում դուրս են ցցված գետնի խորքից և մի տեսակ խարիսխ են հանդիսանում ձիմային շերտի համար : Այսպիսի քարերի հետացումը կապված է ձիմի ամբողջությունը խախտելու վտանգի հետ :

Հարախաչի ու լյափը թույլ եւ տալիս բավական մեծ տարածության վրա (արոտային ամբողջ տերիտորիայի 35—40 տոկոսի) բարելավումներ կատարել փոցիսելով ու պարարտացնելով: Քոչառեղիքի ու գոմերի ու ացինալ դասավորությունը, գոմաղրի ամբարների և ջրաղբանոցների համապատասխան ցանց հաստատելը տվյալ տարածությունը դյուրությամբ պարարտացնելու հնարավորություն կտա:

Հարախաչի արոտաղանդվածի միջին գոտու վոչ այնքան զառիվեր՝ 12—11% • պարարտ և 8—10% ավաղոտ հողեր ունեցող լանջերը կարելի յեւ փոցիսել ու պարարտացնել: Արոտների մնացած մասներում քարեր հավաքելը, մոլախոտը վոչնչացնելը և արածեցման միջոցների ու ացինալացումն արտադրողականությունն ուժեղ կերպով կարող են բարձրացնել: Կասկածից դուրս եւ, վոր Հարախաչի՝ արդեն միքանի անդամ հիշված ծայր աստիճան ուժասպաված մասը բարելավումներից հետո կարող եւ հեկտարին  $1\frac{1}{2}$ —2 գլուխ վոչխարի փոխարեն անհամեմատ ավելի թվով անառուն կերակրել առանց վորեն վնասի:

Հարախաչի արոտաղանդվածին են հարում խոտհարքների մեծ տարածություններ՝ աբեմուտքից Նողոքինը և արեւելքից Լոռվանը, վորի խոտհարքների ընդհանուր տարածությունը 21,906 հեկտար է: Խոտհարքները գտնվում են լոռվա դաշտում, վորը լոռնային հարուստ սեահող ունի: Այս սեահողը տափաստանի հարավային մասում անմիջականորեն լավային չերտի, իսկ հյուսիսային մասում կոպիճի վրա յեւ նստած:

Լոռվա դաշտի խոտակաղմը լոռնային մարգաղետինների և լեռնային տափաստանների չափազանց բաղմապիսի կազմ ունի: Խոտակաղմի հիմնական տիպը խոտաղդիների և այլատեսակ բույսերից կաղմված լեռնային մարգաղետինն է: Մարգաղետնի այս տիպի մեջ չափ են պատահում թիթեռնածաղկի բույսեր:

Ավելի չոր վայրերը բոնված են կորնդանի բաղմապիսի խոտերի արոտներով, վորոնց մեջ չափ կան կորնդանի յերկու տեսակները՝ Oxytropis transcaucasica և O. oxytropoides: Վերջնը չափ վաղ զարգանում և սովորական կորնդանից մի ամսով ավելի չուտ և ծաղկում: Այստեղ կան չափ յերեքնուեներ. հատկապես լեռնառույյուը, վորն առանձին արժեք ունի: Դրանից պակաս առօտ Trifolium ambiguum-ը, նաև Trifolium pratense-ն չափ արժեքավոր են:

Կատարված քիմիական անալիզները ցույց տվին, վոր Oxytropis oxytropoides-ը ծաղկման վերջում պարունակում է 17,98% հում պրոտեին և 27,93% բջջաթաղանթ, 3,24% հարու, իսկ Trifolium ambiguum-ը՝ 22,54% հում պրոտեին, 19,60% բջջաթաղանթ և 2,19% հարու:

Մարգաղետնի այս նույն տիպում, կամ խոտաղդիներով ավելի հարուստ նրա այլ տեսակներում, ամռան կիսին յերեան են գալիս յերկ-

րորդ հերթի արժեքավոր խոտաղդիներ՝ մարզային շյուղախոտ, դաշտավել և այլն:

Վերջինները հաճախ կազմում են միապաղաղ, համարյա զուտ խըմբակցություններ:

Ավելի չոր ու բարձրաղիք վայրերում զարդանում են լեռնային տափաստանային խմբակցությունների տարբեր տիպեր, վորոնք մարգաղետնային բաղմափատային տափաստանի տիպին են պատկանում: Սապիսի վայրերում Փոնային բույսը հանդիսանում է փրփրուկը, բարձրաղիկները, մլմլուկը և տեղ-տեղ փետրախոտը, վորը սակայն վոչ մի տեղ ուժեղ ճիմ չի տալիս: Կորնդանը տափաստանային համակեցությունների մեջ ել առատ է: Քիչ ավաղոտ հող ունեցող չոր վայրերը, վորտեղ կոպիճը յերես և գուրս գալիս, տափաստանի չոր բաղմափատերով են բանված, և այստեղ ստորին շերտում գերակշռում եւ ուղղը, իսկ վերինում՝ բարձրահասակ քուերը և այլն: Ավելի խոնավ ու ցածրադիր վայրերում, վորտեղ հողն այնքան ել խորը չի, իսկ կոպիճը ջրի համար անանցանելի չերտ է կազմում, փոփոխակի խոնավության պայմաններ են ստեղծվում: Այստեղ զարգանում են ջիլախտուի խմբակցությունները՝ պրտու և յեղեղնախոտ: Ամռան սկզբին անանցանելի ճահճների տեսք ունեցող այսպիսի վայրերն ամառվա վերջին ցամաքում են:

Լոռվա խոտհարքների վորակը չափ բարձր է: Այստեղի բուսականություննը կերպ տեսակետից չափազանց արժեքավոր և կաղմված է հրաշալի խոտաղդիներից ու թիթեռնածաղկիներից:

Լոռվա խոտհարքները չափ չեն մոլախոտված: Տեղ-տեղ, դլխավորապես նախկին արոտամասներում, խոտհարքը վորոչ չափով մոլախոտում են վիթխարի հողանոցավորները և նույնքան խոշոր իշակաթնուկները: Խոտհարքներում անգուստ քիչ կա: սրանք միայն լեռների յեղրեսում են գտնվում: Տափաստանային հողամասերում լուրջ մոլախոտ և հանդիսանում վոջլախոտը: Մոլախոտերի մեջ հատուկ տեղ է դրավում վիթխար յերեացած ու գրսից յեկած դանտոնիա խոտաղդին, վոր վերջին տարիներն ուժեղ տարածում է տափաստանի հարավային մասում և գուրս և քըում լավորակ խոտաղդիները: Նա չափ ծգոտալի և նվազ մննդարար է (գում պրտեյին 8,1%, բջջաթաղանթ 38, %):

Լոռվա խոտհարքների խոտակաղմի լավաղույն տիպերն եւ հանդիսանում մարգաղետնի խոտաղդային-կորնդանային տիպը, վորը հաճախ կաղմում է խոտի 20—40%-ը: Ապա լավաղույն տիպերից մեկն և սիդուին յերեքնուեներից տիպը՝ կաղմված գլխավորապես մարգաղետանային չյուղախոտից և վարդաղույն յերեքնուերից:

Լոռվա ամբողջ հարթության համար, վորտեղ միջին բերքագություն պիտի ընդունել հեկտարին 2 տոնն չոր խոտ: Այսպիսի բերք են տալիս բաղմափատա խմբակցությունները, վորոնք ավելի չորածեր

իսուսատեսակներ ունեն : Խոնավասեր խմբակներությունները 3—4 տոնն չոք խոտ են տալի , իսկ բոշխի խիտ թփուտները՝ ավելի քան 5 տոնն : Տառապաստանի չոր խոտատեսակները կոպիճը յերես ընկած վայրերում ցածր բերք են տալիք՝  $1\frac{1}{2}$  տոննեց պակաս : Բերքատվությունն ընկնում է համայնադիրի վայրերում , վորտեղ հողը թեև հարուստ է և խորը , բայց շատ է պնդացած : Չոր խոտի ցածր բերքը , չնայած հողային բարենպատ ուղարմաններին , բացատրվում է մի կողմէց խոտհարքները դարձնանը և աշնանն արածացնելով , իսկ մյուս կողմէց , ինչպես յենթաղբում են հողադեսներից վոմանք , լոռվա սեահողի հատկությամբ , վորի մեջ , ակատի մեծ մասն իբր թե , բույսի արմատներին անմատչելի զրության մեջ և զնում : Նույնքան ցածր բերք են տալիս նաև լոռվա ցորենի արտերը : Ըստ վորում , ինչպես արտերում , նույնպես և մարգագետիններում , զոմաղբային պարարտացումը բերքատվությունը բարձրացնում է : Հոգուս այս յենթաղբության կան վորոշ տվյալներ : Բողդանովիա գյուղակի փոցիսած ու զոմաղբած խոտհարքը հեկտարին 6,3 տոնն բերք և տալիք՝ այս շրջանի չքարեւալած մարգագետնի 2,8 տոննի հանդեպ : Բարելաված մարգագետիններում խոտաղբիները կազմում են 34% , իսկ թիթենածաղիկները՝ 49% :

Պլտծիարուծարանի խոտհարքում անասունի հին նախրատակը աչքի յե ընկնում ցորենուկի ու վարդագույն յերեքնուկի արտանովոր փարթամությամբ և մի հեկտարին տալիս է 7,4 տոնն բերք (50% խոտաղբիներ և 28% թիթենածաղիկներ) , չըջակա ցորնուկի մարգագետինների 2,3 տոննի հանդեպ :

Առանձնապես բնորոշ է , վոր զոմաղբային պարարտացումից հետո ավելանում է թիթենածաղիկների տոկոսը և նրանք փարթամանում են : Այս որինակները պարզ վկայում են , վոր փոցիսումն ու պարարտացումը (թեկուղ գոմաղբով) լոռվա մարգագետինների բերքատվության բարձրացման միջտ միջոցն են հանդիսանում :

Յեթե լոռվա խոտհարքների ընդհանուր տարածությունը կլոր թվով ընդունենք 25000 հեկտար , իսկ բերքատվությունը միջին թվով 2 տոնն , ապա ընդհանուր բերքը կլինի 50,000 տոնն : Իսկ յեթե լոռվա չըջանի արտօններին ավելացնենք նաև Ղարախաչի ու Աղլաղանի արոտավայրերը , վորոնք մոտ են առաջինին , ապա կտանանք 26,468 հեկտար , և ընդունելով հեկտարից  $1\frac{1}{2}$  տոնն , կտանանք մոտ 39—40 հաղար տոնն չոր խոտ : Ի նկատի ունենալով , վոր տեղական բնակչությունը բոլոր արոտների կեսից պակասն ե ողտագործում , ապա կտացվի Հայաստանի համար մի յեղակի յերեւյթ , յերբ խոտի քանակն ավելի շատ է , քան բնական վիճակում կերցվող խոտը :

Լոռվամ խոտհունն սկսվում է հունիսի վերջից և ձգվում է մինչև ոգոստոսի վերջը , իսկ յերեմն սեպտեմբերին ել կարելի յե տես-

նել նոր հնձած խոտհարքներ : Սրա հետևանքով ստացվում է վրայից անցած չոր խոտ : 1930 թ . Բլագոդարնոյե դյուղի մոտ գտնվող և ողուտոսի վերջին հնձած խոտհարքը հետեւյալ պատկերն ուներ : Առաջին չերտը մինչեւ 150 սանտիմ . բարձրությամբ բոնում եր արհախոտը՝ կարծրու համարյա անակերն ցողուններով , զրանից քիչ ցածր 110—120 սմ . բոնում եյին մարզային ցյուղախոտի ցցված , չոր , դեղին ու համարյա անակերն ու միանդամայն ծղոտացած ցողունները :

Այս նույն խոտհարքը մի ամիս առաջ շքեղ ու քնքուշ և ցյուղախոտի տերեախիտ ու գեղ ցածր ցողուններով արհախոտի միապաղպաղ կանաչ թփուտ եր ներկայացնում : Խոտհնձի սկզբի ընդհանուր ժամկետը լոռվամ բավական ճիշտ է , բայց նրա ձգձգումն անցանկալի յե : Խոտի միաժամանակ և արագ բերքահավաքը նրա հրաշալի հատկության զրավականն է : Լոռվա չըջանի կոլեկտիվ տնտեսություններին առաջարկված արտակարդ խնդիրներից մեկը՝ խոտհարքների արագ ու միաւեղ բերքահավաք կազմակերպելն է :

## ԼԵԶԱՆ-ԼԱԼՎԱՐԻ Ս.ՐՈՏՆԵՐԻ

Լեզան-Լալվարի արոտները առանձնացած լեռնային զանդված են կաղմում, վորն ընկած և չայաստանի հյուսիսային ծայրում, Վրաստանի սահմանի մոտ։ Այս արոտներն Ստեփանավանի և Ալլահվերդու վարչական շրջանների մեջ են մտնում։ Ակտելով 2000 մետր բարձրությունից, այս արոտազանդվածը յերկու գավաթով վեր և բարձրանում, Լեզան՝ 2709 մ. և Լալվարը՝ 2750 մ.։ Մասսիվի ամբողջ տարածությունը 7590 հեկտար է։ Դրանցից Ալլահվերդու շրջանում՝ գտնվում են 2959, իսկ Ստեփանավանի շրջանում՝ 4.631 հեկտար։

Հստ ոելյեֆի Լալվար-Լեզանի արոտազանդվածը յերկու մասի յերաժանիքում։ Հարավային մասը Լեզանն է, վորը յերկարությամբ հարավ-արևեմուտքից դեպի հյուսիս-արեւելք ձգված մի մաքուր սարահարթ ե՝ դեպի արևմուտք ավելի հարթ, իսկ դեպի արեւելք զգույի չափով ավելի կրտսելու լանջերով։ Վոչ այնքան բարձր լեռնաշաղկապը հյուսից միացնում ե դրան Լալվարի արոտազանդվածի հետ, վորն ավելի ձգված և մեծ մասամբ կրտսելու լանջեր ունի։

Իբ հիմքով Լալվար-Լեզանի զանդվածը հարավից հենվում է լոռվատափառանի, վրա, վորի լեռնակին-սևահողային տարածությունները հասնում են նրա փեշերին, իսկ տեղ-տեղ դելյուվիայի տակ թաղված վեճակում։ այդ յերեսում են նաև լեռնափեշերի ստորին մասերում։ Լանջերը ծածկված են լեռնամարդագետնային, գլխավորապես խճոտ հողերով, վորոնք տեղ-տեղ սեվահողի տեսք ունեն։ Արոտների վերին մասը տորֆախառն ու տորֆային լեռնամարդագետնային հողեր ունեն, վորոնք չափ բարակ են, բայց բուսահողի հոկայտական քանակ են պարունակում (Լեզանի վերին հարթավայրերում մինչև 41%)։

Լալվարի հյուսիսային, մասամբ նաև ամբողջ արոտազանդվածը արևելյան լանջերի վորով վայրերն անտառային հողերի ծածկ ունեն։ Անտառների մնացորդներ կան նաև արևելյան մասում։

Լալվար-Լեզանի լանջերն ընդհանուր առմամբ ծածկված են յենթալպյան արոտաբուսականությամբ, վորը հարավային մասի ստորին շերտերում տափաստանային, իսկ հյուսիսայինում անտառային տարրեր ունի։ Լանջերը, հատկապես հարավայինները, չափ քարքարոտ են, տրորված ու ծայր աստիճան մոլախոտված։ Գլխավոր մոլախոտերն են՝ փշավոր բարդածաղեկերն ու շրթնածաղկավորները։ Դեպի անտառ իջնող լանջերը զգալի չափով մոլախոտվում են անդուսով։ Ավելի մաքուր են թե Լեզանի և թե Լալվարի արևմտյան մասի զառիվեր լանջերը, վո-

րոնք յենթալպյան խոտածածկ ունեն՝ բաղմախոտի և յերեքնուկների զգալի քանակով։ Սրանք նաև արժեքավոր խոտազդիների զգալի քանակը են պարունակում։

Չնայած համեմատաբար վոչ չափ բարձրության, Լալվարի և Լեզանի գաղաթներն ավելի չուտ ալլոյան, քան յենթալպյան տիպի խոտային ծածկ ունեն։ Առանձնապես ուժեղ կերպով այդ արտահայտված ե Լեզանի վերին հարթության վրա։ Այս միանգամայն հարթ, տեղ-տեղ միայն ալիքամեռ բարձունքները ծածկված են միապաղաղ, խիտ ու ցածրահասակ շյուղախոտով (վոչխարի), վորն այստեղ չափաղանց փափուկ ու քիչուշ է։ Շյուղախոտին քիչ քանակով խառնվում ե արածելու համար լավ ու սննդարար լեռնային բոչիք։ Այլ խոտերը խոտածածկի չնչին մասն են կաղմում։ Այս խոտածածկն ամենաբնորոշ և դրա հետ միասին ամենալավ վոչխարարուն և հանգիսանում։ Այստեղ արածող տափարն ի վիճակի չե արածելու խիստ զետնատարած խոտը, վորի 50 տոկոսը թողնում ե առանց ուտելու։ Մնացած խոտը հետեւյալ տարին չուրանում, բացարձակ կերպով անսնունդ ե գառնում և խիստ խանգարում ե նոր ցողունների զարգացմանը։ Պարզ է, վոր այսպիսի խոտածածկը ավելի վոչխարներին և հարմար։

Վերին բարձունքների հեղեղատների բուսականությունը մոլախոտված և կոճղեղավոր բույսերով։ Այսպիսի վայրերում չափ առատ և չնախուտը։ Մի քանի վայրերում յերեկան և հանված ձնաղիկի թունավոր բույսի զգալի խառնուրդ է։ Տեղական հովիվները դրանից չափ են զանգատվում։

Իր արտաղբականությամբ Լեզանի բարձունքները լավագույն վոչխարաբունքից մեկն են հանգիսանում և կարող են բեռնավորել մի հեկտարին 6-7 դլուխ վոչխարով։ Տորֆային հողաշերտի խիստ բարակությունը (10-25 սմ.), վորն անմիջապես նստած ե լեռնատեսակների վրա, պահանջում և զգուշանալ արածեցնելու ժամանակ, վորպեսդի նույնիուկ ժամանակավորապես չափ թվով վոչխարներ չխմբվեն փոքր տարածության վրա։ Լանջերում մեկ հեկտարը կարող է կերակրել մինչև 4 վոչխար։ Ավելի թեք լանջերի և Լեզանի զգալիքի մերձակայքի նվազ քարքարոտ վայրերը կարող են կեր տալ մինչև 0,75 դլուխ տափարի։ Արոտներից խոտածարք կարելի յե դարձնել մոտ 15 տոկոս՝ դընավարապես արեվմտյան ու հյուսիս-արեվմտյան լանջերում։

Դեպի Լալվար-Լեզանի արոտազանդվածներն են ծգվում լոռվախոտաբների ծայրերի արժականությամբ, վորոնք նկարագրված են նախորդ գլուխում։ Լալվար-Լեզանի արոտազանդվածի ստորին փեշերի վրա յել խոտածածկներ կան, տարածությամբ մոտ 300-350 հեկտար։ Պետք ե նշել, վոր Լալվարի հարավային լանջին Գաճաճկուտ գյուղից ներքեւ յուրահատուկ խոտածարքներ կան։ Սրանց մեջ գերակռում ե Կովկասյան կծվախոտը,

վորը մի քանի ձմեռային արտաներում աճող սովորական կծվախուժից ավելի լավորակ է : Լալվար-Լեջանի արոտազանդվածների խոտհարքների բերքատվությունը հեկտարից միջին հաշվով  $1\frac{1}{2}$ - $2\frac{1}{4}$  տոննի յէ հասնում :

Լալվար-Լեջանի արոտաների ողտագործումը կարդափորելու համար ամենից առաջ պետք է միջոցներ ձեռք առնել՝ արոտներն ըստ անասունի տեսակների բաշխելու, ապա կանոնավորել բնունավորումը, ինչպես և անասունն արոտ հանելու և արոտից վերադարձնելու ժամկետները :

Լեջանի արոտազանդվածի սոտրին մասում, վորը չուտ և ձյունից աղատվում, անասունն արոտի կարելի յէ հանել թերեւս մայիսի վերջին, աստիճանաբար վերեւ բարձրացնելով և արածացման ժամանակամիջոցը սեպտեմբերի առաջին կամ յերկրորդ կիսին վակելով :

Մոլախոտերի դեմ պայքարն ու նրանց վոչնչացումը նկարագրված արոտազանդվածների ամենասունհամաժեշտ ձեռնարկումն են : Լեջանի հարթ վայրերի համար վոցիսել հանձնաբարելը դժվար է, քանի վոր հողային ծածկն այստեղ շատ բարակ է : Կարելի յէ պարարտացնել իշարեկե, առանց նախապես վոցիսելու, բայց պետք է նշել, վոր Լեջանի լեռնահարթություններում խոտային ծածկի արտօնակարգ խոտությունն առանց պարարտացնելու յիշ հնարավոր բերքն արդեն տալիս է : Վոչ ույնքան զառիվեր լանջերի արտօնականությունը կարելի յէ բարձրացնել ուցիոնալ պարարտացումով :

Պետք է առանձին ուշադրություն դարձնել Լեջանի հարավային լանջերի վրա, վորոնք այնքան են տրորված, վոր մեծ տարածությունների վրա խիճը մերկացել և ներքեւ ընկած գյուղերի արտերն և թափ-վում :

Այստեղ առավել քայլայված տարածություններին պետք է մի քանի տարի բացարձակ հանդիսատ տալ : Դրա հետ միասին պետք է հնարավոր յեղած վայրերում ճիմն արհեստականորեն նորոգել՝ թե՛ ճմակալող բույսեր սերմելով և թե՛ ներքեւ ընկած տարածությունները վերեկից թափվող խճերից պաշտպանելով :

## ԶԵՐՈՒԽԱՅԻ ԱՐՈՏՆԵՐԸ

Զերուխայի արոտներն ընկած են Զերուխայի և Բզովդալի լեռնաշղթաների հյուսիսային ու մասամբ հարավային լանջերին՝ Ստելիանավանի ու Ղարաքիլիսայի ըրջաններում :

Արոտների ընդհանուր տարածությունը 15,000 հեկտար է, վորի մեծ մասը՝ 13,070 հեկտարն ընկած է հյուսիսային լանջին (Ղարաքիլիսայի ըրջանում) : Զայտուցից հարավ-արևելք, մասամբ Ապարանի և մասամբ Լենինականի ըրջաններում գտնվում է Գյալին-կայա կոչված արոտամասը՝ տարածությամբ 3994 հեկտար :

Զերուխայի արոտների ամբողջ արածությունից 4774 հեկտարը (36,5 տոկ.) հատկացված է քոչվորներին, վորոնք գալիս են Վրաստանից (Քորչալուից) : Մնացած 8296 հեկտարը (63,5 տոկ.) տրվում է աեղական բնակչության : Զերուխայի արոտներից ողտվում են հյուսիսային լանջին կից գտնվող գյուղերը : Այստեղ են բերում իրենց անասունները նաև Փամբակի հովտում գտնվող գյուղերը : Բացի այդ, Զերուխայի արոտներում արածում են մի քանի հեռավոր գյուղերի (Լամբաշու, Քյորփրու) անասունները : Դրանցից Լամբաշուն, վոր իր սպագործման տակ գտնվող արոտներից ուղիղ գծով 50 կիլոմետր, իսկ ճանապարհներով մինչև 65 կիլոմետր հեռու յէ գտնվում . արոտներից այսքան հեռու գտնվելու տեսակետից միակն է Հայաստանում :

Զերուխայի արոտների ոելյեֆը մեծ մասամբ բարենպաստ է ողտագործման համար : Վոչ պիտանի տարածությունն ընդհանուր հաշվում է 394 հեկտար, այսինքն արոտների ընդհանուր տարածության 3 տոկոսը : Ապառաժներ ու զառիվեր լանջեր քիչ կան, վորոնք գտնվում են հարավային լանջին ներքին մասում և մասամբ ել գաղաթներում : Մեծ մասը հարթ ու քիչ թերություն ունեցող լանջեր են, վորոնց վրա անասունը հեշտ ու հարմար է արածում : Արոտների տարածությունն ըստ վարակի համարյա հավաքարաչափ բաշխված է յերեք կատեգորիաների միջև, վոր ընդհանուր առմամբ ճիշտ պետք է համարել : Յերրորդ կատեգորիայի տակ ընկնում են գլխավորապես զագաթների քարքարութեղերը և հարավային ուժասպառ ու խճոտ լանջերը :

Զերուխայի արոտների ստորին սահմանը 2000-ից մինչև 2250 մետր, իսկ գաղաթներն ավելի քան 3000 մետր բարձրություն ունեն : Հյուսիսային լանջերում արոտները համարյա ամենուրեք իրենց ստորին մասով սահմանակից են անտառներին, վորոնք արևմտյան մասում մե-

ջընդմէջ, իսկ արևելյան մասում միապաղադ են: Սրան համապատասխան արոտների բուսականությունն ստորին շերտում իր մեջ անտառային շատ տարրեր ե պարունակում: Անտառային վերին սահմանում խոտհարքներ շատ քիչ կան. ընդհակառակը, տեղ-տեղ արոտներն անտառում մեջ են մտնում: Հյուսիսային լանջերը ծածկված են յենթաշղյան արտաշին բուսականությամբ, վորը ներքին մասում, առավելապես բաղմախոտային ե:

Վերին շերտում խոտազգիների քանակն ավելանում է: Արոտների ստորին շերտի թշնամին տեղ-տեղ առատորեն աճող անդուսն ե. թեև քիչ չափով նաև մյուս թունավոր խոտերը՝ վարդակակաչն ու բիշը: Վերին յենթալպյան խոտաղի-բաղմախոտային ծածկը կերպին բարձր արժեք ունի: Նույնը պիտի ասել նաև դրանից վերև ընկած հարթ գագաթարթուների մասին, վորոնք բարձրանում են ալպյան շրջանը և ցածր ալպյան խոտաղի, բաղմախոտային տիպի չափազանց արժեքավոր վորակի բուսականություն ունեն: Արոտները բարելավման մեջ կարեք ունեն, դրանք վերին աստիճանի կոխկրտված ու տրորված են: Ավելի զարիկեր լանջերի վրա շատ տեղերում յերեսում են պոկված ու սահող ճիմի մեջ շերտեր, վորոնք տարեցտարի ավելանում են: Արոտների վերին շերտերը շատ տեղերում քարքարուտ են դարձել:

Հարավային լանջերն իրենց բուսականությամբ ու հողային ծածկի վիճակով մյուս լանջերից խիստ տարբերվում են: Արտազանդվածի արևելյան մասում միայն, Մտեփանական-Ղարաքիլա խա խճուղուց սկսած, առաջ գեպի արևելք, հարավային լանջերը տեղ-տեղ անտառով են ծածկված: Արևելյան մասում հարավային լանջի անտառային տարածությունները մեծ մասամբ ընկած են յերկրորդական լեռնածալքերում և կամ թե պաշտպանված հովիտներում: Հարավային լանջի ամենավերին մասը ծածկված է, յենթալպյան հիմնակի մարդագետիներով, վորոնց մեջ արժեքավոր խոտազգիներ շատ են զարգացած: Այս մարգագետինները հարուստ են նաև յերեքնուկներով. սրանց մեջ շատ կան նաև լեռնային յեղան լեղուի փարթամ աճող և արժեքավոր կերպույտ հանդիսացող տեսակները:

Ավելի ներքեսում յենթալպյան այս արոտները փոխարինվում են լեռնասափաստանային տարբերի զգալի խառնուրդով: Այս ներքում տեղ-տեղ շատ են փետրախոտերն ու տափաստանային այլատեսակ խոտերը:

Այս լանջերի կոչտ կերպի գոյությունը մեղմանում են նրանով, վոր շատ վայրերում նրանց մեջ կա նաև կորնդան: Հեղեղատներում ու հյուսիսային ուղղությամբ ընկած լեռնածալքերում այսպիսի խմբակցությունները փոխարինվում են յենթալպյան մարդագետիներով, վո-

րոնց մեջ շատ կան նաև լեռնային քնքուշ խոտազգիներ, յերեքնուկներ և անտուային տարրեր:

Հարավային ուղղությամբ ընկած լանջերի ստորին մասը բոնել են ավելի չորսամսություններ, վորոնց մեջ կա նաև լեռնասափաստանային բոչի, յերեմն շյուղախոտ, մկնամբդիներ, սեավոսպ, ալպյան յերեքնուկ և կոչտ բազմախոտ: Պակաս տրորված վայրերում կերպային տեսակետով արժեքավոր լեռնա-տափաստանային բոչիը հաղթում և մյուսներին:

Դրան միշտ միանում է բարձրալեռնային մի խոտազգու, այն և ալպյան գաշտավելի խառնուրդը, վոր կերպին շատ մեծ արժեք ունի և վորն այստեղ բավական ցածր է իջնում: Բզովդալի լեռնաշղթայի ամենացածր մասերը, Ղարաքիլիսայի մոտ, վոչ թե վորպես ամառային, այլ անցման արոտներ են հանդիսանում, վորտեղ անասունն արածում և գարնան ու աշնանը: Սրանք ծածկված են նվազ սննդաբար չորային բուսականությամբ, վորի մեջ դերակշռում են բարձրաթուկի կոչտ խոտերն ու սակավ սննդաբար կծվախոտ կոչված խոտաղին: Այս արոտներում արժեքավոր տարրը միայն վայրի սովորյան է:

Բնովդալի լեռնանցքից գեպի արևմուտք ընկած շրջանում, վորի միջով Ստեփանավան-Ղարաքիլիսա խճուղին և անցնում, հարավային լանջերի բուսականության պատկերը շատ և փոխվում: Անտառներն անհայտանում են: Յենթալպյան բուսականությունը միայն զարգաթաշարքի մոտ և պահպանվում, իսկ տափաստանային տարբեր ունեցող մարդագետինները կազմում են մի շերտ, վորը 2350—2400 մետրից ներքեւ չի իջնում: Լանջի մյուս մասը բոնված և չորաբույսերի խմբակություններով՝ նախալեռնային չորաբույսերի զերակշռությամբ: Այժմ այս վիճակում այս տարածությունները միայն վոչխար արածացնելու համար են պիտանի:

Լանջերի վերին մասում խոտի հիմքը լեռնասափաստանի բոչին և կաղմում, իսկ ներքենի մասում՝ շյուղախոտը. յերկուսն ել ալպյան գաշտավելի և ընդհենների զգալի խառնուրդով: Բայց արտասովոր տրորվածության և ուժափառության հետեանքով՝ միայն քիչ տեղերում են պահպանվել բուսականության սկզբնական հարաբերությունները: Տարածության մեծ մասում լավ արածվող կերպույսերը (շյուղախոտը, լեռնասափաստանային բոչիը և ալպյան գաշտավելը) հիմնովին սպառված են, նրանց տեղը անպետք բաղմախոտերն ու միամյաներն են բոնել: Այսպես որինակ, Համամլուի և մերձակա գյուղերի շրջանում, այլև դեպի արևմուտք, ճմային ծածկը կորցրած այսպիսի վայրերն ամռան յերկրորդ կիսին հեռվից հենց աչքի յեն ընկնում, շնորհել փոխարինող միամյա թղթածաղկի, վոր անասունը չի ուսում:

Լեռնաշղթայի արևմտյան մասի հյուսիսային այս լանջերում ել յենթալդյան մարգագետնային նախնական խոտածածկը լավ և պահպանված: Տեղ-տեղ սակայն (Աղբուլաղ դյուղի դիմաց և ավելի արևելք) զրան զդալի քանակով խունվում ե քիչ արածվող և վոչ մննդարաբ կոչտ շյուղախոտը: Բուսականության այսպիսի բաշխում և նկատվում նաև Փամբակի լեռնաշղթայի վրա: Դրա հյուսիսային լանջերը (Դարաքիլսայի շրջանում), անտառի սահմանից վերև ծածկված են յենթալդյան փարթամբ բուսականությամբ, վորը ստորին մասում վիթխարի չտափով բարձրախոտ ե: Վերեւում այդ ծածկը փոխարինվում և նույնքան փարթամբ ալպյան բուսագործով: Խոար հարուստ և լեռնային արժեքավոր խոտագիներով և առատ և յերեքնուելներով: Ես արոտները (Դարաքիլսայի Մայմեխն ու հարեան արոտաղանդգածները) շրջանի լավագույն արոտներից են: Դեպի արևմուտք անտառն այստեղ ել վերանում ե, զրահետ ել վերանում ե նաև բարձրախոտը: Այստեղի յենթալդյան արոտներն արժեքավոր խոտերով հարուստ չեն. նրանց մեջ ցածրաբժեք շանաերեներ շատ կան (Սպիտակի լեռնանցքի շրջակա բարձունքները): Այստեղ ել լանջերի ստորին մասերը բոնված են այնպիսի խոտածածկով, վորի մեջ գերակշռում են տափաստանային բոշին ու շյուղախոտը, վորը տեղ-տեղ լավ և պահպանված, իսկ տեղ-տեղ ել միանգամայն աղավաղված ե: Այսպիսի վայրերում հողային ծածկը խախտված է, իսկ կավային ու խճային լերկացած յենթահողը՝ լվացված: Կաղմվել են վիթխարի հեղեղատներ, վորոնց միջով անսասուն համարյա չի կարող անցնել և վորոնց յեղերքին աճել են չարածվող քուլեր ու փշեր: Այսպես են որինակ՝ նալբանդից հարավ ընկած չոր լանջերը կամ համամլուի և Սպիտակի միջն ընկած նախալեռները:

Զաջուռի արոտաղանդվածի արևմտյան մասը, վորը դեպի Լեռնական և նայում նախնական, —վոչ վատ և չորասեր խմբակցությունների քայլքայման պտտկեր և ներկայացնում: Հյուսիսային մասում, վորուղ կրաքարերը հողի բարակ շերտով հաղիկ են ծածկված, լանջերը տրորված, լվացված ու համարյա անպետք են արոտի համար: Թունելից դեպի արևելք ու հարավ-արեւելք ընկած մասում հարթ ու վոչ-դառիվեր լանջերը ծածկված են յենթալպյան լավ խոտագիներով, վոր տափարի համար պիտանի յեն: Սակայն այս արոտները շատ ուժեղ տրորված են, ուստի և բավարար չափով կեր չեն տալիս:

Ուլյեֆի բնույթով, հողային ծածկի վիճակով ու բուսականությամբ Զիբուլուի արոտները 20—25 տոկոսով պիտանի պիտի համարվեն բացառապես վոչխարի համար: Հարավային լանջերը, վորոնց մեծ մասամբ համայնական արոտներ են, իրենց այժմյան վիճակում ամբողջովին վոչխարների համար են պիտանի:

Հանգիստ տալն ու բեռնավորման զգալի թուլացումը լեռնաշղթայի-

Հարավային լանջի արոտների մոտ 30—40 տոկոսը պիտանի կղարձնի նաև տալվարի համար: Յեվ այս կղատարվի այնուեղ, վորտեղ ճմային կազմը գեռ անհետ չի վոչնչացել, և վորտեղ լանջերն այնքան դառնիւեր չեն: Պետք է նշել, վոր այժմ վոչնչացած ճմային հիմքն սկզբում շատ բարձր վորակ և ունեցել (շյուղախոտ, լեռնատափաստանային բոշի, ալպյան դաշտավել):

Զիբուլուի լեռնալանջերի արոտներում նորմալ արոտաժամը պիտի համարել հունիսից մինչև սեպտեմբերի կեսը: Մարին մասերում տեղ-տեղ կարելի յե անասունը ժամանակավորապես արոտի հանել նաև մայսին: Զիբուլուի, Բողվարդի ու Փամբակի, ինչպես և գրանցից զեպի արևելք ու հարավ-արեւելք ընկած լեռնաշղթաների, նաև ՄաղրաԳյունեյի համար արոտոգտաղործման ժամկետներ պետք և հաստատել, յելնելով հարավային լանջերի կենսաբանական յուրահատուկ ռեժիմից: Արոտների ոգտագործման ժամկետները հիմնված պետք և լինեն նրանց բուսականության կյանքի նկատմամբ արված դիտողությունների վրա:

Զիբուլուի արոտներին են միանում խոտհարքներ՝ հյուսիսում, կողման հարթավայրի սահմանակից մասում (նկարագրվեց Ղարախաչի արոտներին նվիրված գլխում) և Փամբակի հովիտներում: Վերջիններին մեջ պիտի արարերել խոտհարքների հետեւալ տիպերը:

Լեռնաշղթայի արևելյան լանջերին ընկած յենթալպյան խոտհարքները մեծ մասամբ կոչտ լայնատերև բաղմատեսակ չորախոտ են տալիս, վորը տեղ-տեղ վնասակար և դառնում՝ անդուսի, բիչի ու վարդակակաչի խառնուրդի պատճառով: Այստեղ մի քանի խոտհարքներ հարուստ են վայրի սիստրով, վորը փչացնում է կաթը: Ավելի քնքուչ ու լավ խոտաղգիներով (վողնախոտ ու տիմոֆեյեվկա) հարուստ են այն խոտհարքները, վորնք ընկած են հարավայրին լանջի պաշտպանված հեղեղատներում: Պետք է նշել, վոր Փամբակի հովիտում (Նաւանդ, Համամլու) ջրովի խոտհարքների յուրահատուկ մի տիպ կա, վորը բավական առատ չոր խոտ և տալիս, սակայն այնքան լավորակ չե, վորովնետեսե նրա մեջ շատ կան բոշին և լավ չուտփող ու նույնիսկ վնասակար սուտ-սեղի տեսակները: Առանձին տեղ են բոնում մի քանի հին ցելատեղերը, վորնք ամբողջովին ծածկվում են վայրի կորնդանով: Այս հոտը յերբեմն բուսակազմի 60 տոկոսն է կազմում (որինակ՝ Ղարաքիլսայի մոտ): Խոտհարքների միջին բերքատվությունն այստեղ հեկտարին 2—2½ տոննի յե հասնում, իսկ բարձրախոտ ու վոսողվող վայրերում՝ նույնիսկ 4 տոննի: Վերջիններս ամբողջ խոտհարքների մոտ կեսըն կազմում: Խոտհարքների ամբողջ տարածությունը Ղարաքիլսայի այժմյան շրջանում մոտ 6·000 հեկտար պիտի համարել:

Արոտների բնույթագրման հիման վրա բարեկավման միջոցներից պի-

տի նցել նույնը, ինչ նշվել ե Հյուսիս արևելյան Հայաստանի մյուս արոտների նկատմամբ։ Հյուսիսային լանջերի վոչ զառիվայր ու քիչ թեքություն ունեցող արոտները կարելի յե փոցիսել ու պարագացնել։ Այսպիսի վայրերը Զիրուխլուի արոտաղանդվածի մոտ 30 տոկոսն են կազմում։ Մնացած մասում, ուժեղ թեքության ու ճիմի թուլության պատճառով, պիտի բավականանալ արածեցման ու հանդիսա տալու աւայիտնալ ձեռնարկումներով, վորոնք այսուեղ չոչափելի արդյունքներ կտան։ Արոտաղանդվածի շատ մասերում վնասակար ու թունավոր խոտերի առատությունն անհրաժեշտ է դարձնում, վորպեսզի մոլախոտերի դեմ պայքար մղվի՝ նրանց ուղղակի արմատահանելու և պարբերաբար հնձելու միջոցով։ Այս վերջինը նույն չափով նաև խոտհարք ներին և վերաբերվում, վորոնց նկատմամբ ըլովի վայրերում խնամք պետք ե տարսի, վորպեսզի վոռողելիս ճահճացում չառաջանա և բոշ-իները չտարածվեն։

Արդի վիճակում տավարարությունների նորմալ բեռնավորումը պիտի ընդունել 0.6—0.8 գլուխ, իսկ վոչխարարություններինը՝ վոչ ավելի քան 3—4 գլուխ մի հեկտարին։ Անկառած արածեցման կարգավորումն ու բարելավումները հնարավորություն կտան բեռնավորումը բարձրացնել մեկ հեկտարին մինչեւ 1—1.2 գլուխ տավարի և 5—6 գլուխ վոչխարի համար։ Հյուսիսային լանջերին ընկած արոտների կեսը կարելի յե խոտհարք դարձնել։ Իսկ նկարագրված ամբողջ արոտաղանդվածի մոտ 20 տոկոսը կարելի յե խոտհարք դարձնել։

## ԱՐԱԳԱԾԻ ԱՐՈՏՆԵՐԻ

Արագածի լեռնարոտային գոտին մեկուսացած խիստ գծագրված ու քեռնային մի զանդված ե, վորը քիչ թե շատ մոտ է կանոնավոր շրջանի, վորի արագագիծն արեմուտքից-արեկէք մի փորքը ձգված է։ Արագածի արոտների ընդհանուր տարածությունը, ներառյալ նաև նրա կենտրոնական ասավել բարձր ժայռամասը 56,360 հեկտար է (1931 թ.)։ Դրանից 17,110, հեկտարն անպետք ե, ուրեմն պիտանի տարածությունը 39,250 հեկտար է։ Արագածի արոտաղանդվածը վարչականորեն բաժանված է Ապարանի, Աշտարակի, Արթիկի և Թալինի շրջանների մեջ։ Ապարանի շրջանում գտնվում է 23,124 հեկտար, Աշտարակի շրջանում՝ 10,009 հեկտար, Թալինի շրջանում՝ 13,201 հեկտար և Արթիկի շրջանում՝ 10,026 հեկտար։

Արագածի արոտային տարածությունները գլխավորապես իրենց կեց գյուղերի բնակչության ոգտագործության տակ են, մասամբ ել լենինականի, Վաղարշապատի շրջանների գյուղերի, վորոնք ուղիղ գծով ամենաշատը 15—18 կիլոմետրություն ունեն։

Արագածը հանդած հրաբուխների մի սիստեմ է՝ նվազ թեքություն ունեցող լանջերով, վորոնցից վերև՝ կենտրոնում բարձրանում են ժայռերի բարձր մասսաներ։ Արագածի պետարուները (ամառային) միջին թվով սկսվում են 2000 մետր բարձրությունից, իսկ տեղ-տեղ քիչ ավելի շաճրից։ Արագածի գագաթի ամենաբարձր կետը ծովի մակերեսութիւնը 4095 մետր բարձրություն ունի, նա Խորհրդային Հայաստանի ամենաբարձր լեռնազալաթն է։ Ոգտագործման համար պիտանի արտային տարածությունն Արագածում փաստորեն վերջանում է մոտ 2300 մետր բարձրության վրա։ Դրանից բարձր զառիվեր ժայռերն են սկսվում։ Այս տեղերը յերեմն կարճ ժամանակով միայն վոչխարներ ու այծեր են բարձրանում։ Այսպիսի վայրերն Արագածի արոտային տնտեսության մեջ վո՛չ մի գեր չեն խաղում։

Արագածի արոտների ողտագործման համար պիտանի ամբողջ տարածությունը մեծ մասամբ աննշան թեքություն ունեցող լանջեր են, ուստի վորում Արագածի հարավային լանջերն ավելի մեղմ են։ Հարավային ուղղությամբ գագաթից դեպի փեշերն իջնող ձորերով Արագածը բանված է առանձին մասերի։ Զորերից մի քանիսն այնքան խորն են, որ առանձին հատվածների միջև հաղորդակցությունը չափազանց լժվար է։

Արագածի հարավային կիշերն անմիջականորեն մոտենում էն անցաման (գալնանային) ու ձմեռային արոտներին : Արագածի պետարոտների տերիտորիան համեմատաբար նեղ արոտաչերտով բաժանվում է Սարդարաբատի ձմեռային արոտներից : Այս շերտը գլխավորապես զյուղերին հատկացված հողերն են : Չափազմանց յերկարածության ու կլիմայական բարձրականության համապատասխան՝ Արագածի հողակազմը հարավային լանջի ստորոտում ու գաղաթի մոտերքում խիստ տարրեր են : Հարավային ստորոտին կիսվ մոտենում են շագանակագույն հողերի շերտը, վորը պլրով . Գալստյանի կաղմած քարտեղի համաձայն, վորխարինիվում և սեահողի նեղ շերտով . սրան հաջորդում են լեռնամարդադենային հողերը, վորոնք գաղաթի մոտերքում զառնում են տորֆախան ու տորֆային : Արևելքից, արևմուտքից ու հյուսիսից Արագածի զանգվածի լանջերը լեռնամարդադենային հող ունեն, իսկ լեռան հիմքի չուրջը լայն գոտիով շրջապատել և լեռնամարդադենային սեահողը : Հարավային լանջերի հողային ծածկը նուր ե, տեղ-տեղ ուժեղ չափով կմախքացած : Մակերեսի քարքարոտությունն այստեղ զգալիորեն ավելի յե, քան հյուսիսային լանջերում, իսկ տեղ-տեղ չափազանց քարքարոտ ե :

Հստ բուսականության բնույթի և ոգտագործման յեղանակների, Արագածի հարավային լանջից մինչև ժայռոտ գաղաթները, կարելի յի հետեւյալ գոտիների բաժանել : Ստորին սահմանից, վոր տեղ-տեղ իջնում և մինչև 1800 մետրի, մինչև 2400 մետր բարձրությունը խիստ չորրային գոտին ե բռնում :

Այստեղի բուսականությունը մարգագետնային չե : Նա գլխավորապես կաղմված և լեռնային քսերոֆիտների և տափաստանի առավել չոր վարիանտների՝ շյուղախոտերի, կելերիայի և մինչև անդամ շյուղախոտառշինդրային խմբակցությունից : Բուսական ծածկը աղքատիկ ե, բայց միապաղաղ չե : Շատ են հոտավետ խոտերը, վորոնցից ամենամեծ դերը խաղում և ուղըր : Արածելու խոտի պիտանիության աստիճանը կախված է խոտաղիների պարունակությունից— գլխավորապես շյուղախոտ ու չորային ընդեղեններ՝ իշառվույտ, վայրի առվույտ և մասամբ կորնդան : Յերկրորդական լեռնածաքերի հյուսիսային լանջերում և ցածրադիր վայրերում տափաստանի զանազան տիպերի ել ավելի խիտ խմբակցություններ են զարգանում :

Արագածի հյուսիսային լանջերում բուսականության այս տիպը տեղ-տեղ բռնորովին չի արտահայտված, իսկ տեղ-տեղ ել նեղ շերտի բնույթ ե կրում, վորը բարձրանում ե մինչև 2100—2200 մետր : Արագածի արոտաղանգվածում այս գոտին ընդամենն ամբողջ տարածության մոտ 25 տոկոսն ե կաղմում : Այս գոտում արոտներն ոգտագործվում են գլխավորապես գարնանը՝ ապրիլց սկսած, յերբ բարձրադիր տարա-

ծությունները գեռ ձյունի տակ են : Ամռան կեսերին այստեղի բուսականությունը չատութեղ կերպով այրվում և արածեցնելը շատ դժվարանում է, թեև կերի պակասն ու արոտային տարածության սակավությունն ստիպում են ամառն ել այստեղ մնալ : Այս ամբողջ գոտու արոտների ընդհանուր արտադրականությունը թույլ չի տալիս հեկտարին 3—3½ գլխից ավելի վոշխար պահել ներքեւի մասում և մինչև չորս դլուխ՝ վերին մասում :

Այս գոտուց վերև ընկած է Արագածի արոտային գլխավոր գոտին, վորտեղ հարավային լանջերի բուսականությունն այնքան ուժեղ չի արվում, իսկ հյուսիսային լանջերում համարյա վոչ մի տեղ չի այրվում : Այս գոտին բնորոշվում է բուսականության ավելի փարթամ աճմամբ՝ ավելի խիտ ու միապաղաղ, իսկ հյուսիսում տեղ-տեղ բոլորովին միապաղաղ բուսածածկով : Արա հետ միասին բուսականությունն այստեղ սննդարար և արդյունավետ ե : Այս գոտին սկսվում է 2400 մետր բարձրությունից՝ հարվային և 2100—2200 մետրից՝ հյուսիսային լանջերում և բարձրանում և մոտավորապես մինչև 3000 մետր : Հարավային ու հյուսիսային լանջերի բուսականությունն իրարից խիստ տարբեր են : Հարավում այս գոտու ստորին մասերում բուսականությունը նման է ստորին գոտու բուսականության, միայն թե նրանից տարրերվում է խտությամբ ու միապաղությամբ : Ավելի վերեօւմ բուսականությունն անցնում և տափաստանի ավելի քիչ քսերոֆիլ վարդանտներին՝ վետրախոտային ու բաղմախոտային տիպերից ալպյան մարգագետինների ավելի չորասեր տիպին անցնելով : Այստեղ կան հետեւյալ խոտաղլիներ՝ ուղիղ ցորնուկ, կովկասյան կելերիա, լեռնային կորընդաններ և այլն : Այս տիպը արոտային միջին գոտու վերին մասում առավել տարածված է : Հարավում զա սկսվում է 2600 մետրից, իսկ հյուսիսում՝ 2400—2500 մետրից՝ աստիճանաբար մինչև 3000 մետր բարձրության ալպյան ցածր մարգագետնի անցնելով : Արագածի բոլոր լանջերում արոտային այս միջին գոտին առավել տարածված հանդիսանուով, Արագածի արոտների ամբողջ տերիտորիայի 60 տոկոսն ե կաղմում :

Այս գոտու արդյունավետ լինելը հնարավորություն է տալիս ավելի բարձր բեռնավորում ընդունել, չնորհիվ բուսականության բարվականացնականի դարգացման ու բարենպաստ ուղելեփի : Բեռնավորումը հարավային լանջերում հասնում է հեկտարին 5—6 գլուխ վոչխարի, իսկ հյուսիսային կողմում՝ 7 կամ նույնիսկ 7½ գլուխարի : Կարելի յի առել, վոր Արագածի միջին գոտին հայատանի բոլոր վոչխարաբուների մեջ տմենից արդյունավետն ե :

Այս գոտու հյուսիսային հատվածներում բուսականությունն այնքան չափ ե զարգանում, վոր վորոշ տարածություններ ամբողջովին խո-

շոր տավարի արոտ կարող են դառնալ: Ամբողջ միջին դոտում խոռն զդալի առկոսով կազմված ե լեռնային մարդագետնային խոտազդիներեց ուղիղ փետրախոտ, կերերիս, դաշտավել, մարդագետնային չյուղա- խոտ և այլն: Գոտու ստորին մասերում դրանց խառնվում են նաև տա- փաստանային տարրեր: Շատ առատ են այստեղ ընդեղենները, հատ- կապես յերեքնուկները, որանցից գլխավորապես վարդագույնները: Ա- վելի զառիվեր լանջերում ու հովիտներում զարդանում են լայնատերե- խոտեր, վորոնք ավելի կոշտ են և քիչ ախորժակով են արածվում: Ա- վելի խոնավ ձորակներում տեղ-տեղ բավական շատ պատահում են ան- դուններ, իսկ մի քանի տեղերում նաև բիշ (հարավային լանջում վոչ մի տեղ չքիտամի չի նկատված): Վերին մասում բուսականությունն ավելի արդյունավետ ե և անցումն ե կազմում դեպի հաջորդ՝ ալպյան դոտին: Այստեղ, նայած լանջերին, տարբերությունները նույնպես ուժեղ չա- փոյթուլանում են:

Արագածի նման է Արայի լեռը, վորը գտնվում ե նրանից արևելք, Աշտարակի շրջանում: Արայի լեռան արոտային զանդվածը մեծ չե, ունի 1673 հեկտար տարածություն: Արայի լեռը մեկուսացած հրաբխային կոնուս ե, վորը 2610 մետր բարձրության ե հասնում: Ուլյեֆի նույն հարաբերությունները մինիատյուր ներկայացնելով, նաև նույն բու- սականությունն ունենալով, Արայի լեռը տարբերվում է Արագածից նախ և առաջ ավելի մեծ թեքությունն ունեցող լանջերով և ապա նրա- նով, վոր հյուսիսից նրան միանում ե անտառը: Սրան ել համապատաս- խան արոտային դոտու ստորին մասի բուսականությունը մասամբ ան- տառային մարդագետինների բնույթ ե ստանում: Արայի լեռան բոլոր արոտները մոտակա գյուղերի բնակչությունն ե ոգտագործում:

Արայի լեռան արոտները բոլոր լանջերում նման են Արագածի հա- մապատասխան արոտներին և դրա համար ել Արագածի վերաբերմամբ տրված բոլոր յեղբափակումներն ու նկատառումները հավասար չափով կարող են մակարերին նաև Արայի լեռան:

Արագածի հյուսիսային լանջերում, ավելի ճիշտ նրա այն կիսում, վորի առաջմանը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք անցնող տրամադին ե կազմում, տավարին հատկացվող տարածությունը մի- ջին դոտու ամբողջ հյուսիսային հատվածի մոտ կեսը, այսինքն Արա- գածի պետարանների մոտ 15 տոկոսն ե կազմում: Յեթե դրան ավելաց- նանք նաև ստորին ու վերին գոտիների տարածություններից վորոշ քա- նակ, ապա տավարի համար պիտանի տարածությունն Արագածի ամբողջ արոտների 25 տոկոսը կեալիքի: Այս տարածությունը համարյա ամբող- ջովին կենտրոնացած ե զանդվածի հյուսիսային և գլխավորապես հյու- սիս-արևելյան մասում, Ապարանի և մասամբ Աշտարակի ու Արթիկի շրջաններում: Յուրաքանչյուր հեկտարի նորմալ բեռնագորումը կարելի

յի ընդունել 1—1½ գլուխ տավար: Նվազ արտադրականություն ունե- ցող արոտամասերն ավելի լավ ե վորպես վոչխարարոտ ոգտագործել: Արագածի վերին, գուտ ալպյան գոտին ցածրախոտ ալպյան բու- սակնություն ունի, վոր մեկ-մեկ ընդհատվում և քարակույտերով: Հյուսիսային ու հարավային լանջերի տարբերությունն այստեղ համար- յա վերանում է: Այստեղ ախրապետող են խոտազդի-բոչխային տիպերը (չյուղախոտ, կերի տեսակետով արժեքավոր ալպյան բոչխերի հետ) տեղ-տեղ նաև խայտարդետ խոտային տիպերը՝ առատ ոնդղարար հո- վանոցավորներով (Կովկասյան քեմոն, Chamaesciadium օճառ և այլն): Այստեղ շատ են նաև բարդածաղիկները, վորոնք լավ կեր են հանդիսա- նում: Փարթամ աճում են ընդեղենները՝ վարդագույն յերեքնուկը և Ախալքալակի առվույյը: Ավելի շատ տրորված վայրերում աճում են դաշտաթիթի թափ տեսակները: Հաճախ կարելի յե նկատել, թե ինչպես բազմախոտ խայտարդետ արոտը աճում վերջին վեր և ածվում զուտ գայլաթաթի թիուտի, իսկ գայլաթաթին անառունն սկսում և ուտել աշ- նանը, այն ել վոչ սիրով: Արագածի վերին, մասամբ նաև միջին գոտի- ներում ուժեղ թշնամի յե հանդիսանում փշախոտը, վորը հատկապես հյուսիսային լանջում բավական մեծ տարածություններ ե բռնում: Անասունը փշախոտ բոլորովին չի ուտում: Վերին և գլխավորապես մի- ջին դոտու սաստիկ տրորված արոտներում (գլխավորապես հյուսիս- յին լանջերում) բնական զանազան խմբակցություններով զարգանում է կոշտ չյուղախոտը, վոր խոչըրակույտ ճիմեր ե կազմում և վորի տե- րեներն անասունն ուտում ե բույսի շատ մատաղ հասակում միայն: Այս անցանկալի խոտազդու, ինչպես և փշախոտի տարածումը կապ ու- նի Արագածի արոտների գերբեռնվածության ու արորվածության հետ: Ներկայումս կարելի յե ասել, վոր Արագածի վերին ու միջին գոտինե- րում տարածության ավելի քան 25 տոկոսի վրա մեծ կամ վորք չափով տարածված ե փշախոտն ու կոշտ չյուղախոտը, իսկ տարածության 10- տոկոսի վրա այս խոտերն այնքան առատ են, վոր արոտներն ուղղակի վատորակ են դարձնում:

Արագածի վերին՝ ալպյան դոտու ընդհանուր արդյունավետու- թյունը հեկտարին 4—5 գլուխ վոչխար կամ 0,7—0,8 տավար կարել- յե ընդունել: Ալպյան դոտու ամբողջ տարածությունն Արագածի ամ- բողջ արոտազանդվածի մոտ 15 տոկոսն ե կազմում:

Թերեւ հայաստանում վո՞չ մի տեղ հնարավոր չե արոտների մա- կերեսային բարելավումն այնքան լայն չափերով ոգտագործել, ինչպես Արագածում: Արոտային արդյունավետ ամբողջ տարածության վոչ պակաս քան 60—70 տոկոսը կարելի յե փոցինել ու պարարտացնել:

Արագածի արոտները նաև քարից մաքրելու մեծ կարիք են զգում, ուսունանապես հարավային լանջերում: Ամենուրեք պետք ե պայքար-

մղել մոլախոտերի դեմ՝ վորոնք այսակեղ չափաղանց տարածված են:

Արագածի արոտները ջրով բավականին քիչ են ապահովված: Լանջերի առուները խոր ձորերով են հոսում և դրա համար ել անասուն ջրելու համար անհարմար են: Աղբյուր համարյա ամեն տեղ կա, բայց նրանք ջրասակավ են և կարգի բերված չեն: Աղբյուրների կապտաժը և ջրելու համար տեղեր շինելն Արագածի արոտների կենսական հարցերից մեկն է: Մինչեւ այժմ չի պարզված Արագածի ստորերկրյա ջրերի հարցը: Այս հարցի դրական լուծման դեպքում, հեղաշրջում կառաջանա Արագածի արոտների ոգտագործության մեջ և նրանց արդյունավետությունը մի քանի անդամ կավելանա:

Թերեւս Հայաստանի վո՞չ մի արոտաղանդվածում արոտներն ըստ գոտիների և հաջորդաբար ոգտագործելու այնքան գեղեցիկ հնարավորություն չի տալիս, ինչպես Արագածը: Հարավային լանջերում, մաս լիսին, իսկ Հյուսիսային լանջերում հունիսին արոտ բարձրանալով, անասնապահները կարող են սխիմատիկ ճշտությամբ հետեւյ արոտների շերտածն ոգտագործման կանոնին՝ ոգոստոսին ալպյան բարձրություններին հասնելով և ապա սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին ավելի արագ ընթացքով ներքեւ ինչելով:

Արագածը խոտհարքներով այնքան քիչ և ապահովված, վոր միանգամայն չափահովված կարելի յե համարել: Հարավային կողմից խոտհարքային չնչին տարածություններ կան, դրանք ցրված են և ընդհանուր առմամբ հաղիլ թե 500—600 հեկտար լինեն: Ապարանի չըջանի մեջ մտնող արոտներին կից կա ալելի քան 1000 հեկտար խոտհարք, վորոնք մեծ մասամբ բաղմախոտ տափաստանային են: Դրանց բերքատվության մասին շատ քիչ տվյալներ կան: Նկատի առնելով տեղի կլիման ու հողը, դրանց բերքատվությունը հեկտարին 2—2 $\frac{1}{4}$  տոնն կարելի յե ընդունել: Ինչ վերաբերում է Արագածի արոտների վորոշ մասը խոտհարք դարձնելուն, ապա այս հնարավոր և միայն հյուսիսարելյան, մասամբ նաև հյուսիսային լանջերում, այն ել շատ սահմանափակ չափով: Արագածի այն արոտները, վորոնք խոտհարք կարող են դարձել, արոտաղանդվածի ամրող տարածության վոչ ավելի, քան 5 տոկոսը կարող են կազմել: Հարավային մասում խոտհարք դառնալիք արոտներ—բացառությամբ առանձին փոքրիկ կտորների—բոլորովին չեն:

Ս.ՂԱՏԱ.ՅԱ.ՅԻ ԹԱՐՅԱ.ՉՈ.Յ-ՄՈՒՐԽՈՒԶԻ, ՄԱՅՄԵԽ-ԱՌԻՌԻՂ-ԲԱԽԱԿԱՐԻ ՅԵՎ ՄԻՄԱ.ՆՅ.ՅԻ ԱՐԱՏՈ.ՅԻ ԶՈ.ՆԳՎ.Ա.ԾՆԵՐԻ

Արոտային այս զանգվածները հայաստանի հյուսիսային ու Հյուսիսարևելյան անկյունումն են գտնվում՝ Դիլիջանի նախկին գավառի տերիտորիայում, մասամբ զբաղելով նաև Սևանի նախկին գավառի հյուսիսային մասը:

1. Արտասահմանի արոտներն ընկած են համանուն գետի ձախ ափին գտնվող համանուն լեռնաշղթայի վրա: Ընդհանուր առմամբ դրանց տարածությունը 23,363 հեկտար է: Սրանից Ալահարդու շրջանում ե գտնվում 6,377, Դիլիջանի շրջանում 1,870 և Իջևանի շրջանում 15,116 հեկտար: Սրան պիտի միացնել նաև Կոշա-Հաշարի արոտային շրջանը, վորը 3240 հեկտար տարածություն ունի և գտնվում է լեռնային նույն սիստեմի արևմայսն ծայրում՝ Ղարաքիլիսայի շրջանի սահմաններում:

2. Մայմեխ-Սոյուղբուլաղի արոտները բոնում են Սևանի հյուսիսային ու արևելյան ափերի յերկարությունը ձգվուծ Շահդաղի (Արեգունի) լեռնաշղթայի հյուսիսարևմտյան ծայրը, Դիլիջանի շրջանի սահմաններում՝ 7,075 հեկտար տարածությամբ:

3. Թարասչայ-Մուրխուզի արոտները բաղկացած են յերկու արոտապահնդվածից, վորոնք Թարսաչայի վերին հոսանքով իրարից բաժանված են: Այս զանգվածներից մեկն ընկած և Թարսաչայի աջ ափին, Մուրխուզի լեռնաշղթայի և նրա ճյուղերի վրա, իսկ մյուսը՝ նույն գետի ձախ ափին, Շահդաղի վրա: Արոտային այս շրջանի ընդհանուր տարածությունը 24,118 հեկտար է, վորից 15,226 հեկտար Դիլիջանի և 8,892 հեկտ: Շամշադինի շրջանում: Այս շրջանին պիտի ավելացնել նաև նրան հարավից միացնել Արեգունու (Գյունեյի) ձմեռային արոտները (Դիլիջանի շրջանում), վորոնք այժմ 1,889 հեկտար են:

4. Միսխանայի արոտային շրջանը ընկած է համանուն լեռնաշղթայի և նրա ճյուղերի վրա, Աղստափա գետի աջ ափին, նրա վերին հոսանքից գեպի հարավ: Միսխանայի արոտների ընդհանուր տարածությունը 22,643 հեկտար է, վորից Ախտայի շրջանում 14,759, Աղարսնում 1,869 և Ղարաքիլիսայի շրջանում 6,015 հեկտար:

Այս արոտների տեսության ժամանակ դրանց վրա կարելի յե սահմանացնել նաև ըստ ոելյեփի ու բուսականության բնույթի նրանց նման:

Զարին-Դադի և Յեղնահաղոցի արոտային փոքրիկ շրջանները, վորոնք գտնվում են անտառապատ բարձունքների գագաթներին՝ Ալլահվերդու և Իջևանի շրջաններում։ Մրանք ընդհանուր առամբ ընդամենը 364,4 հեկտար տարածություն ունեն։

Արոտային այս բոլոր զանդվածներն ողտագործում են մասամբ տեղական բնակչությունը, մասամբ եւ Աղբբեջանի քոչվորները։ Բատ շրջանների, արոտները հետեւյալ կերպ են բաշխվում տեղական բնակչության ու քոչվորների միջև։

Աղստաֆայի արոտային շրջանում տեղական բնակչությունն ողտագործում է 10,809 հեկտար (46,3 տոկ.), իսկ քոչվորները 12,502 հեկտար (53,7 տոկ.)։ Տեղական ողտագործողները Ալլահվերդու և Իջևանի շրջանների մոտակա դյուզերն են\*։

Մայմիլ-Սոյուղը արոտային շրջանում քոչվորներն ողտագործում են 4,474 հեկտ. (63,2 տոկ.) իսկ տեղացիները՝ 2,651 հեկտար (36,8 տոկ.)։ Տեղական ողտագործողները Դիլիջանի շրջանի մոտակա դյուզերի բնակիչներն են։

Թարսաչայ-Մուրիուզի արոտներից քոչվորների ողտագործման տակ գտնվում են 11,870 հեկտար (49,4 տոկ.), իսկ տեղական բնակչության՝ 12,248 հեկտար (50,6 տոկ.)։ Տեղացի ողտագործողները Դիլիջանի ու Շամշադինի շրջանի մոտակա դյուզերն են։ Դիլիջանի շրջանում այս դյուզերը գտնվում են Թարսաչայի հովտում և արոտներին ամիջական հարեւան են, իսկ Շամշադինի շրջանում գտնվում են արոտներից 15—20 կիլոմետր հեռու։

Միխանայի արոտներից քոչվորներին հատկացված է 10,662 հեկտար կամ (47 տոկ.), իսկ տեղական բնակչությանը՝ 11,981 հեկտար (53,0 տոկ.)։ Տեղական ողտագործողները Ապարանի, Ղարաքիլիսայի և Ախուայի շրջանների դյուզերն են։ Վերջին շրջանում դյուզերն արոտներից 10—15 կիլոմետր հեռու յեն ընկած, իսկ առաջին յերկու շրջաններում՝ ավելի մոտիկ են։

Արոտային շրջանների այս ամբողջ սիստեմում արոտների տարածության մոտ 50 տոկոսը քոչվորները և մոտավորապես նույնքան եւ տեղացիներն են ողտագործում։

Այս գլխում նկարագրվող արոտային զանդվածների ամբողջ խումբը գտնվում է 2000—2700 մետր բարձրության վրա։ Միայն առանձին գալաթներ կան, վոր գերազանցում են այս բարձրությանը։ Այս սիստեմի մեջ մտնող բարձունքները բնորոշվում են չափազանց թեք ու ապառաժու հարավային լանջերով և խորը կտրտված ձորերով։ Հյու-

սիսային լանջը պակաս թեքություն, նաև գագաթային հարթ տարածություններ ունի, վորոնց վրա բարձրանում են քարքարոս առանձին գլուխներն ու կոնուսները։

Այս արոտների բնորոշ առանձնահատկությունն այն է, վոր բոլոր զանդվածների հյուսիսային, իսկ Աղստաֆայի և մասամբ Միխանայի նաև հարավային լանջերի ստորին մասերն անտառապատ են։ Անտառի և արոտների միջև ձգվում է, թեև վոչ ամենուրեք, խոտհարքների շերտը։ Այս արոտատեղերում հարավային և հյուսիսային լանջերի բուսականությունն ամենուրեք իրարից խիստ տարբերվում է։

Հյուսիսային լանջերի մարգագետնային մասում, վորը գտնվում է անտառից վերև, ստորին շերտի խոտակազմը զգալի չափով անտառային տարրեր և յենթալպյան բազմախոտություն և պարունակում, վոր տեղեղեղ բարձրախոտի բնույթը ունի։ Այս արոտամասերն ըստ եյության խոտհարք են, բայց հաճախ վորակես արոտ են ողտագործվում և խոտայի ավելի շատ և վոտահարվում։ Դրանից վերև ընկած և յենթալպյան մարգագետինների շերտը, վորակեղ ամենուրեք դերիշում և բազմախոտությունը։ Թեև այստեղ ընդեղենները հանձինս սովորական բարձրալեռ յերեքնուկների բավական առատ են, բայց խոտազգիների վոչ բավարար պարունակությունն այս արոտների եյական պակասությունն է հանդիսանում։ Ծնդհանրավես նույնպիսի բազմախոտ են հանդիսանում նաև ալպյան արոտները, վորոնք մեծ մասամբ քարքարոս են և միայն սակավ դեպքերում մեծ տարածությամբ միապաղազ ճմակալված են։ Այստեղի բազմախոտությունն ավելի արժեքավոր է և զգալի մասով կաղմացած և սննդարար ու շատ լավ արածվող ալպյան հովանոցավորներից ու բարդածաղիկներից, այլև ընդեղեններից և առվուտից։ Հյուսիսայիններ հակառակ, հարավային լանջերն այնպիսի բուսականություն ունեն, վոր ստորին մասում կարող և անվանվել լեռնատափաստանային, իսկ վերին մասում՝ յենթալպյան մարգագետինները սկսերովիլ տարատեսակով։ Ստորին գոտում արոտների ու խոտհարքների մեջ պատահում են տափաստանների այնպիսի բնորոշ բույսեր, ինչպիսիք են փետրախոտը և լեռնատափաստանային տարածությունների տիպիկ ճմակալողը։ Թօս օճուա մաս Հարավային լանջերում կան չառ ըրթունքածաղկավորներ, ընդեղեններից առվույուր, կորնպանը, մկնամրգին, իսկ յերեքնուկներից գլխավորապես ալպյան յերեքնուկը։ Ամենուրեք յերեքնում է լեռնատափաստանային բույսը, իսկ խոտազգիներից վճռական տիրապետման աստիճանի յե հասնում շյուղախոտն ու կելերին։

Հյուսիսային լանջերի հողերն ավելի ուժեղ են, ստորին մասերում անտառային, իսկ վերին, առավելաւու լեռնամարգագետնային մասե-

\* Իջևանի և Ալլահվերդու շրջանների գորոշ գյուղեր իրենց սպասարքության գոտիներ, Աղստաֆայի արոտներից 15—20 կիլոմետր հեռավորության վրա յե-

բում՝ ճմային : Հարավային լանջերի հողը մաքաղետնային սևահողերի նման է ու խճում : Հարավային ավելի թեք, չոր ու թույլ հողածածկ ու նեցող լանջերում, չնայած ճմակալող այնպիսի բույսերի ներկայության, ինչպիսին շյուղախոտն է, ճիմը համարյա յերեք միապաղաղ չի լինում և մեծ մասամբ կտրտված է : Հողային ծածկն ուժեղ կերպով խախտված, խոկ տեղ-տեղ մեծ տարածություններով պոկված ու վոչչացված է : Բուսականությունը միապաղաղ չե և նոորացած ու բավական սակավ է :

Եթե նկարագրվող արոտների հյուսիսային ու հարավային լանջերի բուսականությունն իրար հետ համեմատենք, ապա հյուսիսային լանջերում աչքի յե զարնվում բուսականության ավելի փարթամություն ու բերքատվություն, այլև ճիմի ու հողային ծածկի ավելի լավ պահպանություն : Հարավային լանջերը հակառակ պատկեր են ներկայացնում : Բայց պետք են նշել, վոր այստեղ ել (որինակ՝ Մաղրա-Գյունեյում) բնակչությունն ըստ յերեսութիւն վոչ անհիմն կերպով ավելի արժեք ե տարչիս աղքատիկ, արորված ու քիչ բերքատու հարավային, քան փարթամ խոտակաղմ ունեցող հյուսիսային լանջերին : Այն հանգամանքը, վոր հյուսիս . լանջերում տիրապետողը լայնատերեք բազմախոտությունն ե՝ անտառային տարրերի հետ խառը, վորն անսառւնը սիրով չի ուտում և վորը քիչ մննդարար է, ինչենում և հյուսիսային լանջերի արոտների արժեքը : Գորտնուելի, իսկ ստորին մասում բիշի և անդուսի առատությունը հյուսիսային վորոշ արոտաչքանները նույնիսկ վտանգավոր են դարձնում անասունների առողջության համար : Մի քանի տեղերում փշախոտը բավական մեծ տարածություններ ե բոնում : Այն ինչ հարավային լանջերի լավ արածվող ցածր խոտադինները և լեռնա-տափաստանային բոշխը՝ ընդեղնենների զդալի խառնուրդով լավ ու սննդարար կեր ե հանդիսանում : Կասկածից դուրս ե, վոր հարավային լանջերի բուսականության այժմյան աղքատիկ վիճակն անկման աստիճանի յե հասնում : Իսկ այս առաջ ե դալիս արոտների գերբեռնավորութից ու վոչ ռացիոնալ ողտագործումից :

1926 թվին եքսպեդիցիային հաջողվեց այս հանգամանքը պարզել մի շարք որինակներով : Դիլիջանի շրջանի թուլուջա և իջևանի շրջանի վերին Աղդան գյուղերի արոտները խիստ նման բուսակաղմ, ուելյեփ ու տեղադրություն ունեն (հարավ-արևելյան լանջ եր), սակայն անասունների բեռնավորումով նրանք իրարից տարբերվում են : Վերջին հանգամանքի հետևանքով այս յերկու գյուղերի արոտները ճմային շերտի պահանջածությամբ իրարից տարբերվում են : Խոտակաղմը բաղկացած է քսերոֆիլի խոտադիններից ու նույնպիսի բազմախոտներից, վորի մեջ գերակշռում են շյուղախոտն ու լեռնատափաստանային բոշխը : Թոխուջայի արոտներում խոտը միապաղաղ, խիտ, առատ և այնքան բարձր է, վոր տեղ-տեղ կարելի յե հնձել : Այնինչ վերին Աղդանի արոտներում

խոտն աղքատիկ է, ցածր ու նոորացած և չորասեր կիսաթփերով—մուստաված :

Այսպիսի որինակներ այս ըլջանում չատ կան : Պարզ է, վոր խելացի շահագործման ու խնամքի դեպքում հարավային լանջերը չափազանց արժեքավոր կերպի տարածություններ կհանդիսանան :

Բուսականության նկարագրած բնույթի հետևանքով արտօներն ըստ անասունի տեսակի բաշխեն ել յուրահատուկ բնույթ և կրում այստեղ : Ներկայումս հարավային լանջերում համարյա ամենուրեք, Աղստաֆայի ու Միխանայի մի մասի բացառությամբ, միայն վոշխար կարելի յե արածացնել, այն ել գո՛չ մեծ քանակով ավելի բարեկեցիկ արոտներում հետարին գուռիս, իսկ տրորվածներում՝ 2—3 գլուխ : Հյուսիսային ավելի խոտառատ, բայց իրենց բնույթով պակաս լավորակ լանջերը, չատ թեք ու քարքարոտ արոտամասերի բացառությամբ, կարող են հատկացվել խոչոր յեղջուրավոր անասունների : Այստեղ հեկտարին 0,6—0,8, իսկ տեղ-տեղ Միխանայում, մասամբ նաև Աղստաֆայում) նաև 1 գլուխ տավարի բեռնավորում կարելի յե տալ :

Պաշտոնական ավյաներով արոտների նկարագրվող խմբում անպետք տարածությունն ամբողջ տերիտորիայի միայն 5,3 տոկոսն է կազմում : Բայց 1926 թ. հետազոտությունները պիտօնի և հարմար համարվող արոտներում յերեան բերին արոտի համար անպետք մեծ տարածություններ, վորոնք արդյունք են ճմային ծածկի քայլայման, վորը տարեց տարի ավելանում է : Արոտի համար անհարմար ամբողջ տարածությունը փաստորեն վոչ մի կերպ 10 տոկոսից պակաս չե : Դրա համար ել բեռնավորման ավելացումը թույլատրելը վոչ մի կերպ հնարավոր չե : Կանոնավոր արոտաշնարարության գելքում անկասկած կդժնվեն արոտամասեր, վորոնք կարող են գիմանալ նաև ավելի բեռնավորման՝ 1,2—1,3 գլուխ տավարի չափով :

Շատ անկանոն վիճակի մեջ են արոտների ողտագործման ժամկետները : Տեղ-տեղ հարավային լանջերում, վորոնք ձյունից չուտ են աղատվում, անասունն արոտ և բարձրանում ապրիլից, իսկ մայիսին արդեն չատ արոտամասեր անասուններով բոնված են լինում : Դեպի հյուսիսային լանջերը զդալի ուշ են անասունը փոխադրում : Այսպիսով, հարավային ավելի աղքատիկ ու վտանգված արոտամասերը փաստորեն ավելի չատ են բեռնավորվում, քան հյուսիսային արոտամասերը : Այսպիս ել, ինչպես նաև Մաղրա-Գյունեյում, անհրաժեշտ ե բուսականության զարգացման տեսական ուսումնասիրության հիման վրա ողտագործման տարբեր ժամկետների արոտամասերը ջոկել, սկսած իսկական ամառայինից մինչև իսկական ձմեռայինը՝ Գյունեյի տիպի արոտները, վորտեղ կարելի յե արածացնել հոկտեմբերից մինչև մայիս :

Այստեղ ձմեռային արոտներ են համարվում առավել զերժություն

ստացող և ձյունից շուր ազատվող արեգունի լանջերը՝ լեռնային քսերոֆիլ տիպի աղքատիկ ու սակավ սննդաբար բուսականությամբ: Բացի ձմեռային այս արոտներից, սարից բերված անասունների մեծ մասը ձմեռն անց է կացնում այսպես կոչված ձմեռանոցներում, այսինքն՝ անտառային բացատներում: Հայաստանում բացի այս շրջանից անտառային ձմեռանոցներ կան նաև Զանգեղուրում: Անտառային վարչության տվյալների համաձայն, ամբողջ Հայաստանում 1929 թ. յեղել է 471 ձմեռանոց, վորտեղ ընդամենն արածել է 34,000 գլուխ անասուն (խոշորի վերածած): Պաշտոնապես ձմեռանոցներին հատկացված տերիտորիայի ընդհանուր տարածությունը 1500—2000 հեկտարից ավելի չե: Բնական ե, վոր անտունը չի կարող մնալ միայն ձմեռանոցի նեղ տերիտորիայում և պիտի թափառի շրջակա անտառներում:

Երջանի վերոհիշյալ բնական առանձնահատկությունները թույլ են տալիս մոտավորապես նշել արոտային տարածություններն ըստ անասունների տեսակների բաշխելու հետեւյալ չափերը: Աղստաֆայի արտների հարավային լանջերը նվազ քսերոֆիլ լինելու պատճառով խոչոր անասունների արոտի համար ավելի հնարավորություններ են տալիս: Արտօտային տարածության մոտ 20 տոկոսը կազմող շատ թեք լանջերը, վորոնք գլխավորապես արոտավանդվածի հարավում ու հարավ-արևելքում են կենտրոնացած, վոչխարարուներ են: Նույնը կարելի յե ասել նաև Միսիանայի մասին: Ավելի քիչ հնարավորություններ են ներկայացնում թարսաչայ-մուրիսուղի և Մայմեխ Սոյուղբուղադի շրջանները, վորոնք իրենց հյուսիսային լանջերում խոչը անասուններին արոտ կարող են տալ ամրող տարածության 40—60 տոկոսի չափով միայն: Սրանց հարավային լանջերի ստորին մասերը (ձմեռային Գյունեյը) համարյա ամբողջովին վոչխարարուտ ե: Պետք է նկատել սակայն, վոր հարավային լանջերում ողտագործումը ուացինալ հիմքերի վրա դնելու և առավել ուժասպառված տարածություններին հանդիստ տալու դեպքում, նրանց ավելի պակաս զարիվեր տարածությունների 30—40 տոկոսը խոչը անասունների արոտների կարելի յե վերածել:

Ինչ վերաբերում է խոտհարքներին, ապա նկարագրվող շրջանները դրանցով անհամեմատ ավելի մեծ չափով են ապահովված, քան մյուսները: Կենտվիճակը 1925 թ. տվյալներով, Դիլիջանի նախկին գավառում մոտ 11,000 հեկտար խոտհարք կար: Դրան պիտի ավելացնել նաև Ղարաբիլսայի և Ախոտայի շրջանների խոտհարքների մոտ կեսը և Ազարանի շրջանի խոտհարքների մոտ մեկ յերրորդը: Այսպիսով, խոտհարքների ընդհանուր տարածությունը համում է 13,300 հեկտարի: Խոտհարքային մասինքերից անհրաժեշտ է նշել Աղստաֆայինը՝ Աղստաֆա դետի վերին հոսանքում, վոր ողտագործում են վասկեսենովկա, նիկետինությունները, և Կարմիր գյուղի խոտհարքները:

Առաջինները գետի յերկարությամբ ունեն ճահճային խմբակցություններ՝ բոշխի գերիշխանությամբ: Դրանց մի հեկտարի բերքատվությունը հասնում է 3—4 տոնն խիստ ցած վորակ ունեցող չոր խոտի: Լանջերում, նախկին արոտների տեղում Աղստաֆայի խոտհարքներն ունեն անտառային խմբակցություններ և անտառային խոտազդիներ՝ լայնատերեկ բաղմախոտով: Սրանք հեկտարին մինչեւ 2 տոնն, ավելի լավորակ, բայց տեղ-տեղ անդուսով մոլախոտված չոր խոտ են տալիս: Ավելի վերև այս խոտհարքներն ունեն լինային խմբակցություններ՝ աղբխոտով ու քարավույտով: Սրանք հեկտարին նախկին յերկու տիպերից մինչեւ 1½ տոնն ավելի չոր խոտ են տալիս: Սրանց մեջ պատահում են առանձին խոտհարքներ, վորոնց մեջ գերակշռությունը կորնդանը, խակ վոմանց մեջ ել շատ կա մարգագետնային տիմոֆեյելկա:

Կարմիր գյուղի զանգվածի այն խոտհարքները, վորոնք թարսայայի ափին մոտիկ են, նույնպես ճահճացած են և բռնված են գլխավորապես բոշխերով ու ջիլախոտերով: Խոկ հովտի քիչ թեք լանջերին ընկած խոտհարքներն անտառային մարգագետնների բնույթը ունեն՝ ուղիղ խրացուկով, վողնախոտով ու յերեքնուկներով, վորոնք ուժեղ կերպով ու մեծ տարածությամբ մոլախոտված են աքլորբուկով: Հեկտարից ստացվում է 1,4—1,6 տոնն չոր խոտ:

Անտառային սահմանից սկսվող յենթալպյան խոտհարքները գլխավորապես փարթամ ու կոշտ բաղմախոտից են կազմված՝ անտառային ու բարձրախոտ տարրերի հետ խառն: Հեկտարից ստացվում է 2—3 տոնն չոր խոտ, վորը նվազ սննդավետ ե շատ և մոլախոտված թունավոր իսուերով՝ անդուսով ու բիշով:

Արտաներից խոտհարք դարձկելիք տարածությունները նկարագրված շրջաններ բավական շատ են: Յեթե ուշաղը ությունը առնենք բացառապես բնական պայմանները, ապա ընդհանուր առմամբ հյուսիսային բոլոր լանջերը խոտհարքի կարող են վերածվել: Բայց դրանով արոտները շատ կպակասեյին: Դրա համար կարելի յե ընդունել, վոր միջին թվով ամբողջ շրջանի արոտների 20 տոկոսը կարելի յե խոտհարք դարձնել: Տեղ-տեղ, նայած պայմաններին, խոտհարքի վերածվող տարածությունը կարելի յե ավելացնել և հասցնել 30 և ավելի տոկոսի:

Ինչ վերաբերում է արոտների բարելավման ձեռնարկումներին, ապա առաջին հերթին պիտի կարգավորել հարավային լանջերի ողտագործությունը: Ապա պիտի պայքարել մուշխոտերի և թունավոր բույսերի զեմ: Հարավային խիստ ուժասպառված լանջերը կարելի յե քիչ զարանի տեղերում բարելավել թանգարժեք քսերոփիտներ՝ շյուղախոտ, սանրաչայիր և ընդեղղեններ ցանելով, վորպեսդի ավելի արագ ձմակալ:

Փոցխոռմն ու պարարտացումը կարող է հաջողությամբ գործադրովել

խոտհարքներում և ավելի բարձրադիր հարթ արոտամասերում՝ գլխա-  
վորապես Միսխանայում և մասամբ Աղստաֆայի զանգվածում։ Ինչպես  
և ամենուրեք, առավել ակտուալ սլարարտանյութը՝ գոմաղբահյութը  
կարելի յե մեծ քանակով ստանալ՝ քոչտաեղերի ռացիոնալ տեղադրու-  
թյամբ։

Գետերի յերկարությամբ ընկած խոտհարքների դղալի մասը ցամա-  
քեցման կարիք ունեն։

## ՄՈԶՐԱ-ԳՅՈՒՆԵՑԻ (Ա.ԲԵԳՈՒՆՈՒ) ԱՐՈՏՆԵՐԸ

Մազրա-Գյունեցի արոտների անվան տակ հասկացվում է այն նեղ  
չերտերը, վորը Սևանի հյուսիսային ու արևելյան ափով անցնող Շահդա-  
շի (Արեգունի) լեռնաշղթայի զառիվեր լանջերից և գոյանում։

Մազրա-Գյունեցի արոտների հյուսիսային ծայրը, 1,643 հեկտար  
տարածությամբ Դիլիջանի ըրջանումն է, իսկ մնացած 26,804 հեկտարը  
Բասարգեչարի ըրջանումն է։ Մազրա-Գյունեցի արոտների ամբողջ տա-  
րածությունը 28,447 հեկտար է։ Այս տարածությունից 6,400 հեկտարը  
տրվում է Աղբեկանի քոչվորներին, իսկ մնացած տարածությունը մնում  
է տեղական բնակչության ողտաղործման տակ։ Անպետք տարածություն-  
ները Մազրա-Գյունեցի արոտներում 1,574 հեկտար են (5,5%), մնացած  
տարածությունը յերկրորդ ու յերրորդ կատեգորիայի արոտներ են։  
Որոշքափիկ տեսակետով Մազրա-Գյունեցի արոտները գլխավորապես  
չարավարեմտյան ուղղություն ունեցող զառիվեր լանջեր են։ Սրանց  
ստորին սահմանն սկսվում է Սևանի ափից՝ 1925—2250 մետր բարձրու-  
թյամբ, իսկ վերին մասերը հասնում են մինչև 3000 մետր բարձրության։  
Խիստ քարքարոտ ու խճոտ այս լանջերը բարակաշերտ, մեծ մասամբ  
կմախքացած, գլխավորապես լեռնամարգագետնային խճախոր ամպի  
հողեր ունեն։

Մազրա-Գյունեցի արոտների բուսականությունը մեծ մասամբ լեռ-  
նային քսերոֆիլային է։ Յենթալոյյան մարգագետնային Փորմաշիա քի-  
թե չատ զարգացած և միայն վերին մասում, այն ել ստորադաս ընույթ  
ունի։

Լանջի ամենավերին մասում, 2400—2800 մետրից բարձր զարգացող  
ալպյան փոքր մարգագետիններն ել ցրված են և քսերոֆիլ բնույթ ունեն։  
Այստեղ խոտակաղմի արժեքավոր տարրերը գլխավորապես ընդեղենները՝  
մկնամրդենիները, վայրի առվույներն ու կորնդաններն են, իսկ խոտակ-  
ղմներից կա վոչխարի չյուղախոտ, տեղ-տեղ նույնիսկ սանրածե չայիր  
և ուժեղ ճմախոտ։ Տեղ-տեղ չատ ե ոչխնդրի խառնուրդը։

Ճմակալումն ամենուրեք միապաղաղ չի և հաճախ ճիմն ընդհատվում  
է։ Խիստ թեքության, թույլ զարգացած ճիմի և ամառվա յերկրորդ կի-  
մին ամենուրեք նկատվող այրման պատճառով այս արոտների ընդհանուր  
արտադրականությունը մեծ չի։ Նրանց բեռնավորումը կարելի յե ըն-  
դունել հեկտարին 2—3, քիչ տեղում՝ 4 գլուխ վոչխար։ Վոչխարաբու-  
ներն այստեղի արածության 80—90 տոկոսն են բոնում։

Միայն ամելի քիչ զառիվեր ու սպազտպանված վորոշ ձորերի խոտանելը տեղերը լեռնատափաստանային բուսականություն ունեն և ավելի եք են տալիս :

Մաղրա-Գյունեցի արոտներին հարավից խոտհարքներ են միանում : Հնդկունելով, վոր այս խոտհարքները Բասարգէչարի շրջանի խոտհարքների կեսը կամ քիչ ամելին են կազմում, պետք է դրանց տարածությունը չաշվել մոտ 1500—1600 հեկտար : Այս խոտհարքների մի մասը գտնվում է Մաղրայի հարթության վրա՝ Սևանի ճահճացած ափին : Այստեղ ավելի լուսավ մասերում աճում ե բոշին ու ջիլախոտը, իսկ վոչ այնքան խոտնակ ճասերի խոտհարքներում գերիշում ե սոլիտակ ագրխոտուկն ու նրա այլ տեսակները : Արոտների հարավ-արեւելյան անկյունին կից գտնվող խոտհարքներում, վորտեղ ստորերկրյա ջրերը խորն են, գերիշտող և սակավ ադյունավետ լեռնատափաստանային տիպը : Իսկ ավելի մեծ չափով խոնավություն ունեցող տեղերում խոտհարքները մարդագետնային տիպ ունեն՝ խոտագդիների գերիշխումով : Խոտհարքների ընդհանուր արտադրականությունը 2—2½ տոնն է, հազվադեպ միայն 3 տոնն՝ Հեկտարին, չհաշված Մաղրայի չափաղանց արդյունավետ (մինչեւ 5 տոնն), բայց վատորակ ու ճահճացած խոտհարքները : Խոտհարքների արհետական վորովման հնարավորության հարցն այստեղ դեռ շուսաբանված չեն :

Խոտհարքների վերածելի արոտային տարածությունը 10 տոկոսից ավելի չեն, վորի մոտ կեսը դժվար հնձելի զարիվեր լանջերում են գտնվում :

Կերի տարածությունների բարելավման հարցերը Մաղրա-Գյունեցի շրջանում զգալի դժվարությունների յեն հանդիպում :

Զառիվեր լանջերը և բարակաշերտ ու խճոտ հողերը թույլ չեն տարածություն գույնել և վո'չ ել պարարտացնել : Հասարակ ձեռնարկումը՝ բարհավաքը խիստ ցանկալի յեւ : Բայց այն հանդամանքը, վոր արոտները դանվում են զառիվեր լանջերին, ուր ժայռոտ գաղաթաշարքից միշտ չարեր են գլորվում, այս դործը սիզիֆյան աշխատանք ե գարձնում, յեթե միջոցներ ձեռք չառնվեն, վոր այս արոտները թեկուղ նույն այդ քարերով պատճեղվեն, գլորվող քարերի առաջն առնելու համար : Այստեղ ըստ պատճեղվեն, գլորվող քարերի առաջն առնելու համար և ավելի մեծ չափով, քանի Հայաստանի վորեւ այլ վայրերում, տեղին և թե՛ թանդարժեք խոտերի և թե՛ լավ ճմակալողների լրացուցիչ ցանքը : Շատ խճոտ ու փուլվող վայրերում ցանկալի յեւ հենց տեղական այնպիսի խոտագդիների լրացուցիչ ցանքը, վորոնք վլուղման առաջն առնում են : Բնական ճմակալում տեղի ունեցող վայրերում պետք ե ցանել ճմակալող քարովիքիներ, այն և խոտագդիներից՝ չյուղախոտ և ընդեղեններից՝ կորնդան :

Սևանի Արեգունի (Գյունեցի) ափի արոտների բարելավման մասին խոսելիս պետք ե նշել, վոր չնայած հարավային լանջերն արածեցնելու

պդալի դժվարություններին ու նրանց փոքր արդյունավետությանը, արոտների բույր ողտագործողները միաձայն մատնանշում են, թե այս լանջերի խոտագդիների ծածկն ամելի բարձր վորակ ունի, քան հյուսիսային լանջերին ե : Այս հանդամանքը հարկադրում է հատուկ ուշադրություն ըարձնել այժմ այնքան քայլայլված հարավային այս լանջերի բարելավման և արդյունավետության բարձրացման վրա :

Արեգունի ափի արոտների ողտագործման կարգավորման բնագավառում կարեւոր է նորե արոտագտագործման ժամկետների հարցը : Անառունն այստեղ շատ վաղ ե արոտ հանվում : Արդեն ապրիլին ձյունից ակատ տեղերն արածեցվում են : Խոտն այրվելուն գուգընթաց անառունը փոխադրվում է նորանոր բարձր արոտամասեր : Ամռան վերջին հասնում են ալպյան բարունքներին, մասամբ ել ստորին գոտու՝ այրումից ավելի պաշտօնաված արոտամասերին :

Գյուղերին մոտիկ փոքր տարածություններով խական ձմեռային արոտներ ել կան : Արածեցման ժամկետների ճգրիտ կարգավորումը հնարավոր է, առանձին արոտամասերի լուսականության բիոլոգիական ճշգրիտ ուղարկների հիման վրա : Այս ավալները զտնելով են զրագվում, ի միջի այլոց, Գյուղեւթյունների Ակադեմիայի եքսպեդիցիան, վորն այստեղ ստացիոնար աշխատանքներ և կատարում : Այս աշխատանքների արգյունքները պիտի նույթեր տան Գյունեցում արածեցման ձեռքը ռացիոնալ զարգացնելու համար : Կարելի յեւ ասել, սկզբայն, վոր այժմյան յենթալպյան մարգագետնային արոտամասերում հունիսից վաղ արոտ չի կարող սկսվել՝ սեպտեմբերի կեսին արոտը դադարեցնելու պայմանով : Կարող են ջոկվել շուտ աճող քանրովիլ բուսականություն ունեցող արոտամասեր, վորտեղ արոտը կարելի յեւ սկսել գարնանից : Ստացիոնար դիտողաւթյունների ավալների բացակայությունն առայժմ թույլ չեն տարիս այս հարցը ճշգրտել :

Իսկ ինչ վերաբերում է խոտհարքների բարելավմանը, առա առաջին հերթին տուած և գալիս գրանց ջրային ու ժիմի բարելավման հարցը, այսինքն՝ անհրաժեշտ է կիրառել ճահճացած խոտհարքների ցամաքեցում և առափաստանային խոտհարքների փոռություն :

## ԱՐՄԱՂԱՆ-ԱՅՐԻՁԱՅԻ ՄՐՈՏԱԶԱՆԳՎԱԾԲ

Աղմաղանի արոտները և գեղի հարավ զբանց անմիջական շարունակությունը կազմող Այրիջայի արոտները գտնվում են համանուն լեռնաշղթաների վրա, վորոնք ձգվում են Սևանի արևմտյան կողմում, Հյուսիսից-հարավ ձգվող ուղղությամբ՝ իրենց հարավային մասում քիչ գեղի հարավ-արևելք թեքիլով։ Այս արոտների ընդհանուր տարածությունը (1931 թ.) 82,629 հեկտար է։

Այս տարածությունն ըստ արոտային և վարչական չքաղաքացիների հետևյալ կերպ և բաշխվում։ Աղմաղանի արոտներից Ախտայի շրջանում գտնվում է 5,831 հեկտար, Կոտայքում՝ 18,845, Մարտունու շրջանում՝ 6,425, Նոր-Բայազետում՝ 12,098 և Վեդիքասարի շրջանում՝ 6,975, ընդամենը 50,174 հեկտար։ Այրիջայի արոտներից Վեդիքասարի շրջանում գտնվում է 7,434 և Մարտունու շրջանում՝ 25,621 հեկտար, ընդամենը՝ 32,455 հեկտար։

Ամբողջ Աղմաղանը լիովին ողտագործում է տեղական բնակչությունը։ Ողտագործողները հենց արոտներին կից գյուղհամայնքներն են՝ Ախտայի, Ն. Բայրազետի և Մարտունու շրջաններից, այլև Աղմաղանից արևմտյան ընկած այն գյուղերը, վորոնք գտնվում են Կոտայքի, Վաղարշապատի, Ղամարլուի, Վեդիքասարի, Դարալաղյաղի շրջաններում։ Վաղարշապատի, Ղամարլուի և Վեդիքասարի շրջանների վորոշ գյուղեր, վոր անասուն են բներում Աղմաղան, արոտներից բավական հեռու յեն գտնվում՝ ուղիղ գծով մինչև 20 կիլոմետր։

Այրիջայի արոտներից միայն 20,055 հեկտարն (61,8 տոկ.) և գտնը վում տեղացիների ողտագործման տակ, մնացած 12,400 հեկտարը (38,9 տոկոս) տրվում է Խ. Նախիջևանի քոչվորներին։

Աղմաղան-Այրիջայի արոտային զանդվածը սկսվում է 2250—2500 մետր բարձրությունից, ծայր հարավ-արևելյան մասի բացառությամբ, վորտեղ արոտների ստորին սահմանն իջնում է մինչև 2000 մետր։ Արոտների վերին սահմանը բարձրանում է մինչև 3000—3200 մետր, իսկ 3500 մետր բարձրացող գագաթներն արոտի համար անհարմար տարածություններ են և միայն մասամբ վորովես վոչխարարություն են ողտագործում։

Աղմաղանի արևելյան, գեղի Սևանի լիճը տարածված կողմն իր ստորին մասում վոչայնքան թեք լանջեր են ներկայացնում, վորոնք թե՛ խոտհարքներ և թե՛ արոտներ են։ Արոտային մասերում գերիշխում է յեղալպյան տիպի խոտակաղմքը, վորի մեջ տիբապետով և ուղիղ գյուղական գոտիներում է աղմաղանի հարավային մասում գագաթամարտիկական տարածություններ։

Այս կելերիայից կազմված խոտազգիների Փոնդը։ Արոտների այս մասը համապատասխանում է լեռնամարգագետնային սևահողի տեսք ունեցող ճնային հողերին։ Դրանից վերև գալիս ե լանջերի ընդարձակ ու խիստ բարքարուտ մասը։ Այսուեղ խճուտ հողերում զարգանում են զանազան տեսակի յեղալպյան խմբակցություններ՝ ավելի վատթար ախողի բազմախոտով, քան ստորին գոտունն է։ Այս խմբակցություններում կան բարձր քոլեր ունեցող շախմատուրի խոտեր ու բարձրախոտի վնասակար տարրեր՝ ըիչ ու վողախոտ։ Վերին մասում շատ ե զարգացած կոչտ շրուղախոտը։ Էնդեղենների և այլ տեսակի խոտեր քիչ կան։

Ավելի վերեւում լանջը պակաս զարիվեր և դառնում է բուսականությունը նոսրանում ու ցածրախոտ ալպյան և դառնում։ Աղմաղանում ալպյան արոտները մեծ տարածություններ են ըստում և միքանի տիպերով են ներկայացված։ Լավագույն տիպերից են վոչխարի շյուղաբուռն ու կեներիա՝ ուժեղ ու հավասարաշափ ճմակարուով։ Ասլա նույն տիպը ինձային բաշխի խառնությունը։ Այսուեղ իշխում է ալպյան խոտաբոշիքը, կերի լավ հովանոցավորներով ու բարձրածաղկիներով։ Տարածության վոչ ավելի քան 5 տակոսը բոնում է վիշախոտը։ Աղմաղանի հարավային մասում ու Այրիջայում զարգանում են նաև յուրահատուկ ելինային րուտեր, վորոնց մեջ գերիշխում են քիչ արածացվող խմբակցությունները։ Քիչ է տարածվում նաև այն խոտը, վորի մեջ զայլաթաթն է գերիշխում։

Ալպյան գոտին համապատասխանում է լեռնամարգագետնային տորֆային ու տորֆախառն հողերին։ Հարավային ուղղություն ունեցող րուտը գտնվիների բարակ շերտ ու կմախքացած հողեր ունեցող լանջերում աճում է քսերոֆիլ լեռնային տիպի բուսականություն։ Բուսականության այս տիպն առանձնապես դերիշխում է Աղմաղանի հյուսիսային մասում։ Արևմտյան ավելի չոր լանջերում, արոտների ստորին զոտում տիբապետով և տափաստանային բուսականությունը, և ներկայացնում է բաղրախոտ ու չոր տափաստան, վորի հեղեղատներում և ավելի խոնավ տեղերում մարգագետնային բուսականություն ունեցող արոտամասեր կան։

Խոտակաղմի մեջ կան շատ ընդեղեններ՝ առվույտ, կորնդան ու չուրահատուկ յերեքնուկ (Tribolium Rordzilowskyi), վերջինը տալիս է հոկայական մասսա և բավականաչափ մննդարար և (17,6% հում պրոտեին, 2,4% ճարպ, 40,1% անաղոտ եքստր. նյութեր, 30,8% բջանալանթ՝ ծաղկման ժամանակ)։ Այսուեղ կան նաև այլ յերեքնուկներ։ Խօսու վայրերում քսերոֆիտ արոտամասեր շատ կան։

Այսուեղ ևս պատահում են վոչխարի շյուղախոտ—կելերային տափաստանի տիպի արոտներ, վորոնց մեջ կան չոր տափաստանի տարրեր՝ բարձրմենիկ և հարավի այլ խոտեր։ Այս բոլոր խմբակցությունները համապատասխանում են շագանակագույն հողաշերտին, վորը փոխա-

քիում և արեմուտքից գեղի այն կողմ յեկող կիսանապատային դարչնագույն հողերին: Վերեռմ, լեռնամարգագետնային հողերում կելերային տավաստանի շյուղախոտը փոխարինվում և նույն կազմի, բայց արգեն յենթալցան այլ տարբեր և վոչխարի շյուղախոտի այլ ձեեր ունեցող յենթալցան մարգագետնով:

Այսպիսի խմբակցությունները մինչև 2500 մետր և ավելի վեր են բարձրանում և այնտեղ մատնանշված կազմն ունեցող ալպյան մարգագետններով են փոխարինվում: Արևմտյան լանջերում ամենուրեք առատ են ընդելզները:

Բայն Ալպին իր հյուսիսային մասում ընդհանուր գծով նույն ուելյեֆն ու բուսականությունն ունի, ինչ Աղմաղանը: Նրա հարավային ցածրադիր մասն ունի հարթ ու նվազ թեք ունելիք և ընդդրկում և յենթալպյան մարգագետնային բուսականություն ունեցող մեծ տարածություններ: Այդ բուսականությունը վորակես կեր ավելի արժնքավոր է, ինչպես հյուսիսի բուսական կազմից, նույնական և հարավի տափաստանային ու լոռնային քսերոֆիլ տվալի ավելի չըրասեր համակեցություններից:

Բուսական համակեցություններն Աղմաղանում, ինչպես վերն ասածից յերեսում և, շատ բարդ են, վոր այստեղի կլիմայական ու հողային բարդ պայմանների հետևանք է: Դրա համար ել ոդտագործման յենթակա գոտինների կանոնավոր հաջորդականությամբ արածեցումը խիստ կերպով խախտվում և Աղմաղանի արոտներում:

Վերին շերտը՝ 3000 մետրից բարձր ընկած ալպյան մարգագետինները միայն վոչխարների համար են պիտանի, վորոնք չափաղանց ցածր խոտ ունեն և քիչ արդյունավետ են: Ավելի ներքեւում վոչխարի հատուկ շրջաններ կամ գոտիններ զատելը դժվար է, քանի վոր ամբողջ լոռնաշղթայի յերկարությամբ տավարի ու վոչխարի արոտները խառը կերպով ու մեջբնդմեջ հաջորդում են իրար: Ընդհանուր առմամբ Աղմաղանի շղթայի հյուսիսային ծայրը և նրա արելյան լանջերն առավելապես վոչխարաբուններ են: Իսկ արևմտյան լանջերը, չնայած նրանց շատ քսերոֆիլության, ավելի պիտանի յեն տավարի համար, չնորհիլ արժեկավոր ընդելզների և սննդաբար ու լավ արածվող չըրասերի առատության: Յերկու լանջերի համար ընդհանուր թիվը ընդունելով կարելի յետև, վոր ամբողջ Աղմաղանի արոտների 40 տոկոսը վոչխարաբուններ են:

Հատ ոելյեֆի դրանց մոտավոր բաշխումն այսպես կլինի՝ 20% արևմտյան լանջերում, 30% արելյան լանջերում և 70% վերին զարիվեր արօտներում ու գագաթնային բարձունքներում: Միջին բեռնավորումը կարելի յե ընդունել հեկտարին 3—4 հազվագեղ՝ 5 դուրս վոչխար կոմ 0,6—0,7 գլուխ տավար: Ավելի բեռնավորելը վտանգավոր է, վորովհետեւ թեակտե խոտակաղմը լայնորակ է, բայց թերքառատ չէ:

Աղմաղանի վերին լեռնահարթումն և գտնվում Ղանիկ-Գյուլ միճը, վորը միքանի տասնյակ հեկտար տարածություն ունի և շատ խորն է: Կաթնատնտեսական Զոնալ կայանը, վորն ոգտագործում և Աղմաղանի արևմտյան լանջի վրա գտնվող Ելլիջա արշուրը, Հայջրանտեսության առաջ հարց և հարուցել հետախուզությամբ պարզելու, թե այս լճի ջուրը ի՞նչ չափով հնարավոր և ոգտագործել՝ արոտներն ու խորհարքեցը վորով համար:

Այս հարցը շատ կարևոր է, վորովհետեւ վոսոգումն առնվազն կկըրկնապատկի թե՛ արոտների և թե՛ խոտհարքների բերքատվությունը:

Աղմաղանի և Ալպիջայի արոտներին կից խոտհարքներ կան՝ արևմտյան կողմից անհշան, իսկ արելյան կողմից մեծ տարածությամբ:

Հատ Հողմողկոմատի տվյալների, գեպի Աղմաղանն ու Ալպիջա ձգվող խոտհարքների տարածությունը հաշվվում է մոտ 14,000 հեկտար, ըստ վորում այս տարածության 90 տոկոսից ավելին արոտային զանդվածից գեպի արեկելք և ընկած, իսկ վոչ ավելի, քան 10 տոկոսը՝ դեպի արեմուտք:

Աղմաղանի լեռնաշղթայից գեղի արեմուտք խոտհարքները քիչ են և նվազ արդյունավետ: Քիչ տարածությամբ խոտհարքային դանդվածներ կան լեռնաշղթայի հյուսիս արևմտյան ծայրերում: Միքանի հարյուր հեկտար խոտհարք պատկանում է կաթնատնտեսական Զոնալ կայանին՝ Ելլիջա տնտեսությանը: Ընդհատվող շրտով խոտհարքները ձգվում են գեղի հարավ: Կոտայքի շրջանում այժմ մոտ 800 հեկտար խոտհարք կա, իսկ Վեդիի բար գրձանում մոտ 300 հեկտար: Այս խոտհարքները կաղմված են զլիսավորապես տափապանային բուսական խմբակցություններից՝ շաղանակագույն հողերում և թույլ արտահայտված շաղանակագույն սկահողերում: Խոտագիներից գերիշխում են աղրոխոտուկները ու տափաստանային տիմոֆիյելկան: Կա նաև փետրախոտ: Բավականաշաբի և տեղ-տեղ ել շատ ու շատ ընդեղնեններ կան՝ կորնդան, առվույտ, վիկի տեսակներ և յուրահատուկ առվույտ:

Աղմաղանի արևմտյան կողմի խոտհարքների ընդհանուր քանակը չինչեւ 2000—2500 հեկտարով կարելի յե ավելացնել\*):

Այս խոտհարքների արդյունավետությունը մեծ չէ, հեկտարից՝ 1,5—1,6 տոնն: Չոր խոտի վորակը վատ չէ, չնորհիլ ընդեղնենների մեծ քանակիլ\*\*):

\* ) Տես գերհուս Ղանիկ-Գյուլի ըրերն սպասարձելու հարավորություն հարցը:

\*\*) Գետը և նշի սակայն, վոր շատ տեղումներ յեղած տարիներում այս խորհների բ' բրատվությունն ուժեղ և փառ: Այսպիս 1951 թ. ամռան ամիսների սովորականից յերեր անգամ ավելի տեղումներ յեղան: Այդ տարում Ելլիջայի խոռն շարքների բերքառվությունը հասալ հեկտարին 2½ և ավելի տառնի:

Աղմաղանի արևելյան կողմի խոտհարքներն ավելի շատ և ավելի արդյունավետ են։ Դրանք գլխավորապես յերկու տեղում են կենտրոնացված՝ Նոր-Բայազետի ու Մարտունու շրջաններում։ Այս տեղերից խոտհարքներն ավելի բաղմաղան են, ինչպես և բաղմաղան ե դրանց արդյունավետությունը։ Շրջանի հյուսիս-արևելյան մասի խոտհարքները հարուստ են տափաստանային խոտաղիներով՝ մինչև 17% ընդեղեների պարունակությամբ։ Նրանք շատ ավելի արդյունավետ են՝ հեկտարին մինչև  $2\frac{1}{2}$  տոնն։ Այս շրջանում, ինչպես և դեպի հարավ տարածված են նաև այլ տիպի խոտհարքներ, այն ե՝ Սևան թափվող գետակների ափերը բռնված են հարթավայրային խոտհարքներով, վորոնց մեջ դերիշխում են (մինչև 75% և ավելի) խոտաղիներն ու վատթար վորակի ջիլախոտերը, դրանց հետ վոչ այնքան վատ կեր հանդիսացող յեղինջաշյուղախոտը։ Արաք մինչև 3 տոնն բերքատվություն ունեն։

Վերջապես ավելի հարավում՝ Դալբուրադաշ-Բյարիմքենդի լեռնալսից սկսած տարածվում են յենթալույան տիպի խոտհարքներ, զորոնք ունեն ավելի արժեքավոր, լավ ու քնքուշ բարձրալեռ խոտաղիներ և յեղջյուրառվույտ։

Սունձնապես լավ են Գրիձորի խոտհարքները, վորոնք մեկ հեկտարից տալիս են մինչև 3 տոնն չոր խոտ՝ արժեքավոր ընդեղեների ( $20$  տոկ.) և խոտաղիների ( $40-50$  տոկ.) խառնություն։

Քիմիական անալիզը ցույց է տվել, վոր այս խոտհարքները լավագույնն են ամբողջ Մասնում (Գրինձորի չոր խոտի մեջ 18% պրոտեին կա)։ Նոր-Բայազետի շրջանում խոտհարքների ընդհանուր տարածությունը ներկայում պիտի հաշվել մոտ 8,000 հեկտար՝  $2\frac{1}{4}$  տոնն միջին բերքատվությամբ։

Շրջանի ծայր հարավում խոտհարքների մեծ տարածություններ՝ ավելի քան 3500 հեկտար գտնվում են Յանըլի շրջանում և դրանից անմեջակես հյուսիս ընկած վայրերում։ Այստեղ ել նկատվում են խոտհարքների մի քանի տիպեր։ Խոնավ խոտհարքներ կան գետակների ափերն՝ ջիլախոտով ու բոշխով, կամ թե ավելի խոնավ խոտհարքների տիպեր՝ արվեստակոչուկով, սպիտակ աղբախոտով։ Տափաստանային խոտանային տիպեր՝ չայիրով, դաշտավելով ու փետրախոտով, վորոնք բարձրանաչափ արդյունավետ են (ավելի քան  $2\frac{1}{2}$  տոնն), բայց վոչ այնքան լավորակ։ Կան լեռնային յենթալույան արժեքավոր տիպեր, վորոնք լրենց կազմով ու արդյունավետությամբ մոտենում են Նոր-Բայազետի խոտհարքներին։ Վերջիններս այն հիմքն են կազմում, վորի վրա այժմ այստեղ զարդառում ե մեծատափար կաթնատնեսությունը։ Այստեղ ել հեկտարի միջին արդյունավետությունը մոտ 2  $1\frac{1}{4}$  տոնն կարելի յե ընդունել։ Իսկ ինչ վերաբերում ե բուն Այրիջայի շրջանի արոտներին, ապանկատվեալ ունենալով ավելի հարթ ու լույսեցն ու բուսականությունը, կարելի

չե դրանց տակ ավելի բարձր բեռնավորում, քան Աղմաղանում՝ 4—5 վուժամարդ կամ 0,8—1 տալիք։ Այրիջայում վոչխարախոտերն ամբողջ արոտատարածության մոտ 20 տոկոսն են կազմում։

Սրան համապատասխան առաջին կատեգորիայի արոտներն Այրիջայում ընդունվում ե ամբողջ տարածության 7,8 տոկոսը, իսկ Աղմաղանում՝  $1\frac{1}{2}$  տոկոսից վոչ ավելի։

Արածման այն ժամկետները, վոր այժմ գործադրվում են Աղմաղանում ու Այրիջայում—չափաղանց բաղմաղան են։ Արոտների մեծամասնության համար արածման սկզբի ժամկետը՝ հունիսի սկիզբը—չատ ել վաղաժամ չպահի համարել։ Անսպուններին ավելի վաղ արոտը հանելը, վորը մի քանի գյուղերում ընդունված ե, ցանկալի չե։ Հունիսի 10—15-ը, թերեւս, նորմալ ժամկետ կարելի յե ընդունել։ Վորոշ արոտամասերում արոտը զարգարում է ձյունի գալու հետ միասին, մինչդեռ մյուս արոտամասերում արոտը վերջանում է ողոստոսին, վորովհետև խոտն այրվում է։ Միջին ժամկետը պիտի ընդունել սեպտեմբերի սկիզբը կամ հետու։

Այրիջայում ու Աղմաղանում հնարավոր ե հողը ուացիոնալ բարելավման յենթարկել՝ վոցիսելով ու պարարտացնելով։ Աղմաղանում այս կարելի յե կատարել ամբողջ տերիտորիայի մոտ 20—25 տոկոսի, իսկ Այրիջայում՝ 30—35 տոկոսի վրա։ Մնացած տարածության վերաբերմաք ու իստի սահմանափակվել այն սովորական ու հասարակ բարելավումներով ու խնամքի ձեռնարկումներով, վորոնք հիշյած են մյուս զանգվածների վերաբերմաք։

Աղմաղանում խոտհարք դարձնելիք արոտների հնարավոր տարածությունը, պիտի ընդունել արոտների ընդհանուր տարածության մինչև  $15$  տոկոսը, ըստ վորում արևելյան կիսում այս տոկոսը կարելի յե բարձրացնել և հասցնել մինչև  $20-22$  տոկոսի։ Արևելյան մասում այս տոկոսն 8—10%-ից ավելի չե։ Զբային հարցն ամբողջ արոտաղանդվածում, առանձնապես նրա արևմտյան կիսում սուր բնույթ ունի։ Զբի պակաս չատ վայրերում է զդացվում։ Դրա համար ել արհեստական վոռոգման շարցն այստեղ չափաղանց հրատապ բնույթ ե կրում։

## ԳԱՐԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԹՈՒՐԻ

Դարավագյաղի արոտային դանդվածի մեջ հետեւյալ արոտաշրջաններն են մտնում: — 1. Քեյթի-Յանըդի արոտներ, զոր լեռնաշղթայի հյուսիսային, դեպի Սևան նայող լանջն է: 2. Բուն Դարավագյաղի դանդված, գորը նախորդից սահմանորոշվում և լեռնաշղթայի ջրաժան դժով և նրա հարավային լանջերն ե կաղմում: 3. Հարավային Դարավագյաղի, վորն իսկապես որոդրաֆիկ տեսակետով նախորդների հետ վրիվ չափով կապված չե, այլ ընկած և այն լեռնաձյուղի, հյուսիսային լանջերում, վորը Դարավագյաղի վարչական շրջանը բաժանում և Զանդեղուրից:

Դարավագյաղի արոտները բնորոշ են իրենց բարձր դիրքով: Համարյա վոչ մի տեղ 2000 մետրից ներքև չի չնելով, սրանց ստորին սահմանը անդադեղ մինչև 2500 մետր բարձրություն ունի: Արոտային տարածության զգալի մասը 3000 մետրից ավելի բարձր տարածության վրայի գոտինում: Դարավագյաղի արոտների ուղիւնքը խիստ կտրտված ե և հարուստ և զարիվեր լանջերով, քարավներով ու կիրճերով: Շրջանի կլիման խիստ սուր է: Բարձր դիրքը պայմանավորում է խիստ ձմեռ ու սառն ամառ: Ցածր չերմությունից զատ, շրջանի համար բնորոշ ե կլիմայի արտակարգ չորությունը: Դարավագյաղի արոտային շրջանի վերաբերմամբ ողերեկութաբանական տվյալներ չկան: Մոտակա ողերեկութաբանական կայաններից հյուսիսում՝ Բասարդեշարինը տարեկան 324 մմ., իսկ հարավում՝ Աղնաձորինը 380 մմ. տարեկան տեղում են ցույց տալիս: Նայած բուսականությանը, վերևներում ել անզումների քանակը քիչ և ավելանում և սակալ և նույնիսկ ալպյան շրջանում, վորտեղ անշան քանակով ցույն և կուտակվում:

Առ ձորերով կտրտված զարիվեր լանջերը շրջանի հյուսիսային մասում վերջանում են ուղիւնքութապես սուր զարդաթաշարքերով ու կոնուսներով: Իսկ արևելյան մասում վերին և մասամբ ել միջին դոտին ավելի քիչ զարիվեր ուղիւնք ունի և ավելի հարմար և արոտի համար այստեղ կարող ե արածել նաև խոշոր յեղջյուրավոր անասունը:

Զնայած արոտների մեծ մասի չափազանց հատված ուղիւնքին, Դարավագյաղի արոտային շրջանների բուսականությունն իր կողմով ու բնույթով կեր ե մատակարարում բավական մեծ թվով անասունների, վորն և այս արոտները բավական արժեքավոր և դարձնում:

Ճանապարհների բացակայությունն ու հաղորդակցության դժվարու-

թյունը մեծ խոչընդուռ են համշկանում հետաղոտական ու կազմակերպչական աշխատանքների համար Դարավագյաղում, ինչպես և Զանդեղությունը: Այս պատճառով ել Դարավագյաղի արոտների մասին քիչ տեղեկություններ կան: Ստիպված սկսաք և բավականանալ Հողժողկոմատի պաշտոնական տվյալներով և գրագոր աննշան տեղեկություններով:

Քեյթի-Յանըդի պատկերը վորոշ չափով լուսարտանված ե, թեև շրջադիտուրն 1926 թ. եքաղեղիցիայի կողմից:

Քեյթի-Յանըդի արոտային զանդվածը Մարտունու և Բասարգեչարի շրջանի մեջ և մտնում՝ համարյա հավասարաչափ բաժանվելով յերկուակ միջև: Հողժողկոմատի տվյալներով՝ այս արոտներից 14,563 հեկտար Բասարգեչարի և 13409 հեկտար Մարտունու շրջանում ե գտնվում:

Այս յերկու արոտային զանդվածների անհարմար տարածություններն արոտային ամբողջ տարածության 6 տոկոսն են կաղմում: Մնացած ամբողջ տարածությունը յերկրորդ կատեգորիայի արոտ և համարվում, ըստ յերկույթին ուղիւնքի պատճառով, քանի վոր բուսականության մասին յեղած տվյալներն ընդհանուր տամամբ բավական բարենպատ են: Ի նկատի ունենալով ուղիւնքի բնույթն ու բուսականությունը, կարելի յեւ ընդունել, վոր տարածության 60—70 տոկոսը կարելի յե հատկացնել վոչխարաբունների, իսկ մնացած 30—40 տոկոսը՝ խոչոր անասունների արատի:

Քեյթի-Յանըդի արոտների բուսականությունը յենթալոյան արոտների բնույթ ունի, վորն ավելի զարիվեր և հատկապես հարավային դիրքունությունը լանջերում քսերոֆիլ տարբեր և պարունակում: Բուսական կաղմի մեջ մտնում են կերի լավ խոտաղդիներ՝ ուղղվ ցորնուկ, կերերիս ու վոչխարացուղախոտ: Շատ առաջ են ընդեղենները, առանձնապես յերեքուները: Արոտների խոտաղդիների բուսաբանական անաշխատ ցույց է տալիս, վոր 16—18 %-ն ընդեղեններն են կաղմում, և ավելի քան 66 %-ը՝ լավ խոտաղդիներ: Մի քանի վայրերում, հատկապես ավելի զարիվեր ու քարքարու հյուսիսային լանջերում, խոտը վատթարանում է զուրիվեր խարաբարությունների խառնուրդով, առանձնապես շրջանի տրելյան մասում (որինակ՝ Դաշքյանդ գյուղի արոտները):

Նկատի ունենալով լանջերի զգալի մասի զարիվերությունն ու հողաշերտի բարակությունը, Քեյթի-Յանըդի արոտների համար հնարակացների բեռնավորումն նախապես ավելացնել չել կարելի: Մինչև մանրամասն վոր բեռնավորումն նախապես ավելացնել չել կարելի: Մինչև մանրամասն ուսումնասիրություն կատարելը, վոչխարաբունների համար հեկտարին կարելի յե ընդունել 3—4 վոչխար, իսկ խոչոր անասունների արոտների կարելի յե ընդունել 0,7—0,8 տավար: Թերևս բաշոր արոտամասների նկատմամբ ել համար 0,7—0,8 տավար:

Քեյթի-Յանըդի արոտներին ներքենց բավական մեծ տարածությամբ իոտհարքներ են միանում: 1931 թվի տվյալներով Բասարգեչարի շրջա-

Նում մինչև 6000 հեկտար խոտհարք կա, իսկ Մարտունու շրջանում՝ 7800 հեկտար : Նկատի ունենալով, վոր Քասարգեցարի շրջանում խոտհարքների կեսը կենտրոնացած է Մազրայի հարթավայրում, իսկ Մարտունու շրջանում խոտհարքների մոտ 2%-ն Ալրիջայի և Աղմաղանի լանջերին և Համառմ, ուստի Քեյթի-Յանըլին ամժիջականորեն հարող խոտհարքների տարածությունը մոտավորապես 3000 հեկտար կարելի յի բնդունել : Այսուղ, ինչպես նաև ամենուրեք Սևանի ափերին, պետք է տարբերել խոտհարքների յերկու տիպ : Հարթավայրային՝ Սևան թափող գետակների ափերին ընկածները, վոր տեղ-տեղ ճահճային են և մեծ մասամբ ծածկված են բոշխով : Ենոնային՝ բարձունքների նախալեռնային լանջերի խոտհարքներ, վորոնց մեջ կան (որինակ՝ Բասարգեցարի շրջանում) շատ արժեքավոր և Հայաստանի մեջ հաղվագյուտ տիպի խոտհարքային տարածություններ : Սրանց մեջ գերիշտում են մարդաբետնային տիմոֆեեկան :

Այսպիսի խոտհարքներ արձանագրված են, որինակ, Դաշքենդ ու Գյողակբուլաղ գյուղերում : Առանձնապես Եֆֆեկտավոր և այս գյուղերից առաջնի խոտը, վորի մեջ տիմոֆեյեվկան ամբողջ խոտակաղմի 90%-ն և կազմում, ավելի քան մի մետր բարձրությամբ : Կլիմայի չորության պայմաններում այսպիսի խոտհարքների գոյությունը հողային բարենպաստ պայմաններով և բացատրվում : Սևանի ափերում տեղ-տեղ ստորեկրյա ջրերը բավականաչափ բարձր են, ուստի այդ տեղերում այսպիսի բուսականություն չի կարող լինել : Այս խոտհարքները շատ մեծ բերքատվություն ունեն, ավելի քան 5 տոնն հեկտարին : Իհարկե, այս յերեսույթն ամբողջ ըրջանի համար ընդհանուր չել : Մյուս խոտհարքները զգալի չափով պակաս բերքատվություն ունեն, մինչև 3 և ույնիսկ 2 տոնն, բայց և այնպիս այս որինակները կարող են ցույց տալ, թե բարենպաստ պայմաններում ինչպիսի բարձր վորակի ու բերքատվության կարող են հասնել այստեղի խոտհարքները : Տիմոֆեեկայի գերիշտումն այստեղ առանձնապես կարեոր և խոտհունձի առմկետի պայմաններում (հուլիսի վերջեց մինչև ողոստոսի կեսը) : Պետք են չել, վոր այստեղ վորոշ խոտհարքներ վրորդվում են : Խոտհարքների շրջանային միջն բերքատվությունը մենք կարող ենք ընդունել անջրդիների համար 2½-3 տոնն, իսկ վոռողվողների համար՝ 5—6 տոնն :

Բուն Դարալաղյաղի շրջանի արտօները՝ համարյա իրենց ամբողջ յերկարությամբ, բացի հյուսիս-արևմտյան մասից, զառիվեր կտրաված են : Դրանք բոլորը Դարալաղյաղի վարչական շրջանի սահմանների մեջ են մասնում և 54,752 հեկտար տարածություն ունեն, վորեց բուն Դարալաղյաղինը 43,207 և հարավային Դարալաղյաղինը՝ 11,545 հեկտար են : Արոտների շինարարությունն սկսված է 1929 թվին և չի ավարտված : Ըստ յերեսույթին, արոտների կատեգորիաների բաշխելով կատարված են

յենթադրությամբ և այն տպավորությունն ե թողնում, թե նրանք չեն համապատասխանում արոտների խկական վորակին : Հողգողկոմատի տվյալներով բոլոր արոտների մոտ կես մասն առաջին կատեգորիայի տակ ե գցված, իսկ անհարմար արոտներ բոլորովին ցույց չեն տրված : Դարալաղյաղում հետազոտված դյուղերի յերկու յերրորդին վերաբերմամբ հիշատակություններ կան, թե արոտների խոտն ամառը բավականացնում է անասուններին : Արոտները ջրով խիստ անհամաչափ են ապահոված :

Հակառակ Քեյթի-Յանըլի լանջերին, հարավային Դարալաղյաղում յենթադրյան գոտին համատարած չել : Տեղ-տեղ լեռնային քաղցրի բուսականությունը բարձրանում է լեռներն ի վեր՝ հասնելով ալպյան գոտուն : Քոերոփիլ արոտների խոտի մեջ զգալի տեղ և բնում վոչխարի շյուղախոտը և դրա հետ ընդեղնենները՝ վայրի առվույտը, կորնդանն ու մկնամրգենին : Դարալաղյաղի արոտների խոտակաղմի մեջ զգալի չափով ընդեղնենների կազմ (բնորոշ ե, վոր 1926 թվի հետազոտության ժամանակ գանգատներ ելին լավում բոլոր արոտներում տիբապետող տիմպանիտի ժամանակին) : Խոտակաղմի վորակն, ըստ յերեսույթին, արոտների մեծ մասում լավ ե : Նկատի ունենալով և՛ ուշլեֆը և՛ բուսականության բնույթը, պետք և յենթադրել, վոր արոտների ցանկալի բեռնավորումը հեկտարին 3—4 գլուխ վոչխար ե, իսկ բարձր վորակ ունեցող նվազ պարիվիրայրերում՝ 5 գլուխ է : Խոչը անասունների արոտներում բեռնավորումը պետք ե ընդունել 0,7—0,8 մեծատալար :

Բեռնավորումն այսպես փոքր է ընդունվում, վորովհետեւ թեև շրջանի բուսականության արդյունավետության մասին ճշգրիտ տեղեկություններ չկան, բայց կլիմայի չորությունը նկատի ունենալով՝ դժվար թե հնարավոր լինի յենթադրել, թե խոտը շատ կրարձանա և առան կլիմի :

Դարալաղյաղի ամբողջ արոտականդվածի բարձր դիրքն ու կլիմայի չորությունը նկատի առնելով, ցանկալի կարելի յեւ համարել, վոր արոտի ժամանակաշրջանն սկսվի հունիսի սկզբից : Զույնից չուտ ազատվող և քսերոփիլ բուսականություն ունեցող վորոշ արոտամասեր կարող են ապկելի վաղ սկսակործվել : Տվյալներ կան, վոր Դարալաղյաղի վորոշ այստեղ բուսամասներն ապրիլից հունիսի մարտից և ուսույնիսկ մարտից են սկսում ողտագործել : Բայց բուսամասներն ապրիլից և հունիսի մարտից հունիսի առաջային արոտներ հասկանալի յեւ, վոր այսպիսի վայրերը չեն կարող ամառային արոտներ համարվել . զբանք այսպես կոչված գարնանային կամ անցման տիպի առանքներ են :

Դարալաղյաղի արոտների համեմատաբար վոչ մեծ մասը, ըստ յերեսույթին 25 տոկոսը (մոտավորապես) կարելի յեւ փոցիսել ու պարապացնել : Սակայն հողային ծածկի բարակությունն ու լանջերի զարիվիրությունն արոտների մեջ մասում այս միջոցը վտանգավոր են զարձ-

Նում : Այս պատճառով մեծ կարևորություն են ստանում հասարակ ձեռնաբարկումները՝ քարերից ու մոշախոտերից մաքրելը։ Անբավարար հետազոտությունը թույլ չի տալիս վորոշակի ասել, թե ի՞նչ չափով այս տեղ կարելի յե վոռոգում կիրառել, մի բան, վոր շատ տեղին կլինի այս շրջանում։ Այս ուղղությամբ հետազոտությունները շատ ցանկալի յեն։

Դարավագյաղի արոտային շրջանի 54,753 հեկտար տարածությունից միայն 19,997 հեկտարը (մոտ 37 %) տեղական բնակչությունը, իսկ մնացած 34,756 հեկտարն (63 %) Ազգային քոչվորներն են ոգտագործում։

1929 թվի տվյալներով, Դարավագյաղի արոտազանդվածում հետևյալ քանակի անառուն եր արածում։ Տեղական դյուլացիների անառուններ՝ 11,879 գլուխ խոշոր և 66,331 մանր, իսկ քոչվորական՝ 7,725 գլուխ խոշոր և 141,905 գլուխ մանր։ Այս թվերը թույլ են տալիս վորոշել արոտների վաստական բեռնվածությունը, այն եւ խոշոր անառունի վերածում մեկ գյուղի քիչ ավելի քոչվորների արոտներում և 1,3 գլուխ տեղական բնակիչների արոտներում։ Այս բեմականումն առանձնապես շափականց չե, բայց և այնպիս անկասկած մեծ է։

Արոտներին կից խոտաւարքները քիչ են։ Նրանք ընկած են կտոր-կտոր ու գոչ մեծ տարածությամբ։ Հողժողկոմատի 1931 թվի տվյալներով Դարավագյաղում կա ընդամենը 1,373 հեկտար խոտաւարք։

Կտորների բուսականության կազմի մասին տվյալներ չկան։ 1926 թվի երապետիցիոն հետազոտությունները խոտհուննեցից հետո են կտորավել, իսկ զբականության մեջ տվյալներ չկան։ 1926 թվին հետազոտված դյուլերի մեծամատնության խոտհարքները ջրովի ելին։ Խոտհարքների բերքատվության մասին ել կոնկրետ տվյալներ չկան, բայց նկատի ունենալով Բասարեցարի բավականաչափ նման պայմանները, անջրդի խոտհարքների բերքատվությունն այսուեղ կարելի յե ընդունել հեկտարից մինչև 2 տոնն, իսկ ջրաբեները՝ մինչև 4—4½ տոնն։ Շատ քիչ ե արոտների այնպիսի տարածությունը, վորը կարելի յե խոտհարք գարձնել։ Դրանք գլխավորապես հեղեղատներում և հյուսիսային լանջերում են գտնվում։

Խոտհարքի վերածվելիք արոտների ընդհանուր տարածությունն ըստ յերեսութին բոշոր արոտների ընդհանուր տարածության 10 տոկոսից անցնել չի կարող։ Հարավային լանջերը, վորոնց ստորին մասերում լեռնային քերոֆիտների խմբակցություններն են գալիք, համարյա մի-անդամային անդեմք են խոտհարքի համար։

## ԶԱՐԳԵՑԱԲԻԹԻ ԱՐՈՏՆԵՐԸ

Զանգեզուրի արոտային զանգվածները գտնվում են Սիսյանի, Գուգիսի, Ղափանի և Մեղրու վարչական շրջաններում։ Այս արոտները տեղավորված են միքանի լեռնաշղթաների գագաթաշարքերի ու լանջերի վրա։ Այս լեռնաշղթաներն իրար նկատմամբ մոտավորապես զուգահեռ ուղղություն ունեն և ջրաժամն բարձունքներ են հանգիստանում Արաքսի, Բաղրաչյայի ու միքանի այլ վորք գետերի միջև։ Այս զանգվածին միանում են նաև այն արոտները, վորոնք ընկած են Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջին։ Բոլոր այս լեռնաշղթաները չափազանց զառիվեր են, իայն տարածվող հովիտներով կտրտված և լեռնային զանգվածների ու սկսումների բարդ հյուսվածք են ներկայացնում։ Լեռնաշղթաների գագաթները հասնում են Հայտատանի մեջ (Արագածից հետո) առավելադույն բարձրության, այն եւ 3920 մետրի (Ղափուլը)։

Արոտային գոտու ստորին սահմանն այսուեղ մոտ 1500 մետր բարձրության վրա յե գտնվում։

Լեռնաշղթաների բարձրաբերձ լեռները, այլև սելլեֆի կտրտվածությունն ու կլիմայական պայմանների բարդությունը, վորոնք նույնիսկ չաճախ յերկու հարեւան ձորերում սաստիկ տարբերվում են, պայմանավորում են արոտների տիպերի խիստ տարբերություն։ Զանգեզուրը մինչև այժմ չատ քիչ ե ուսումնասիրված և Զանգեզուրի արոտներին վերաբեր վող տեղեկությունները շատ աղքատիկ են։

Զանգեզուրի արոտները բազկացած են հետեւյալ տարանձին արոտաշղաններից։

1. Սիսյանի արոտաշրջան, վորը մտնում է համարնուն վարչական շրջանի մեջ՝ 51,838 հեկտար տարածությամբ։

2. Սալիմարքի արոտաշրջան, վորը նույնպես Սիսյանի շրջանումն է գտնվում, նախորդից հարավ-արևելմուտք իւ Նախիջեանի սահմանի վրա։ Դրա տարածությունը 20,191 հեկտար է։

3. Ղափանի արոտաշրջան, վորը միացնում է Ղափանի և Մեղրու վարչական շրջանների արոտները՝ 42,628 հեկտար տարածությամբ։

4. Գորիսի արոտաշրջան՝ համարնուն վարչական շրջանի սահմաններում։ Այս Սիսյանի արոտների հյուսիս-արևելյան շարունակությունն է 10,129 հեկտար տարածությամբ։

Այսպիսով, Զանգեզուրի արոտային զանգվածների ընդհանուր տարածությունը 124,780 հեկտար յե։

Յեթև նայենք Զանգեղուրի արոտներն ոգտագործողների կազմին, ապա աչքի կղաբնի այն հանդամանքը, վոր այստեղի արոտների մեծագույն առկոսը քոչվորներն են ոգտագործում:

Սիսյանի վարչական շրջանում քոչվորների ոգտագործմանն եւ տրվում 60,580 հեկտար (80%), Գորիսի շրջանում՝ (4,208 հեկտար (41,5%), Ղափանի շրջանում՝ 9,480 հեկտար, (30%) և Մեղրու շրջանում՝ 2694,4 հեկտար (11,5%): Ամբողջ Զանգեղորուրում քոչվորներին տրվող արոտային տարածությունն արոտների ընդհանուր տարածության 61,2%—ն է կազմում: Քոչվորների (Աղբքեջանի) ոգտագործման ամբողջ տարածությունը Զանգեղորուրում 76,963 հեկտար է:

Մնացած արոտները (38,8%) ոգտագործում են Սիսյանի, Գորիսի, Ղափանի և Մեղրու շրջանների մերձակա գյուղերն ու Բաղարչայի խորհրդային տնտեսությունը:

Հակառակ քոչվորների, վորոնք հարյուրավոր կիլոմետր հեռագորությունից անասուն են քըում այստեղ, տեղական գյուղերը կից են արոտներին և անասունն այստեղ միայն մի քանի կիլոմետր հեռավորություն է անցնում:

Սիսյանի արոտագունդվածը, բայց Բաղարչայի խորհրդային արնեսությունից, տեղացիներից միայն մի քանի գյուղեր են ոգտագործում: Այս զանգվածի ամբողջ մնացածը Աղբքեջանի քոչվորներն են ոգտագործում:

Զանգեղորի բոլոր լեռնաշղթաները շատ զատկեր լանջեր ունեն, Սիսյանի շրջանի հյուսիսային մասի բացառությամբ, վորտեղ նվազ զառիվեր լանջերը յերկար տարածության վրա 10° թեքություն ունեն: Դրա համար ել Զանգեղորի արոտներն առավելապես վոչխարարուներ են, ըստ վորում խոչըր անասունի արոտների նկատմամբ աղոնալ դասավորություն ունեն: Այսպես որինակ՝ Սիսյանի շրջանում 2500 մետրից վերև մկնում են խոչըր անասունների արոտները, մինչդեռ գեղի հարավ վոչխարարուներն իջնում են մինչև 1400 մետր: Ամբողջ Զանգեղորուրում վոչխարարությունը կարելի յե հաշվել արոտային տարածության 65—70 տոկոսը:

Դրանցից Ղափանի շրջանում՝ հատկապես նրա արևմտյան մասում վոչխարարուների տոկոսը բարձրանում է մինչև 80%—ի, աստիճանաբար նվազելով և Սիսյանի արոտների հյուսիսային և հյուսիս-արևելյան մասում իջնելով մինչև 30—40%—ի:

Զանգեղորի արոտների բուսականությունը, ինչպես վերևում հիշվեց, շատ բաղմաղան է: Բուսականության գլխավոր տիպերն այստեղ լեռնային քարոզիտներն են, վորոնց բոնած տարածությունը ձգվում է գլխավորապես հարավային լանջերով՝ արոտների ստորին գոտուց մինչև ալպյան գոտին:

Յենթալպյան մարգագետիններն ընդհանուր առմամբ թույլ են ար-

ագահայտված և միապաղաղ դոտի չեն կազմում: Դրանք ավելի լավ են արտահայտված Սիսյանի շրջանի հյուսիսային մասում: Ալպյան բուսականությունն ել միապաղաղ շերտով չի ընկած, այլ ընդհատվող բծեր ե կազմում: Դրանք ավելի ուժեղ արտահայտված են Սիսյանի ու Սալվարդի արոտաշրջաններում: Հյուսիսային լանջների արոտային գոտու ստորին մասում բավական ուժեղ արտահայտված ե բուսականության անտառային բնույթը:

Բուսականության խայտաբղետության հետևանքով արոտների վորակն ել այդ աստիճան բաղմաղան է: Ամենանվազ արժեքավոր են այն արոտները, վորոնք կազմված են լեռնային քսերոֆիտների խմբակցություններից: Ընդեղնենք այստեղ ավելի լավ արածվող տարրերը զանազան մկնամրգենիներն են: Դրանցից մի քանիման անասունը չատ ախորժակով ե ուտում, մինչդեռ մյուսներին բերան չի քցում: Վերջիններս կասկածելի յեն, վորպես անասունների համար լինասակար խոտեր: Անդրկովկասյան մկնամրգենիները քմիտական տեսակետից բոլորովին հետաղոտված չեն: Առանձնապես կասկածելի յեն դրանց բարձր կիսաթուփի և անփուշ տեսակները:

Զանգեղորի անտառային արոտներն ավելի բերքառատ են, քան քսերոֆիտների աղքատիկ արոտները, բայց և այնպես առանձնապես արժեքավոր չեն: Կերի արժեքավոր խոտերով ամենից ավելի հարուստ են լենթալպյան ու արպյան տիպի արոտները, վորոնք ընկած են Սիսյանի շրջանի արևելյան մասում և մասամբ Սալվարդի արոտներում: Այստեղ կա խոտագգա-ընդեղնեների խոտակաղմ՝ բարձրալեռ արժեքավոր խոտագգեներով և առվույների զգալի խառնուրդներով: Սրա համար ել Սիսյանի արոտաշրջանը հարուստ և խոչըր անասունների պաշարներով, քիամամանակ առավել արժեքավոր ենակ յուր ընտիր խոտակաղմով:

Զանգեղորի արոտների բնորոշ գիծը «քարանոցների» կամ «չինդի-ների» առատությունն է: Դրանք մերկ են և միաժամանակ համարյանանցելի՝ թե՛ անասունների և թե՛ մարդկանց համար:

Հայաստանում վո՛չ մի տեղ քարանոցներն այնքան առատ չեն, վորքան Զանգեղորուրում: Միայն «Փարի-Չինդիլ» քարանոցն ավելի քան 1700 հեկտար տեղ ե բռնում: Դրան միանում են մի քանի փոքք քարանոցներ՝ 3000 հեկտար ընդհանուր տարածությամբ: Կան նաև բաղմաթիվ մանր քարանոցներ, վորոնք զգալի տարածություն են կազմում: Դրանց միանում են միապաղաղ լեռկայած ժայռերը, վիթխարի փլվածքներն ու առագատակուության լանջերը: Այս բոլորն, ինչպես լեռնային Զանգեղորի, նույնպես և Դարալաղաղաղի ու լեռների հայտագործությունը կավացած է կովկասյան կլիմավոր լեռնաշղթայի ամենաանառիկ ու դժվարմատչելի ու լեռներին:

Ճանապարհների բացակայությունն ու արահետների վատ պիճակն

անսառունի բավական զգալի տոկոսի գծրախա պատահարների պատճառ և գառնում, վորը Զանգեզուրի շատ վայրերի նկատմամբ նշել է 1929 թվի հշպեղիցիան: Խելչեֆի յուրահատկության ու քարանցների առատության չնորհիվ Զանգեզուրի արոտների միանդամայն անպետք ու անհարժար տարածությունը հասնում է 25,775 հեկտարի (20%): Անզետք ու անհարժար տարածությունների առավելագույն տոկոսը՝ տալիս ե Ղափանը (4%), նվազագույնը՝ Սիսիանը (8,6%):

ՅԵԲԵ ուշագրություն գարձնենք այն հանդամանքի վրա, վոր քոչվորների անսառունների մեջ մանր անուասումն է գերակշռում և զուգադրենք դա այն փաստի հետ, վոր քոչվորները Սիսիանի շրջանի արոտների առավելագույն տոկոսն են (84%) ոգտագործում, վորը մեծագույն չափով հարժար և խոշոր անսառունի համար, ապա պարզ կլինի, թե վո՞րքան արոտների ոգտագործումը վո՞չ ռացիոնալ է և թե վո՞րքան կարիք կա վերաբաշխելու արոտները:

Խոտհարքային տարածություններով Զանգեզուրի շրջանը քիչ ե ապահոված: Հողժողկոմատի 1931 թվի տվյալների համաձայն մշտական խոտհարքների տարածությունն ամբողջ Զանգեզուրում 7,241 հեկտար է, վորից Սիսիանում՝ 2591, Գորիսի շրջանում՝ 2,417 և Ղափանում՝ 2,233 հեկտար: Խոտհարքները մեծ մասամբ անտառային և մասամբ յենթալյան մարգագետնների բնույթ ունեն:

Բարդարչայի շրջանում են գտնվում խոտհարքային լավագույն զանգվածները, վորոնք հարուստ են արժեքավոր խոտազգիներով՝ հատկապես յերեքնուկներով: Խերքատվությունն այստեղ զգալի յէ, տեղ-տեղ 3 տոնն և ավելի՝ հեկտարին: Մնացած խոտհարքները սակավ բերքառատ են՝ 2—2½ տոնն հեկտարին. սրանց չոր խոտն ել վատ վորակի յէ: Երջանի հարավային մասում մանր ու ցրված խոտհարքներ կան միայն:

Արոտների ստորին սահմանի ցածրագիր լինելը Զանգեզուրի արոտները խոտհարք դարձնելու հնարավորությունն ե ընձեռում, բայց բնական խմբակցությունների փոքր բերքատվությունն ու քսերոֆիլությունը առհմանափակում են այս հնարավորությունները: Պոտենցիալ խոտհարքները գլխավորապես հյուսիսային լանջերի անտառային մարդագետներին են կուգագիտում և մոտավոր հաշվով կազմում են Սիսիանի շրջանի արոտների 17—20%-ը: Նույնքան ել կամ քիչ ավելի պակաս տոկոս գրանք կազմում են Սալվարդի և վոչ ավելի քան 10 տոկոս Ղափանի շրջանում: Տեղի չափաղանց զառիվերությունն ու կտրտվածությունը գերարեցնում ե նույնիսկ խոտհարքային այս տարածությունների մեծ մասի շահագործումը՝ վոչ պակաս քան 20—30 տոկոսով:

Միջին ու հարավային Զանգեզուրը ձմեռային կերով ապահովելը վո՞չ մի կերպ չի կարող հիմնվել բնական խոտհարքների վրա, այլ պետք ե հիմնվել միայն ինտերցիանության ու սիլոսի վրա: Այս հանդամանքն իր

անդրադրձումն ե գտնում նաև ներկայումս: Սիսիանի շրջանն իր համար հավային մասում 1929 թվին արգեն 800 հեկտար ցանովի խոտ ուներ և այս տարածությամբ Հայաստանի մեջ առաջն տեղն եր բռնում: Մնացած շրջաններն ել զգալի չափով ցանովի խոտ ունեյին (Մեղրու շրջանը՝ 167, Գորիսինը՝ 121 և Ղափանինը՝ միայն 57 հեկտար): Պետք ե հիշատակել, վոր Զանգեզուրը կերի խոտերի կուլտուրայի հնագույն և ինքնուրույն վայր ե հանդիսանում: Նա կերաբույսերի սերմացու մատակարարող շրջանի գեր կիսաղա Հայաստանի կարեռագույն կուլտուրայի՝ կորնդանի համար:

Զանգեզուրը ներկայումս քոչվորների ամառային կենտրոնացման վայր հանդիսանալով, անկասկած չի կարող արոտային տնտեսություն զարգացնել ըստ իր բնական հնարավորությունների ու տնտեսական պահանջների: Խացիոնալ արտադրային տնտեսության և անասնաբուծության կուլտուրական հաղորդիչը Բազարչայի վերջերս հիմնված խորանական թագավորական պետք ե հանդիսանալ: Հենվելով անասնաբուծական կոյուղին այս կարգությունը անտեսական համար կարող կոմբինատ, վորպինս պետք ե դառնապայմ շրջանը՝ իր բնական ու տնտեսական նախադրյալներին համապատասխան:

Սյս ուղղությամբ ել հենց պիտի ընթանա Զանգեզուրի անասնաբուծական, ուրեմն և արտադրային տնտեսության ուսցիոնալսցումը:

## II. ԶՄԵՐԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐ

Զմերային արոտները Խ. Հայաստանում կենտրոնացած են հանրապետության հարավ-արևետյան մասում, Արաքսի ձախ ափին տարածված հարթավայրում, վորս Արարատյան դաշտ անունով և հայտնի:

Զմերային արոտների զանգվածներն Արարատյան դաշտի հյուսիսային մասում, այդ դաշտը հյուսիսից և մասամբ արևելքից շրջապատող բարձունքների լանջերին են դտնվում: Զմերային արոտների այս ամբողջ շրջանի արևմտյան մասը բունում է Սարդարաբատի արոտային զանգվածը, վորս տարածվում են Արաքս գետից սկսած (հարավում) մինչև Արագածի հարավային նախալեռները (հյուսիսում): Հողգողկոմատի 1931 թ. տվյալների համաձայն, Սարդարաբատի արոտաղանդվածի տարածությունը 92,000 հեկտար է\*): Նա հարթ, հարավից-հյուսիս քիչ թեքությամբ բարձրացող մի դաշտ է, վորս գտնվում է 800-ից մինչև 1300 մետր բարձրության վրա: Այս հարթավայրի հարավային-մերձարաքայան մասը մեծ մասամբ Արաքսի ավաղային ու կողիճային նստվածքներից և բաղկացած և բաց դարչնագույն կեսանապատային հողածածկ ունի, վորս տեղաբար փոխվում և զանազան տիպի աղուտահողերի՝ մինչև անգամ թաց աղուտների, վորոնք, սակայն, համեմատարար քիչ տարածություն են բնում: Այս գոտուց դեպի հյուսիս գորչ հողերի լայն շերտն և զավակ հաղողական աղուտների կղզիներով, վորոնք իրենց հերթին շրջանի հյուսիսային մասում բաց շաղանակագույն հողերով են փոխարինում:

Կիման չոր է, ջերմության սեղոնային խիստ տատանումներով, Շրջանի արևելյան ծայրի (Եջմիածնի) տվյալների համաձայն, տարեկան միջին ջերմությունը տատանվում է 12 աստ. մինչև 13,5 աստ. միջև: Իսկ ողոստոսի միջին ջերմությունը, վորս այստեղ սովորաբար ամենատաք ամիսն է, առանձին տարիներում համար և անցնում է 28 աստիքանից: Հունվարի միջին ջերմությունը յերբեմն՝ 10 աստիճանից ել ցած ելինում, թեև վորոշ տարիներում զերոյից ներքև չի իջնում:

\*.) Ուստի բանենի տարածությունը տարիցտարի փոփոխում են վորոշված առաջնաներն ու գլանալու հետևանքով, և պետական տարածեցի և համայնքական տարիների փոփոխության պատճուռի:

Տեղումների քանակը տատանվում է 160 մմ. մինչև 300 և ավելի մմ. Տիֆեն, սակայն բաղմամյա տարիների միջինը (Եջմիածնի համար) 276 մմ: Տեղումների ամսական մեծությունների տարեկան կորաղիծը յերկու մաքսիմում ունի՝ գարնանային (ապրիլ-մայիս) և աշնանային (հոկտեմբեր-նոյեմբեր), ամսությունն խթատ մինիմումով, բայց վորում հաճախ հուկուողությունուսոս ամիսներում տեղումներ բոլորովին չեն լինում:

Շրջանի հիղբողբաժիկ պայմանները բնորոշվում են հետևյալ գծերով: Շրջանի հարավային—մերձարաքայան մասը կտրտված է բազմաթիվ գետակներով ու առուներով, վորոնք գարնանը բավական առատանը լուր են, բայց ամառը նրանց զգալի մասը ցամաքում է: Առուներից շատերը Արաքսին համապատասխան արևմտյան մասը բարձրաբար արագածի աղային ճահճին ճահճին մերժական մեջ: Տեղական պատահանում են աղի ջուր ունեցող լճակներ և աղուտահողերի թաց տարածություններ: Շրջանի առավել աչքի ընկնող ջրային մերձական Արագածի արևելյան լանջերից հոսող Սև ջուրն և հանդիսանում է Հարթության հյուսիսային մասում ջրի պակասն ավելի զգալի յեւ: Պակայն շրջանի ջրային ուսուրասներն, Արագածի հարավային լանջերից խուր առացազ մի շարք ջրային յերկաններն ու ցրված առանձին վոչ աղի վահկաները յենթադրել են տալիս, վոր ջրամբն այս պաշարների ուսցիոնալ օգտագործման գեղքում զգալի տարածություններ կլոռողեն, ինչ և նվազ և իրագործել մերձագույն ժամանակում:

Սարդարաբատի հարթավայրի բուսականությունը յերկու հիմնական և զանազանատիպ՝ աղուտային ու կիսա-անապատային ֆորմացիաների առբերել վարիանտների յի պատկանում: Հարավային մասում, վոր ավելի հարուստ և աղային ջրերով, —աղուտային բուսականությունը ցաք ու զրիվ կղզիների ձևով փոփած և և բաւլական տարածություն և բնում: Թաց աղուտները (շատ աղուտ հողով) ծածկված են սալիկուսի միապահությունով: Քիչ կամ վոչ աղի ճահճներն ու լճակները ծածկված են բուսականությամբ, վորոնց մեջ իշխող յեղեղն ե: Այսպիսի վայրերի առատ, բարձր ու բերքատատ խառը, ինչպես այնական բուսականությունների վերոհիշյալ թվաքրկումը ցույց է տալիս, վորպես կեր թե՛ կանաչ և թե՛ չորացած վիճակում քիչ ե պիտօնի: Պակայն հնարավոր և այս խորը վորպես սիլոսի նյութ ողտագործել:

Այսպիսի լճակների քիչ աղի յեղբերն այնպիսի բուսականությամբ են ծածկված, վորը բարձրահասակ ու կոչուայողուն խոտակդիներից և բաղմախոտից և կաղմկած: Սարնցից հարկ և հիշել տեղաբար բավական պատահանություն առատ աճող իշխույթը, վոր խոչըր թիւեր և տալիս: Բուսականության մի այլ տիպ բնորոշ է այն բնակավայրերի համար, վորտեղ խոնավության այնքան ել փոփոխական չե, այլ չափավոր, բայց և բավական առ լին: Այսպիսի վայրերի ավելի ցածը բայց աղուտային մարգագետինների բուսականություն վերաբերյալ վորպես աղուտային մարգագետինների բուսականություն են

**Թերոշում:** Այս բուսանականության մեջ հաճախ գերիշխում են այնպիսի ձեռք, վորոնք տալիս են բավական լավ արածվող արոտ, ինչպիսին ե սրբնակ՝ փոլող սեղը, տարածվող յերեքնուկը, վորոշ բարդաշաղիկները, այլև բարձրահասակ նրբատերեւ յեղջերառվույսը:

«Աղուտային մարդագետնի» խմբակցություններով բռնված տարածությունները, սակայն, շատ քիչ են. նրանք ըրջանի ամբողջ տերիտորիայի 2—3 տոկոսից ավելի չեն: Շրջանի գլխավոր ֆոնային բուսական խմբակցությունները կիսանապատային տիպի խմբակցություններն են, վորոնք բնորոշվում են աղջատիկ բուսականությամբ՝ քսերոֆիլ բաղմայններից բաղկացած, վորոնց առանձին տեսակները ցըլված են իրարից քիչ-շատ հեռու: Սրանց միջև յեղած տարածությունները միայն գարնան ու աշնանը ծածկվում են միամյա խոտերի կանաչով, իսկ ամառն իրենցից ներկայացնում են հողի մերկ ու արելց շիկացած մակերես:

Նայած հողային պայմաններին այստեղ կիսանապատային մի քանի տիպի ֆորմացիաներ կան: Առաջին տիպը, վորտիբապետում և ըրջանի գլխավորապես հարավային մասում, տարածված է այն վայրերում վորտեղ աղային հողերն աղային կավերի վրա զարդանում են և աղակավախառն կիսանապատ անունն են կրում: Այս տիպի բուսականության համար առավել բնորոշը շոռանի խմբի բաղմայա բույսերի մշտական ախայությունն է: Թե՛ մեր անմիջական դիտողությունները և թե՛ գրական տվյալները վկայում են, վոր այս բաղմայա շոռանները վոչներում յեղած և զգալի մասով նաև աշնան աճող բույսերի մեջ նույնպես կան բավականաչափ լավ կեր տվողներ, թեպես և դրանք այնքան ել բերքառատ չեն: Դրանք առավելապես խոտապդիկներն են: Անմիջականութեն հարելով աղային-կավային կիսանապատային, և վորոշ չափով փոխարինելով դրան բարձրադիր վայրերում՝ յերկու բավական մեծ զեղի հարավ՝ հարավային մասում (Եղմիածնի ըրջանը) տարածվում է աղաղային կիսանապատային շրջանը: Այդ յուրահատուկ մի տառապան է, վորտեղ հողի և յենթահողի մեջ բավականաչափ հարթային պարունակում: Դրանք առավելապես բաց դարչնադույն ու դարչնագույն հողերի ըրջանների միացման տեղերում են գտնվում: Այս պիտի վայրերում բաղմայա բույսերից ամենաբնորոշ նրբառերեւ հազար բարձրադիր բարձրականներն են, վորը խմբակցության ֆոնն է կազմում: Դրան միանում են շարք բարդաշաղիկներ, այլև շրթնածաղիկներ ու ընդեղեններ (մըկ-նամրդիկներ): Միայն բույսերն այստեղ ավելի փարթամ են զարդանում և շատ են դիմանում: Սրանց մեջ բացի խոտապդիկներից, աչքի յեն ընկած միամյա լնդեղենների բաղմաթիվ տեսակները (մկնամրդիկները,

առվույտները և այլն): Այս միամյանները կերի վատ նույթ չեն տալիս: Այս տիպի բուսականության հիմնական բույսը՝ հաղարթերթիկը չէ քանակով լինելու գեպքում նույնպես հայտնի յե վորպես վոչ վատ ուղիւթեատիքը համեմ: Բայց այս բույսերի վերաբերմամբ տիրապետող յեղած տեղերում անասունը մեծ մասամբ բերան չի գցում զբան:

Այն վայրերում, վորտեղ նույնպիսի պայմաններում հողի թույլ աղիւթյուն ե նկատվում, հաղարթերթիկը փոխարեն հիմնական բույսը հանդիսանում է աղաբյուսերի մի տեսակը, Seiditsia floride, վոր անպետք և իրեւ կեր:

Դրան միանում է յերբեմն լավ արածվող Sa'sola verrucosa-ն, միամյանների մոտավորապես նույնպիսի կոմպլեքսի ընկերակցությամբ:

Նկարագրվող ըրջանի ամբողջ հյուսիսային ու ծայր արևմտյան մասը, սկսած մոտ 1000 մետր բարձրությունից վո՛չ այնքան թե՛ք բարձրացող լանջեր են, վորոնք ծածկված են հարթաբային լեռնատեսակների բարձրաթիվ խոչըր ու մանր կտորուանքներով: Այս կտորուանքները մասամբ ցըլված են հողի յերեսին, մասամբ ել կազմում են հողմահարման հասակեղեր, վորի վրա ձևալորպես են այս ըրջանի համար բնաբռչ գորշ հեղերը: Վերեւում, 1300—1400 մետր բարձրության վրա, վնրինները փոխարինվում են գորշ և բաց շաղանակագույն հողերի կոմպլեքսով: Այսպիսի վայրերը բռնված են քարքարոտ կիսանապատային խիստ բնորոշ և յուրահատուկ խմբակցությամբ, վորն իր մեջ գերակշռող բույսի պատճառով նաև ոչխնդրային կիսանապատ և կոչվում: Այստեղ բուսական խմբակցությունների մեջ իշխողն սպիտակ ոչխնդրն է (յավշան), իր բարձրաթիվ ձևերով, վորոնցից իր վրա ուշաղրություն և զրավում խիստ հոտափետ յերեանյան ոչինդրը:

Այս ամենն առավել բնորոշն է հանդիսանում քարքարոտ կիսանապատի ամբողջ ըրջանի համար և գերիշխում է այլ բուսականության վերաբերմամբ: Հակառակ կիսանապատի նախորդ տիպերին, այս տիպը չափազանց հարուստ է տեսակներով: Բաղմամյաններից այստեղ հիշելու յե՝ հայաստանյան ակնթելիմոնի վշտոտ բարձերը, տիման, յեղիսպակն ու կոխանը. ընդեղեններից մկնամրդեների բաղմաթիվ տեսակներու և խիստ քսերոֆիլ առվույտը, այս բաղմաթիվ տիպի կոճղեղավորները՝ կակաչածե ու զեղեցիկ «թաթարական» շուշանը, վորը վառ կապույտ ծաղիկներ ունի: Բաղմամյա խոտապդիկներից պետք է այստեղ հիշել սանրածե չայիրը և ճմակալող փետրախոտը: Միամյանները, ինչպես խոտապդիկները, նույնպես և ընդեղենները և բաղմամյանները տեսակներով շատ հարուստ են՝ այծակն, զայլուկ, խրտցուկ: Բայց հողի խիստ քարքարության պատճառով սրանք բուսական ընդհանուր ծածկի մեջ նախորդ տիպերի համեմատությամբ նվազ դեր են խաղում:

Եթե փորձենք Սարդարաբատի զանդվածի վերոհիշյալ բուսական

բոլոր խմբակցությունների կերպային համառոտ բնութագիրը տառ, ապա հետևյալ յեղբակացության կհանդիսք Բուսական բոլոր խմբակցությունները ձմեռվա արոտային ժամանակաշրջանում մտնու անասուններին կարող տալ բավական լավորակ, բայց խիստ աղքատիկ կեր : «Աղուտային մարդկաբետնի» տխալի խմբակցությունների բուսականությամբ ավելի հարուստ արոտամասերը միայն կարելի յե խոչըր անասուններին համացնել : Այսպիսի արոտամասերի արտադրականությունը կարելի յե ընդունել հեկտարին 1,2—1,4 տոնն (չոր քաշ)՝ ձմեռային արոտի ամբողջ ժամանակաշրջանում : Ինչ վերաբերում ե բուսականության այլ տիպի արտադրականությանը, ապա նկարազրվող ըրջանում կիսանապատային խմբակցությունների համար դա զգալի չափով պակաս կլինի՝ հեկտարից վո՞չ ավելի քան 0,8—0,9 տոնն (չոր քաշ) : Բայց վորում, ամենաքիչ արտադրականությունը քարքարոտ կիսանապատան ե տալիս : Պետք ե ուշադրության առնել, վոր արոտների արտադրականությունը համեմատար մեծ է լինում արոտային ժամանակաշրջանի սկզբում՝ աշնանը, յերբ քաղմամյաններն արդեն տվել են աշնան ընծյուղներ, իսկ միաժանների զգալի մասը կանաչել ու սկսել է ձմեռային վթիթներ տալ : Զմուն ընթացքում արտադրականությունն ուժեղ չափով ընկնում է, վորովհետեւ արածված պաշտերը ձմունը չի նորոգվում : Գարնանն արդեն խիստ նոսրացած բուսական ծածկը նորից ե աճում և արոտների արտադրականությունը նորից ե ավելանում :

Բուսականությունից վերեւում արդեն մատնանշված են այն տարրերը, վորոնք վորակս կեր ավելի զգալի դեր են խաղում արոտներում : Սակայն զրանցից վոչ մեկն այս արոտներում չի գերիշխում այն չափով, վոր զգալի արժեք տա արոտին : Չոր վայրերի բազմամյա արժեքավոր խոտազդին անդրածն չայլին և, վորը համեմատաբար քիչ է տարածված : Դրա ընկերակիցներից արժեքավոր և վոչխարի չյուղախոտը, վորը նույնպես զգալի դեր չի խաղում այս ըրջանում : Նույնը կարելի յե ասել նաև կժմախոտի մասին, վորը կերպային կասկածելի արժեք ունի, բայց կենորոնական Անդրկովկասում (Արեւելյան Վրաստանում) տեղատեղ ձմեռային արոտներում մինակ կերն է : Միամյա խոտազդիները, վորոնք մեծ մասմբ աշխանից են կանաչում, իրենց թարմ կանաչով վորու չափով լրացնում են բազմամյա բույսերի սպակասը : Բաղմամյա ընդեղեններից առավել արժեների, չատ լավ դիմանում ե արածման ու արորման և ամբողջ տարին նորից շատ լավ բարձրանում է : Քիմիական անալիզները ցույց են տալիս, վոր քսերոֆիլ առվույն այնքան ել անդամաբար չե (7,8% հում պրոտեին և պարունակում) : Ակնամբդեններն զգալի չափով ավելի քիչ են տարածված : Քիչ ավելի խոնավության պայմաններում զարգացող ուզուա-

փուշն ու քաղցրաբիանը քիչ արածվող կեր են : Միամյա ընդեղենները՝ վլսավորապես մանր գեղնածաղիկ առվույտաները և ուրիշ տեսակներն աշնան ու դարնանը միամյա խոտազդիններին վատ ոժանդակիչ չի չեն հանդիսանում : Նկարազրվող շրջանի բուսականության համար հիմնական ու տիպիք բազմամյաներից բարձմենիկն ու զուանները քիչ քանակով ու վորպես «համեմունք» են արածվում : Դրանք այսպիսի դեր միայն աշնանը կարող են խաղալ, վորովհետեւ գարնանը նրանք ուշ են բարձրանում և նրանց բողբօնները նախորդ տարվա ճյուղերի կարծր ժամացըրդներով շատ լավ պաշտպանված են :

Պետք ե նաև կանգ առնել Հայաստանի ձմեռային արոտների մի քանի մնասակար բույսերի վրա : Դրանց չարքում ամենից առաջ պետք է գասլին իշակաթնուկները : Սրանց գարնանը շուտ աճող ու գայթակղեցուցիչ թարմ ընձյուղները թունավորման պատճառ կարող են զառնալ, Զմեռային արոտներում անասունների թունավորման մասին շատ գանգամներ են լոլում (առանձնապես վտանգավոր ե համարվում Այդը լճի լրջանը) : Այդպիսի դեպքեր կարող են պատահել նաև միամյա առվույտներով պարուվ առատ վայրերում, վորտեղ առավոտյան ցողով ծածկված խոռոշ արածելով առաջանակ կարող ե սատկել տիմպանիտից :

Աշնանը թունավորման պատճառ կարող են զառնալ վոյնախոտի պաղատու ճյուղերը : Սրանց հին ճյուղերի վրա աճած մատղաշ ծիլերը յերեմն անասուններին հրապուրում են : Քիմիական բաղադրության և կենդանու որդանիղմի վրա թողած արդեցության տեսակեալից բարորովին չեն ուսումնասիրված տեղական մկնամրգենները : Յեթե նկատի ունենանք, վոր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հեռավոր արևմուտքի կիսանապատային նման արոտներում միքանի ընդեղներ, այս թվում նաև մկնամրգենները, չափազանց թունավոր են, ապա մեղնում ել դրանց կերպային արժանիքի վրա սիրտի կասկածել, մինչեւ վոր պարզվի դրանց անլանասակարության աստիճանը :

Բուսականության վերոհիշյալ բնութաղբումից կարեւի յե հետեւնել, վոր Սարդարաբատի ձմեռային արոտներն իրենց այժմյան վիճակում համարյա ամբողջովին պիտանի յեն միմիայն մանր անասունների համար : Խոչըր անասուն կարելի յե արածացնել դրանց ամենահարավային մասում և տեղատեղ լճակների շուրջն ընկած փոքրիկ կտորներում, վորուեղ աղուտային մարդագետների խմբակցություններն են տարածված : Մակայն, ինչպես վերեւում հիշած ե, այս տարածությունը չնչին է : Սարդարաբատի ձմեռային արոտները բացառապես վոչխարիների համար պիտանի լինելու հանգամանքը պայմանավորվում է մի կողմից բուսականության կարմու (մեծատավարն այստեղի բույսերը լավ չի ուտում, իսկ վոչխարի ընդհակառակը) և մյուս կողմից բուսականության ցածր բերքատվությամբ, պակաս տերևախտությամբ ու գետնատարածու-

**Թյամբ:** Այն բոլոր բույսերը, վորոնք վերևում վորպես վոչխարների կողմից լավ արածվող բույսեր հիշատակվեցին, մեր դիտողությունների հիման վրա, մեծատավարը վատ և արածում: Այս բոլոր հանգամանքները ներկայումս (նաև ապագայում) թույլ չեն տալիս Սարդարաբատի տափաստանը քիչ թե չատ զդալի չափով ողտագործել մեծատավարը համար:

Սարդարաբատի արոտային զանգվածից դեպի արևելք ձմեռային արոտների բնական մեծ տարածություններ են գտնվում Աշտարակի առապարներում՝ Աշտարակի ու Յերեանի միջև, նաև Յերեան—Զուլֆա յերկաթուղագծի արևելյան նախալեռներում, վորոնք աստիճանաբար ձգվելով՝ դեպի Աղմաղանի և Այրիջայի լեռնաշղթաներն են բարձրանում: Ձմեռային արոտային տարածություններն այստեղ մասմբ նաև հարթ տեղերում են գտնվում: Այս արոտների միջին մասը լեռնաշղթաներից ճյուղավորվող և դուրս ընկած քարքարոտ լանջերն են բռնում:

Ձմեռային այս արոտների տերիոտը հայտնի ստորին մասն իշնում ե ժիշտ 850—900 մետր բարձրության, իսկ վերին մասերը հասնում են 1500—1550 մետրի: Գետերի հովիտներում գտնվող ջրարբի հողատեսքերի հետ մեջնդմեջ ընկնելով այս արոտները միքանի առանձին մասերի յեն բաժանվում: Պետարոտների Փոնդի մեջ այստեղ մտնում են հինգ այստիսի արոտամասեր, վորոնք հայտնի յեն «ղուեր» կամ առապարներ ընդհանուր անունով: Այս բոլոր արոտամասերի ընդհանուր տարածությունը (Արագդանի արոտների հետ միասին) 77·100 հեկտար է (1931 թվին): Առապարները գտնվում են Աշտարակի (6,6 հազ. հեկ.), Վաղարշապատի (16 հազ. հեկտ.), Ղամարլուի (17,5 հազ. հեկտ.) և Վեդի բասարի (37 հազ. հեկտ.) շրջաններում:

Սարդարաբատի զանգվածի ստորին մասը գտնվում է մերձարաքսյան բաց-գորշագույն հողերի գոտում, դեպի արևելք հողերը դառնում են գորշ, ապա բաց շագանակագույն: Նախալեռների լանջերում գտնվող առապարների մեծ մասը չափազանց քարքարոտ է: Բուսականությունը, նայած մակերևույթի բարձրությանը, նույն է, ինչ Սարդարաբատի զանգվածում, այն տարբերությամբ միայն, վորության հետ միանանալու թեքության պատճառով գոտիներն այստեղ իրար ավելի մոտ են գտնվում և տեղ-տեղ խառնվում են իրար:

Առապարների ամենահյուսային մասն իր բուսականությամբ Սարդարապատի հարթավայրի արևելյան մասն է հիշեցնում, այն ե՛ բուսականության տիպը կավային և մասմբ ավաղային-կիսանապատային է: Միջին արոտամասերը քարքարոտ են և մեծ մասմբ քարքարոտ կիսանապատի բուսականության տիպ ունեն՝ ոշինդրի գերակշռությամբ: Առապարների (ղուերի) վերին զանգվածում բուսական ծածկի մեջ նկատելի յեն լեռային քսերոֆիտների մասնակցությունը՝ յուրահա-

տուկ մկնամրդենիներով և դրանց համար բնորոշ բուսական տարրերով: Այլև նկատելի յեն տափաստանային խմբակցությունների մասնակցությունը, վորոնք ունեն խոտագղիների (վոչխարի շյուղախոտ, յերբեմն փետրախոտի հետ) և բազմախոտ տափաստանի տիպ: Հարավային (Արագդայանի) արոտամասերն Արաքսին մոտիկ մասերում ավելի խոնավասեր աղուտային մարգագետնի և աղային ջուր ունեցող ճահճների տիպի բուսականություն ունեն:

Ինչպես հողի ու բուսականության, նույնպես և կերային արժեքի ողագործման կարգի նկատմամբ առապարներն ու Սարդարաբատը նման են իրար և այժմյան վիճակում դրանք կարող են եքստենսիվ կերպով ոգտագործվել միայն վորպես վոչխարաբոտներ (Արագդայանի արոտամասի 5—8 տոկոսը վորոշ չափով վորպես մեծ տափարի արոտ կարող և ծառայել): Վոչխարաբոտների բեռնավորումը պետք է ընդունել կարող և ծառայել): Վոչխարաբոտների բեռնավորումը պետք է ընդունել հեկտարին վոչ ավելի, քան 2 գլուխ, միայն ավելի բերքառատ ու հաւաքարին վոչ ավելի, քան 2 գլուխ, միայն ավելի բերքառատ ու հաւաքարին վոչ ավելի, քան 1—1½ գլուխ վոչխար արածացնելն անհնարին է: Առապարների վերին մասերի վորոշ չափով ավելի լավ բուսականությունը տափաստանային խոտակաղմն է (խոտազգիներից վոչխարի շյուղախոտն ու չայիրը, ընդեղնեներից կորնդանները և տեղ-տեղ առատ վիկերը), վորոնի ավելի բարենպաստ պայմաններ և ստեղծում արոտի համար, վորը վորոնի ավելի բարենպաստ պայմաններ և ստեղծում արոտի համար, վորը սակայն տեղի զարիվերությանն ու քարքարոտությանը զուգընթաց սակայն տեղի զարիվերությանը և: Այս բոլոր հանգամանքները, այլև այն, վոր բուսականությունն աճում է գարնանն ու աշնանը և կանդ է առնում կամ բոլորովին թյունն աճում է գարնանն ու աշնանը, թույլ չեն տալիս ավելացնելու բեռնավորման բացակայում և ձմռանը, թույլ չեն տալիս ավելացնելու բեռնավորման նորման, առանց լուսադի յենթարկելու թե՛ անասունին և թե՛ բուսականությանը:



Մտնելով ձմեռային արոտալանգվածների այն շրջանի մեջ, վորը ժոտիկ ապաղայում տեխնիկական կուլտուրաների շրջան պիտի դառնաւ և վորի զգալի մասը պետք է վոռողի առապարների (Ղուերի) ու Մեծ Սարդարապատի վիթխարի շրանցքների սիստեմներով, պետք է ասենք, վոր ժոտիկ ապաղայում այս տարածությունները վորպես արոտ այլև կորցնելու յեն իրենց նշանակությունը: Այստեղ վորպես կերային բազա անասնապահության համար գլխավոր դեր կիսաղան ցանովի խոտերն ու սիլոսային կուլտուրաները, թե՛ վոռողվող մասերում (իհարկ և ջրի աննշան գործածության և տեխնիկական կուլտուրաների հետ չմրցելու պայմանով), և թե՛ անջրդի մասերում: Դեմտյին կուլտուրաների ստեղծամբն այս շրջանի կարեռագույն խոդիրն է: Այս ուղղությամբ զդալի

զեր պետք ե իսպան յերաշտակալ միամյա կերաբույսերը (մողարք, ժամամբ սուզանի խոտը) : և բաղմամյա կերաբույսեր (սանրածե չայիբը, տուլույտի չվեղական և այլ յերաշտասեր տեսակները) այլև մեղրալուտառը (իշառվույտը) : Վերջինս կարող ե նշանակություն ունենալ նաև բնական արոտները բարելավելու համար, վորպես կերային մասսան ավելացնող և հողային պայմանները բարելավող միջոց : Ինչպես հայտնի յե, մեղրալուտասը հողը քաղցրացնելու հատկություն ունի : Վերջինս լավ հայտնի յե Ամերիկայում և պետք ե փորձնական սոտւգման յենթարկվի նաև մեր պայմաններում : Յեթե ստուգումը զրական արդյունքներ տա, ապա մեղրալուտասը մեղ համար ամենաարժեքավոր բույսը կդառնա :

Հողը փոցինելու միջոցով ձմեռային արոտները բարելավելու մասին, իհարկե, խոսք լինել չկարող : Համեմատաբար սակայ քարքարոս վայրերում կարելի յե արոտները բարելավել՝ քարերը հավաքելով, Բայց այն արոտներում, վորտեղ քարքարոտությունը տարածության 50 առկոսից գերազանցում ե և վորտեղ արոտի մակերեսի կեսից ավելին լեռնային տեսակների խոշոր կտորներով ե ծածկված, —իսկ այդպիսի տարածությունները շատ կան, —այդպիսի վայրերում այս միջոցի կիրառումն ել անհար ե : Կարելի յե բավականաչափ վորոշակի ասել, վոր այժմ և մոտիկ ապագայում վորպես ձմեռային արոտ մնացող տարածությունները բարելավելու լավագույն և ամենաշահավետ միջոցը յերաշտակալ խոտերի լրացուցիչ ցանքն ե : Վերջիններս խոտաղիներին և ընդուներին, այլև կիսանապատային բաղմախոտի լավագույն տարրերին են պատկանում : Այստեղ պետք ե ուշադրություն դարձնել նաև ուրիշ ըրջաններում չտարածվող այնպիսի բույսերի վրա, վորպիսին արվանտակն ե, վորին վորպես արոտաբույսի շատ մեծ արժեք, ե տրվում Ամերիկայի չոր ըրջաններում : Պետք ե ուշադրություն դարձնել նաև մի շարք աղաքույսերի վրա, վորոնք կուլտուրական կերախոտերի շարքում նույնպես քաղաքացիական իրավունք են նվաճել Ամերիկայում :

## ՑԱՆԿ

ՆԵՐԿԱ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՐԻՆՆԵՐԻ  
ՅԵՎ ՆԿԱՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆՍՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ  
ԳԼԻԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ

ԱՆՑԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ	ՈՈՒՍԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ	ԼԱՏԻՆԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ	ԱՄՓՈՋՐԸ, ԹՀ ՃԱԿԱՊՅՐԸ ԱՆ- ՐՈՌՆԵՐՈՒԾ	ԲՈւյսերի կե- րային հատկու- թյունը
Ականթիլիսոն	Ежовая трава	Acantholi- mon Armenia- num	Զեռային ա- րոտ երուժ վող խոտ	Փշոտ, չուտ- ական փող խոտ
Աղվիսապո- ջուկ	Лисохвост черный	Alopecurus ventricosus Pers.	Լեռնային խոտհարքնե- րուժ և արոտ ներուժ	Արժեքավոր բույս
Ալձակն	Козья пше- ница	Aegilops	Զառային ա- րոտներուժ	Նվազ բերքա- տուած միամյա- բույս
Անդու	Чемерици	Yeratrum Sobolianum Bernh.	Լեռնային խոտհարքնե- րուժ և ա- րոտներուժ	Խիստ թունե- վոր խոտ
Ալցորյո	Люцерна	Medicago L.		
Ալցորյո գեղ- նածողիկ		Medicago ti- gida (L.) Desr.	Զմեռային ա- րոտներուժ	Միամյա բույս զարդանր տալիս և լավ բայց վոչ ա- ռատ կեր
Ալցորյո քսե- րոֆիլ կա- պուրու		Medicago sativa var. parviflora L.	Զմեռային և հազվագիտ ամպուլին աշոտներուժ	Արոտային արժեքավոր կեր
Արնախոտ	Красного- ловка меди- цинская	Sanguisorba officinalis L	Լեռնային ա- րոտներուժ	Նվազ արժե- քավոր կեր
Արլանտատակ	Собачий зуб (свинорой)	Cynodon Dac- tylon (L.) Pers.	Զմեռային ա- րոտներուժ	Արոտային արժեքավոր բույս
Բարձելլան յերեքնուկ	Клевер борд зиловский	Trifolium Bordzilows- kyi Grossh	Լեռնային խորհարքնե- րուժ և արոտ ներուժ	Լավ խոտ
Բարդածա- ղիկ	Девясил	Inula cordata Boiss.	Լեռնատա- փաստանա- յին արոտ- ներուժ	Կասկածելի արժեքավոր

ԲԵՐ	Борец, Аконит	Aconitum orientale Mill.	Լեռնատափաստանացին որունելում	Թունավոր խոտ	ՅԵՂԻՍԱՎԱԿ	Шалфей	Salvia L.	Զմեռային և ամառային խոտհարքներում ու ա- րոտներում:	Վատ ուտվող խոտ
ԲՈՂԻ	Осока степ- ная	Carex humilis Leysser	Լեռնատափաստանացին արոտներում	Առոտային արժեքավոր բույս	ՅԵՐԵՔՆՈՒԿ	Клевер	Trifolium L.	Լեռնային խոտհարքներում և արոտ- ներում:	Արժեքավոր խոտ
ԳԱՋՄԱՐՄԱՅ	Манжетка	Alchimilla L.	Լեռնալին արոտներում	Մեծ մասամբ փատ և ուտ- վում	ՅԵՐԵՔՆՈՒԿ	»	T. ambiguum M. B.	Լեռնային խոտհարքներում և արոտ- ներում	«
ԿԵՐՈՒԿ	Заячий (мы- шиний) яч- мень	Hordeum murinum L.	Զմբույսին արոտներում	Գարնառ նամակն լավ կեր	ՅԵՐԵՔՆՈՒԿ	»	T. fragiferum B.	»	»
Դանтония	Danthonia colycina (Vill.) Rchb.	Խոտհարքնե- րում (կոռում)	Սուցանկալի փոփ խակ, կարելի լիով- տագորել ու պ- լուսի համար	Ֆախ կամ հո- վանոցավոր	Բօրշեան	Heracleum L.	Խոտհարքնե- րում	Սիլոսային	
Դանтония	Danthonia colycina (Vill.) Rchb.	Խոտհարքնե- րում (կոռում)	Սուցանկալի փոփ խակ, կարելի լիով- տագորել ու պ- լուսի համար	Բակաթնուկ	Մոլочай	Euphorbia L.	Ամենուրեք խոտհարքնե- րում և արոտ- ներում	Թունավոր խոտ	
Պաշտոնվել ալպիան	Мятлик аль- пийский	Poa alpina L.	Լեռնալին ա- րոտներում	Լավագույն խոտերից	Իշապովուտ	Донник	Melilotus Juss.	Ամառային և ձմեռային խոտհարքնե- րում ու արոտ- ներում	Խոտհարքա- յին և սիլոսա- յին արժեքա- վոր խոտ
Պաշտամոս	Полевица обыкн.	Agrostis vulgaris With.	Լեռնալին խոտհարքնե- րում և արոտ- ներում	Միջակ հատ- կության խոտ	Խատուտիկ	Одуванчик	Taraxacum Boehm.	Ամառային արոտներում	Արժեքավոր խոտ
Պաշտամոս	Мятлик лу- ковой	Poa pratensis L.	Լեռնալին խոտհարքնե- րում և արոտ- ներում	Լավ խոտ	Խրտցուկ	Костер белый	Bromus albidus M. B.	Զմեռային ա- րոտներում:	Բերքառատ և լավ խոտ:
Յեղան լեզու	Подорожник	Plantago saxatilis M. B.	Լեռնալին խոտհարքնե- րում և արոտ- ներում	Խոտհարքա- յին արժեքա- վոր խոտ	Կաստրոն	Буквица крупноцвет- ная	Betonica grandiflora W.	Լեռնային խոտհարքնե- րում ու արոտ- ներում	Վատ ուտվող խոտ
Յեղեղնակոտ	Вейник гор- ный	Calamagrostis Roth.	Լեռնալին արոտներում	Միջակ հատ- կության խոտ	Կարիս	Тлин обыкно- венный	Carum Carvi L.	Լեռնային արոտներում ու խոտհարք- ներում	Արժեքավոր խոտ
Յեղիսակո- տուտ	Лядвенец	Lotus ciatiatus Koch.	Զմբույսին և ամառային խոտհարքնե- րում ու ա- րոտներում	Արժեքավոր խոտ	Կելերիա	Koeleria caucasica Dom.	Լեռնային ա- րոտներում ու խոտհարքնե- րում	Նվազ արժե- քավոր խոտ	
					Կծմախոտ	Бородач	Andropogon Ischaemum L.	Զմեռային ա- րոտներում	Բավական լավ ուտվող խոտ

Կոխիա	Kochia prostrata Schrad.	Չմեռային ա- րոտներում	—
Էսпарցет	Onobrychis L.	Լեռային ա- րոտներում ու խոտհարքնե- րում	Արժեքավոր խոտ
Տысячелист- ник	Achillea L.	Ամենուրեք	—
Կոկոльчик скученный	Campanula glomerata L.	Լեռային խոտհարքնե- րում	Նվազ արժե- քավոր խոտ
Զելենка, ло- шадиный хвост	Anabasis aphylla L.	Չմեռային խոտհարքնե- րում	Շատ կասկա- ծելի իւ վոր- պես թունա- վոր խոտ
Щавель	Rumex L.	Լեռային մարգագետ- ներում	Անարժեք խոտ:
Безвремен- ник	Colchicum szovitsii F. et M.	Լեռային խոտհարքնե- րում	Խիստ թունա- վոր խոտ
Луговик	Deschampsia caespitosa (L.) P. B.	Լեռային խոտհարքնե- րում	Նվազ արժե- քավոր խոտ
Ячмень фио- летовый	Hordeum violaceum Boiss et Huet.	Լեռային ա- րոտներում	Վատ ուտվող խոտ
Кадило	Poterium sanguisorbad	Լեռային խոտհարքնե- րում	Վատ ուտվող խոտ
Ежеголовник	Sparganium ramosum Huds	Խոնավ խոտ- հարքներում	Անցանկալի խոտ
Մեղրալու- տու (աճու ի շառվուտ)			
Գերань кро- вавый	Geranium sauguineum L.	Լեռային խոտհարքնե- րում	Անարժեք խոտ

Մկնասխո- րուկ	Мышиный чеснок (че- ремша)	Allium victori- riale L.	Լեռային ա- րոտներում	Անարժեք խոտ (կաթը փչացնում է)
Շլուղախոտ	Օвсяница	Festuca L.		
Շլուղախոտ	Օвсяница овечья	Festuca ovi- na L.	Չմեռային և ամառային ա- րոտներում	Արժեքավոր խոտ
Շլուղախոտ	»	Festuca va- ria Haenke.	Լեռային իւ խոտհարքնե- րում ու ա- րոտներում	Վատ ուտվող խոտ
Շնասխոր	Птицемлеч- ник	Ornithoga- lum L.	Լեռային ա- րոտներում	Անցանկալի խոտ
Շուշան թա- թարական	Ixiolirion ta- taricum (Pall) Rgl.	Չմեռային ա- րոտներում	Չուտվող խոտ	
Շոռան	Salsola L.	Չմեռային ա- րոտներում	Լավ ուտվող խոտ	
Շիթածաղիկ	Կотовник	Nepeta L.	Լեռային ա- րոտներում ու խոտհարքնե- րում	Վատ ուտվող խոտ
Ուղտափուշ	Վерблюжья трава.	Alhagi came- lorum Fisch.	Չմեռային ա- րոտներում	Վատ ուտվող, սակալն սիլո- սի համար արժեքավոր խոտ
Ուզոց	Тимьян, бого- родская тра- ва	Thymus L.	Չմեռային ու ամռային ա- րոտներում	Վատ ուտվող խոտ, սակալն քիչ քանակու- թամբ ցան- կալի իւ:
Սալիկուս, չա- գան	Солянка	Salicornia her- bacea L.	Չմեռային ա- րոտներում	Վատ ուտվող խոտ
Սեղ փռվող	Aeluropis lit- toralis (go- nan.) parl.	Չմեռային ա- րոտներում	Արժեքավոր խոտ	
Սխտոր վայրի (աճու մկնասխ- րուկ)				

<b>Մնձախոտ</b>	Скорzonера	Scorsnera L.	Ամառային, մասամբ և ձմեռային ա- րոտներում	Անարժեք խոտ
<b>Սուտ-սեղի</b>	Триострен- ник	Triglochin L.	Լեռնային խոտհարքնե- րում	Վնասակար խոտ
<b>Վարդակակաչ</b>	Анемона	Anemone narcissi flora	Լեռնային խոտհարքնե- րում և արոտ- ներում	Թունավոր խոտ
<b>Վիկ, արտիճ</b>	Вика	Vicia L.	»	Արժեքավոր թունավոր
<b>Վողախոտ</b>	Шпорник	Delphinium L.	»	Թունավոր
<b>Տեմիփելիկաշ (տես ուղ)</b>	Тимофеевка луговая	Phleum pra- tense L.	Լեռնային խոտհարքնե- րում	Արժեքավոր խոտ
<b>Ցորնուկ</b>	Костер	Bromus varie- gatus M. B.	Լեռնային խոտհարքնե- րում ու արոտ- ներում	Արժեքավոր խոտ
<b>Փետրախոտ չճմակալող</b>	Ковыль	Stipa L.	Տափաստա- նային խոտ- հարքներում, մասամբ ձեռ- ուային արոտ- ներում	Վատ ուտվող խոտ
<b>Փուշ</b>	Златоувет- ник	Asphodeline Rchb.	Տափաստա- նային արոտ- ներում	Չուտվող խոտ
<b>Քրիուկ</b>	Лабазник	Filipendula hexapetala gilib.	Լեռնային ու տափաստանա- յին խոտ-արք- ներում	Նվազ արժեք- ավոր խոտ
<b>Քաղցրաբի- նա</b>	Солодковый корень	Glycyrrhiza glabra L.	Զմեռային ա- րոտներում և տափաստա- նային խոտ- հարքներում	Վատ ուտվող խոտ (սիլո- սալին)
<b>Ոչինոր Ունդր Յերե- վանյան</b>	Полынь П. Эриванс- кая	Artemisia L. Eritranen sis	Զմեռային ա- րոտներում	Լավ կանոն կեր



Medicago Sativa



Bromus erectus



Vicia Sativa



*Vicia villosa*




*Agropyrum cristatum*



*Alopecurus pratensis L.*



Latus Corniculatus



Festuca Chinensis



Trifolium Pratense L.



Poa Trivialis L.



Cynodon Dactylon G.



Trifolium Pratense

90




Vicia cracca



Agropyrum repens G.



Anthoxanthum odoratum




Koeleria cristata G.

91



Festuca Pratensis (elatior)



Bromus inermis



Nardus stricta G.



Andropogon Ischaemum G.



Phleum Pratense



Trifolium Hybridum L.



Agrostis Alba L.



Arrhenatherum Elatius  
M. et K.



Dactylis Glomerata L.



94

Melilotus officinalis



Symphytum L.



Medicago temicydi

95



Poa pratensis L.



Onobrychis sativa



Տ Ա Ր Տ Ե Հ


ԽՈՐԴՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՈՏՆԵՐԻ ՈՒ ԽՈՏՑԱՐՓՆԵՐԻ



ՀՀ Ազգային գրադարան



NL0295514



18 575

5.

с 2 п.

Проф Н. Троицкий  
Застбища и сенокосы Арм.  
льхозгиз Эревань 1933 г.